



6 APR 2013

3655

# I. ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ

Սակած 1903 թ. ժողովրդական տնտեսության վերելքը Ռուսաստանում փոխաբերվում է անկումով: Ներքին շուկան, հատկապես թեթև ինդուստրիայի համար, նկատելի չափով կրճատվեց: Պատերազմի հետևանքով սրվեց նաև Ֆինանսական կրիզիսը: Պետական պարտքը առ 1 հունվար 1904 թվի հասավ 6,63 միլիարդ ռուբլու: Ցարական կառավարությունը միջոցների կարիք զգալով՝ ուժգնորեն սեղմում է հարկային պրեսը: 1905 թվի գարնան Ֆինանսների մինիստրությունը գործիչները ապարդյուն փորձում են միջազգային դրամական շուկայում փոխառություն փնտնել: այս անգամ արտասահմանյան բանկիրները չվստահեցին այն կառավարության, վորն ամբողջ աշխարհի առաջ հեռավոր-արևելյան ճակատի անվերջ անհաջողություններով (ռուս-յապոնական պատերազմում) վարկաբեկեց իր պրեստիժը:

Տնտեսական դեպրեսիան (անկումը) ուժեղացրեց գործազրկությունը: Դրությունը եւ ավելի վատթարացավ շնորհիվ 1904 թ. և հատկապես 1905 թ. վատ բերքի. 25 նահանգներում 150 գավառներ, ընդհանուր առմամբ, խիստ տուժեցին անբերրիությունից: Սևահող շրջանը, փոխանակ 14 միլ. տոննա միջին նորմայի, 1905 թ. տվեց միայն 10 միլ. տոննա ցորեն: Նմանորինակ թվեր կարելի չէ մեջ բերել գարնանացանի և աշնանացանի հավաքման մասին և այլն:

«Ցարին պատկանում է վերջին տասնամյակի ամենաանհաջող տարիներին» — գրում էյին այն ժամանակ մամուլում:



59673-66

Մթերքների դները, հատկապես սկսած 1905 թ. ամառ-վանից, շնորհիվ հացահատիկների ու խոտաբույսերի անբերրիության, խիստ բարձրանում են: Միաժամանակ ընկնում է ունակ աշխատավարձը: Առանց այն ել կիսաճորտատիրական տնտեսության պայմաններում բանվորների կյանքի չափազանց ցածր մակարդակը սկսում է վար իջնել՝ առաջ բերելով բանվորական կվարտալներում գոյությունը թյուններ ցարական ուժերից: Հուլիսին աստիճանաբար տարածվում է նաև գյուղերում և ընդգրկում քաղաքի ու գյուղի մանր բուրժուական լայն խավերը:

Բանվորական  
որը

Հատկապես ծանր էր, իհարկե, բանվորների և գյուղացիական չքավորության վիճակը: 1905 թ. հեղափոխությունից առաջ մի քանի ձեռնարկություններում բանվորական որը հասնում էր մինչև 15 ժամի: 11½ ժամյա բանվորական որվա պարտադիր որենքը կապիտալիստների կողմից փաստորեն չէր պահպանվում:

„Положение рабочего класса в России“ գրքի հեղինակ Կ. Պաժիտնովը գրում է. «Շնորհիվ այն ծակը-ծուկի, վոր թողնված էր 1897 թ. որենքում, ինչպես և շնորհիվ հետագա շրջաբերականների՝ վերից բանվորական ժամանակի կարգավորման փորձը պետք է համարել բոլորովին անհաջող: Կյանքում նա եյական փոփոխություններ չմտցրեց»:

Կոստրոմայի նահանգի Բելոխանովի մանվածային ֆաբրիկի բանվորները 1905 թ. պահանջում էին բանվորական որը նվազեցնել մինչև... 11½ ժամ: Դործարանային տեսուչները հակայական քանակություններ գանգատներ էին ստանում բանվորներին արտաժամյա աշխատանքների ստիպելու մասին: 1904 թվին այդպիսի գանգատների թիվը հասնում էր՝ անհատական — 186 և կոլեկտիվ — 2064, 1902 թվին՝ անհատական — 249 և կոլեկտիվ — 3025:

Անգամ Պետերբուրգում, ուր կառավարությունը և կապիտալիստները ձգտում էին պահպանել 1897 թ. հունիսի 2-ի 11½ ժամյա բանվորական որվա որենքի առերևույթ կիրառումը, ծովային գործարանների բանվորներին 1905 թ. նոյեմ-

բերի 7-ին պահանջեցին արտաժամյա աշխատանքների վերացում կամ, ծայրահեղ դեպքում, նրանց կրճատումը մինչև 60 ժամի՝ տարվա ընթացքում յուրաքանչյուր բանվորի համար: Ձեռնարկություններում ընդհանրապես Ալխասավաթը աշխատավարձը չափազանց ցածր էր՝ յեթե չհաշվենք բարձր վճարվող բանվորների բավականին նվազ խավը:

Առաջին տեղը բռնում էին մետաղագործները, վորոնց աշխատավարձը հասնում էր տարեկան 342 ռուբլու, իսկ վերջին տեղը՝ տեքստիլի բանվորները (տարեկան 140 — 180 ռուբլի): Համեմատաբար վատ չէին վաստակում Պետերբուրգի մետաղագործները՝ որական 1 ու 75 կ. մինչև 2 ու ամենից վատ վաստակում էին Մոսկվայի շրջանի տեքստիլի բանվորները՝ ամսական 8 ռուբ. — մինչև 15 ռուբլի:

Յեթե ըստ աշխատավարձի բոլոր բանվորներին բաժանենք մի շարք գրուպաների, կստանանք հետևյալ պատկերը. — բարձր գրուպային (մետաղագործներին) պետք է վերադրել մոտավորապես բանվորների հինգերորդ մասը. այս գրուպայի մեջ մտնում են նաև քիմիկների ու տպագրիչների և հանքանյութերի վերամշակման՝ բանվորների ընդհանուր քանակության 1/5 մասը, վորոնց տարեկան վաստակը կազմում է 206 ու. մինչև 260 ռուբլի: Միջին գրուպային՝ 180 մինչև 198 ռուբլի տարեկան վաստակով անասնաբուժական պրոդուկտների, փայտի մեքենայական վերամշակման և այլն՝ բանվորների համեմատաբար աննշան մասը (մոտ 1/6), և, վերջապես, ստորին գրուպան (տեքստիլի բանվորները) կազմում է գրեթե բանվորների ընդհանուր քանակի 50%-ը:

Հեղափոխությունից առաջ ֆաբրիկ-գործարանային կյանքի ընդհանուր պայմանները՝ չնայած աշխատանքի պաշտպանության վերաբերյալ մի շարք որենքների, անցյալ շրջանի համեմատությունում չլավացան: Մի անգամ արդեն հիշած Կ. Պաժիտնովը գալիս է հետևյալ յեզրակացություն. — «Մենք իդուր աշխատում ենք տեսնել բանվոր դա»

սակարգի վիճակի քիչ թե շատ խոշոր բարելավում... Աշխատանքի պաշտպանությունը վերաբերյալ մեր որենսդրությունը պարզապես մակերևութորեն՝ առանց խորանալու, վերացրեց շահագործման միայն ամենազարհուրելի արտահայտությունները՝ այդ ասպարիզում ամենից հնարագետ ձեռնարկություններին իջեցնելով մի ընդհանուր մակարդակի»:

Անվերջ տուգանքներ, խուզարկություններ, «սև ցուցակներ»՝ վորտեղ զետեղում էին «խուլվարարներին» և պարզապես ըմբոստ բանվորներին, ադմինիստրացիայի և վարպետների կամայականություն, — այս բոլորը սովորական յերևութ եր:

Բայց տեղի էին ունենում նաև կարգից դուրս այնպիսի փաստեր, վորոնց մասին, որինակ, գրում է Կ. Շելավինը „Рабочий класс и его партия“ գրքում. — «Նովգորոդի նահանգում, գրեթե հեղափոխության նախորդակին (1903 թ.), մի ֆաբրիկի դիրեկտոր բանվորներին լծեց կառքին և նրանով մեկնեց: Գլուխովսկի մանուֆակտուրայում Զախար Մորոզովը ման եր գալիս ֆաբրիկում մտրակը կոշիկին խրած: Ոտարյերկրացի դիրեկտորները շուտով յուրացնում են բանվորների հետ վերաբերվելու «ռուսական պրիոմները»: Մեկ անգլիացի դիրեկտոր՝ այն հարցին, թե ի՞նչ կանոններ կան նրա մոտ՝ բարձրացրեց մտրակն ասելով՝ «ահա իմ մոտ յեղած կանոնը»:

Բոյլշևիկների կուսակցության այդ շրջանին պատկանող թերթիկները տալիս են հեղափոխության նախորդակի և ընթացքում՝ բանվորները դրություն ցայտուն իլլուստրացիան:

«Ընկերներ!» — կարդում ենք բոյլշևիկների Մոսկվայի կազմակերպության Ռագոթսկի ոսյոնական կոմիտեյի թուլցիկում, գրված դիմումի ձևով Նիրնովի ֆաբրիկի բանվորներին և բանվորուհիներին, — կա՞ արդյոք մի այլ տեղ ևս այնպիսի կարգեր, ինչպես մեզ մոտ ֆաբրիկներում! Դուք ձեր տիրոջ համար բանվորներ չեք, այլ նրա ճորտերը, նրա ստրուկները:

Նա ստիպում է ձեզ աշխատել ամբողջ ուր՝ առավոտից մինչև յերեկո, մինչդեռ վճարում է ձեզ չնչին գրոշներ և

ձեր վաստակած աշխատանքային դրամները ստանալու համար դուք ամբողջ ժամերով, մինչև ուշ գիշեր, սպասում եք փողոցում՝ կարծես վողորմություն հայցելիս լինեք: Նա ձեզ ննջարան է տվել՝ դուք պառկում եք յերկուսական մարդ մեկ անկողնում, քնում եք մինչև իսկ հատակի վրա, մահճակալների տակ՝ ինչպես շունը: Խաղեյինը փակել է ձեզ ֆաբրիկում, բակից դուրս չի թողնում, և դուք նստել եք այնտեղ, ինչպես կալանավորները՝ բանտում: Նա ձեզ կերակրելու համար ձեզնից վերցնում է վոչ թե ֆաբրիկային տեսչի հաստատած 3 ռ. 50 կ., այլ ավելացրել է իրեն ելի 50 կ., մինչդեռ կերակրում է վորդնած կազամբով և ամեն տեսակի փչացած պրոդուկտներով: Յեվ ավագ վարպետուհի Աննա Վասիլևնան այդ հոտած անպետք կտորով նախատում է ձեզ: Տոներին սպիտակ հաց ստանալու հույսով՝ դուք ժամերով կանգնում եք դրսում, ձմեռը սառչում եք ձյունի մեջ մի կտոր հացի համար՝ վորը նախապես վճարված է ձեր իսկ դրամով: Նրանք ձեզ տալիս են անպետք, հոտած կերակուր, իսկ իրենք ձեզնից վերցրած դրամով պատրաստում են իրենց համար համեղ ճաշ: Ձեզ տուգանում են յերկու բոպե ուշանալու համար, հայհոյում, ծեծում են: Յերբ դուք հիվանդ եք՝ նրանք տեղ չունեն, վորովհետև նա թանգ արժե, բայց տես, վոր խաղեյինը յերբեք չի մոռանում հիվանդության համար ձեր աշխատավարձից դուրս գալ... Դուք լուրթյամբ տանում եք այդ բոլորը, յեթե ձեզնից վորևե մեկը վճռի մի խոսք ասել, սպա խաղեյինը հաջորդ ուր նրան փողոց կշարտի»:

Բայց ահա թե բանվորները ինչպես են նկարագրում իրենց կյանքը «Իսկրա» ժուրնալում զետեղած թղթակցության մեջ. —

«Մեզ մոտ՝ ֆաբրիկում (կանավալովի՝ Պրիստավը, նահատումայի նահանգում), շնորհիվ բանիսկ վորների համբերության կատարվել և կայով նագալիան տարվում են զանազան ճնշումներ և անորինական նեղումներ... Գործադուլ յեղավ... կանավալովը գրեց պրիստավին, վոր գործադուլ գաղարեցնելը նրա գործն է: Այդ պահին գործադուլավորները պա-

հանջում էյին՝ 1) դադարեցնել բանվորներից անորինական տոկոսներ գանձելը, 2) վերադարձնել գանձված տոկոսների ամբողջ գումարը, 3) նշանակել ճաշի համար 2 ժամյա դադար: Յեկան փոխ-նահանգապետը և պրիստավը ու մեկնեցին ուղիղ կանավալովի մոտ. հարբեցողութունից հետո, ֆաբրիկանտի տան մոտ կանչեցին բանվորներին, նույնպես և կազակներին: Հարբած փոխ-նահանգապետը հազիվ



Գործադուլավորներն ցրում են

դուրս յեկավ բանվորների հետ խոսելու և ուղղակի վրա պրծավ հայեոյանքով — «Բնչ ե ձեզ պետք սրիկաներ. նագայկայ՛ս՛վ այդ սրիկաներին՛»: Յե՛վ նագայկաները հնչեցին: Բանվորների վերջին հյուժը քամող կապիտալիստները, պրիստավը, նահանգապետը, ցարի մոտիկ ծառաները և, վորպես պսակ ու «կարգապահութեան» սիմվոլ նագայկան, անհակարազրած ժամանակի բանվորական «կենցաղի» բնորոշ շտրիխները:

Յեթե քննելու լինենք գյուղատնտեսու- «Ազնվական» թյան վիճակը, ապա կտեսնենք, վոր հիմ- յե՛վ կեղոս նական փոփոխությունների անհրաժեշտու- լեմից-լորդերը թյունը հասունացել եր նաև գյուղում, վոր- տեղ շարունակում եր հսկայական դեր խա- դալ՝ Լենինի ասած՝ «ճորտատեր-կալվածատերերի միջնա- դարյան հողատիրությունը»:

Հատիֆունդիայի (խոշորագույն կալվածների) տերերի ձեռքում մնում եր հսկայական հողային ֆոնդ: 86 միլ. հեկ- տար մասնատիրական հողերից 6<sup>1</sup>/<sub>2</sub> միլ. հեկտար պատկա- նում եր 600 հազար մանր հողատերերի՝ յուրաքանչյուրին 50 հեկտարից վոչ բարձր: 28 հազար հողատերեր ունեյին 62 միլ. հեկտար, այսինքն՝ միջին հաշվով, յուրաքանչյուրը 2200-կան հեկտար. հողատերերի ճնշող մեծամասնությունը (70%) ազնվականներն էյին, և, վերջապես, 700 ամենից խոշոր կալվածատերեր-ցեցեր ունեյին հսկայական կալված- ներ, յուրաքանչյուրը 30-ական հազար հեկտար:

Այդ թվերը անալիզի յենթարկելով՝ Լենինը գրում ե. «10 միլ. գյուղացիական տնտեսություններ ունին 73 միլ. դեսյատին հող. 28 հազար ազնվական և կեղտոտ լենդ- լորդերը՝ 62 միլ. դեսյատին: Այսպես ե հիմնական ֆոնդ այն դաշտի, վորտեղ ծավալվում ե գյուղացիութեան պայ- քարը հանուն հողի: Այդ հիմնական ֆոնդում անխուսափելի յե տեխնիկայի տարրինակ յետամնացությունը, հողա- պործութեան ընկած վիճակը, գյուղացիական մասսաների ճնշվածությունը ու մոռացվածությունը, ճորտատիրական կոտորական շահագործման անվերջ փոփոխական ձևերը»:

Այն ժամանակաշրջանի գյուղի համար բնորոշ են յերկու տեսակի հակադրություն՝ կալվածատիրական դասակարգի և ամբողջ գյուղացիութեան միջև՝ մի կողմից, և գյուղացիութեան ներսում՝ մյուս կողմից: Կենինը մերկացրեց բեզյառական (կոռվո- րական) տնտեսութեան ճորտատիրական վար- ձակալութեան, «բարշչինայի, ձմեռային բունի աշխատանքի

Ֆյուդալացիու- րյունը վորպես դասակարգ յե՛վ գյուղացիութեան միջև՝ մի կողմից, և գյուղ- գյուղի շերտա- վորումը

Կենինը մերկացրեց բեզյառական (կոռվո- րական) տնտեսութեան ճորտատիրական վար- ձակալութեան, «բարշչինայի, ձմեռային բունի աշխատանքի

և այլն ստրկացման անվերջ տարբեր ձևերը, վորոնք հա-  
կադրում էյին նոր ճորտատիրութեանը վողջ գյուղացիու-  
թյունը, վորպես առանձին դասակարգ, վորը շահագրգռ-  
ված է կալվածատերից նրանց հողերը խլելու մեջ:

Միաժամանակ Լենինը հետևել էր նաև գյուղում ծայր  
առնող շերտավորման պրոցեսին: „Аграрная программа  
социал-демократии в первой русской революции 1905 —  
07 годов“ գրքում Լենինն ընդգծել է, վոր «ճորտատիրական  
շահագործումից սեղմված գյուղացիական մասսան քայքայ-  
վում է և հաճախ ինքն է վարձակալութեան տալիս իր հո-  
ղամասը» լի անտեսներին և վոր «հարուստ գյուղացիութեան  
աննշան փոքրամասնութիւնն է դառնում գյուղական բուր-  
ժուազիա, վարձակալում է հողեր՝ կապիտալիստական անտե-  
սութեան համար, շահագործում է հարյուր հազարավոր բառ-  
բակները և որավարձով աշխատողներին»:

1905 թվին հողագուրի գյուղացիները կազմում էյին ար-  
դեն գյուղական բնակչութեան քանակի 25% վոչ պակաս:  
Գյուղի կուլակային մասը կենտրոնացրել էր իր ձեռքում  
բացի հողից՝ նաև նշանակալից քանակութեամբ անասուններ  
և ինվենտար: Հողային նեղվածութիւնը խեղդում էր չքա-  
վորութեան: Խաղաղ ճանապարհով գյուղացիութիւնը ան-  
կարող էր այդ փակուղիից դուրս գալու յեւք գտնել: Գյու-  
ղացիների մասսայական գաղթը դժվարին, գրեթե անհնա-  
րին էր դարձել կառավարութիւնը յերկյուղում էր չէ թե այդ  
ձևով խախտել կալվածատերերի շահերը, վորոնք իրենց տըն-  
տեսութիւնը պահպանում էյին շնորհիվ բեզյառական սիս-  
տեմի գոյութեան: Անգամ Սիբիրի յերկաթուղու բացումը,  
այդ իմաստով, միայն մասնավորապես փոփոխեց դրութիւնը:  
Գյուղացիները գաղթման պայմաններն առաջվան պես մնում  
էյին վերին աստիճանի ծանր: Մինչև 1895 թ., որինակ,  
Հարավ-Ուստրելիայի յերկիր գաղթելու համար պահանջվում  
էր բացի ճանապարհածախսից, յուրաքանչյուր ընտանիքի  
համար 300-ից մինչև 600 ուրբի կանխիկ դրամ: Սիբիր կամ  
այլ ծայրագավառներ գաղթելու լայն հնարավորութիւնները  
չքավորութեան համար, այդպիսով, կտրված էյին: Լինելով

գրեթե «անիրավատեր», «ստորին դաս» — գյուղացիութիւնը  
պակաս չափով չէր զգում նաև քաղաքական ճնշումը: Գյու-  
ղում իսկական իրավատերեր էյին հանդիսանում նահանգա-  
պետների նշանակած ու վերջիններիս անմիջապես յենթար-  
կվող, այսպես կոչված, դեմսկի պետերը: Զեմսկի նաչալնիկ-  
ներ կարող էյին լինել միայն տոհմային ազնվականներից-  
սրանք հաստատում և հեռանցում էյին վոլոստային տանու-  
տերներին, քննում կամ վերացնում հասարակական ժողովների  
վճիռները, սուղանքի էյին յենթարկում ու բանտ նստեցնում  
և ընդհանրապես վարվում էյին գյուղացիների կայանքի ու  
գույքի հետ ինքնակամորեն և առանց վերահսկողութեան:

Գյուղում թագավորող ռեժիմը կարելի չէ բնութագրել  
վորպես «նոր ճորտատիրութեան» ռեժիմ, վորը մինչ-ռեֆոր-  
մայան շրջանի՝ այսինքն մինչև 1861 թ. շատ սովորույթ-  
ն էր պահպանել էր իր ուժում:

Պարզ է, վոր գյուղացիութիւնն ատամ-  
Լեճիճը բան- ները սեղմած միայն կրում էր այդ սոսկալի-  
վ ու քնքի յեվ ճնշումը: 1905 թվի դարնանը սկսվեց գյու-  
գյուղացիների ղացիական շարժումը: Լենինը հենց այդ ժա-  
մանակ էլ այդ շարժման պատճառով «Պրոլե-  
մախիճ տարիատը և գյուղացիութիւնը» հողվածում  
գրեց բանվորների և գյուղացիների դաշինքի ամբապնդման  
անհրաժեշտութեան մասին:

«Քաղաքային բանվորական շարժումը հեղափոխական  
գյուղացիութեան մեջ ձեռք է բերում նոր դաշնակից: Սո-  
ցիալ-դեմոկրատիան\* արդեն քանիցս անգամ մատնանշել է,  
վոր գյուղացիական շարժումը դնում է նրա հանդեպ յերկու  
խնդիր: Մենք պետք է պաշտպանենք, անկասկած, առաջ  
մղենք այն, քանի վոր նա հանդիսանում է հեղափոխական-  
դեմոկրատիքական շարժում: Իրա հետ միասին, մենք պետք է  
անշեղորեն կանգնենք մեր պրոլետարական դասակարգային  
տեսակետի վրա, կազմակերպելով գյուղի պրոլետարիատը

\* Այն ժամանակ բոլշևիկները և մենշևիկները անվանում էյին իրենց  
սոցիալ-դեմոկրատներ:

քաղաքայինի նման ու նրա հետ միասին ինքնուրույն դասակարգային կուսակցություն մեջ, բացատրելով նրան նրա շահերի հակադրությունը բուրժուական գյուղացիություն շահերի հետ, հրավիրելով նրան պայքարել հանուն սոցիալիստական հեղափոխության, մատնանշելով նրան, վոր ճնշում էից ու աղքատությունից կարելի չե ազատվել չե թե գյուղացիության մի քանի շերտերը դարձնելով մանր-բուրժուաներ, այլ փոխարինելով ամբողջ բուրժուական հասարակակարգը սոցիալիստականով»:

Բանվոր դասակարգը յեղել է առաջավոր հեղափոխական դասակարգը, իսկ գյուղացիությունը՝ հեղափոխության յերկրորդ շարժիչ ուժը:

Տեսնենք հիմա, թե հեղափոխության մեջ Արդյունաբերականի և Բուրժուական բուրժուական ժողովրդի

Տեսնենք հիմա, թե հեղափոխության մեջ ի՞նչ դեր խաղացին քաղաքային բուրժուական խավերը: Արդյունաբերական բուրժուազիան ցարիզմի նկատմամբ արդյո՞ք ուղղակիցիա յեր:

«Ներկա մոմենտում բուրժուազիայի շրջանում վերաբերված փոխհարաբերության մեջ են հետադիմական և լիբերալ տրամադրությունները» — հարցնում է Լենինը 1902 թվին «Политическая агитация и классовая точка зрения» հոդվածում և պատասխանում է. — «Մի զույգ մերկ փաստերից այդ անկարելի չե յեզրակացնել. դա կախված է ներկա մոմենտի հասարակական-քաղաքական պայմանների բոլոր առանձնահատկություններից: Այդ վորոշելու համար հարկավոր է մանրամասնորեն իմանալ այդ պայմանները, ուշադրությամբ հետևել հասարակական վորքե խավի՝ կառավարության հետ ունեցած բոլոր և ամեն տեսակի ընդհարումներին»:

Լենինը նախատեսել էր, վոր բուրժուազիան պարզապես անցնելու չե հակահեղափոխության բանակը, յերբ նրան վիճակվի ընտրություն կատարել հեղափոխության յերկու հիմնական շարժիչ ուժերի՝ ցարիզմի և բանվոր դասակարգի միջև, սակայն Լենինը անհնարին չեղ համարում հեղափոխության մի քանի ետապներում ոգտագործել լիբերալ բուրժուազիայի վորոշ խավերը:

«Պրոլետարիատի կուսակցությունը, գրում է Լենինը — պետք է կարողանա ամեն մի լիբերալի վորսալ հենց այն մոմենտում, յերբ նա ուզում է մի վերջով առաջ անցնել, և ստիպի նրան շարժվել մի արշին: Իսկ յեթե դիմադրի — ապա մենք առաջ կանցնենք առանց նրան և նրա վրայով»:

Բուրժուազիան հիմք ունեւր դժգոհելու աղնվական-կալվածատիրական շրջաններից յեւած պաշտոնեաներից: 1900 թվի արդյունաբերական կրիզիսը առաջ բերեց ամբողջ յերկրում խիստ զայրույթի հորձանք՝ ընդդեմ ցարական կառավարության: Լիբերալ բուրժուազիան, վոր մասնակցում էր ուղղակիցիոն շարժման մեջ, ուզում էր բանվորների ձեռքով կրակից շագանակ հանել: Նրա անբավականությունը ցարական բյուրոկրատիայից հատկապես սուր կերպարանք ստացավ ուս-յապոնական պատերազմի անհաջողություններից հետո, յերբ այդ բյուրոկրատիայի հզորության հավատը խորտակվեց վորպես թղթյա տնակ: Այդ ժամանակից սկսած, 1904 թ. վերջից սկսվում է արդյունաբերական բուրժուազիայի բացորոշ լիբերալիզմի պերիոդը:

Սակայն, շուտով, «գարունը» վերջացավ: Հեղափոխության թափից վախեցած՝ լիբերալը յետ նահանջից (1905 թ. հոկտեմբերյան գործադուլից հետո) և բանվոր դասակարգը ինչպես նախատեսել էր Լենինը, պետք է առաջ գնար «առանց նրան և նրա վրայով»: 1902 թվի հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո արդյունաբերական բուրժուազիան հանդես է գալիս վորպես պրոլետարիատի թշնամի:

Ինչ վերաբերում է բուրժուական ինտեֆուրժուական լիգենցիային, ապա նրա թվական քանակը ինտելիգենցիան և քաղաքական տեսակարար կշիռը հեղափոխության մեջ չնչին էր:

1897 թվին Ռուսաստանում կային սկզբնական կրթությունից բարձր՝ 1.300.000 մարդ, այսինքն բնակչության 1%-ից քիչ ավելի. սրանցից բարձրագույն կրթություն էյին ստացել միայն մոտ 132 հազար, իսկ միջնակարգ՝ — 700 հազար:

Բուրժուական ինտելիգենցիան և զպրոցական յերիտասարդությունը, հատկապես ուսանողությունը վորոշ մաս-

նակցութիւնն և ունեցել ինքնակալութեան դեմ վարվող պայքարում, սակայն այդ պայքարը բուրժուական-դեմոկրատիքական պայքարի շրջանակներէջ դուրս չէր գալիս:

Կ. Շելավինը մեջ է բերում հետաքրքիր ցիտատ գերմանական մի բուրժուական լրագրից, վորը բուրժուագիտի և մանր-բուրժուական դեմոկրատիքական ինտելիգենտների դերը գնահատել էր վոչ բարձր:

«Ռուս ինտելիգենտը, գրում էր լրագիրը 1905 թվին, — սովորաբար հեղափոխականորեն տրամադրված է միայն, մոտավորապես, մինչև 30 տարեկան հասակը, դրանից հետո նա փառավորապես սարքվում է հարմար բնում՝ պետական տեղերում, և այսպէս՝ տաք գլուխների մեծ մասը դառնում են սովորական չինովնիկներ»:

«Ընդհանուր առմամբ, այդ նկատողութիւնը բավական ճշտութեամբ ընդգրկում է ուսական ինտելիգենցիայի ելութիւնը՝ բացատրելով նրա դասակարգային դրութիւնը՝ հետեալաբար, և յերիտասարդութեան դրութիւնը», ավելացնում է Կ. Շելավինը:

Դեմոկրատական ինտելիգենցիայի քաղաքական տեսակետներում Լենինը տարբերում էր յերեք ուղղութիւն՝ — իրոշոր բուրժուագիտի շահերի արտահայտիչներէ, «ձախ» ուղղութեան բուրժուական դեմոկրատներէ (Լենինը սրանց շարքին էր դասում սոցիալիստ-հեղափոխականներին) և բանվոր դասակարգի ներկայացուցիչներէ — սոցիալ-դեմոկրատներէ:

«Սոցիալիստներ» յառելիք, վոր կպցրել էյին իրենց եսերները, չէր կարող Լենինից թագցնել նրանց խիական դասակարգային դեմքը: «Սոցիալիստ լինելու բարի ցանկութիւնները չեն ժխտում բուրժուական-դեմոկրատիքական ելութիւնը», գրում է Լենինը «От народничества к марксизму» հոդվածում:

Բուրժուական դեմոկրատներին, բնականաբար, Լենինը համարում էր անվստահելի դեմոկրատներ: Պրոլետարիատը, ընդգծում էր Լենինը, բուրժուական դեմոկրատիային պաշտպանելու յ է վոչ թէ նրա հետ դաշն կնքելու հիման վրա,

վոչ թէ նրա վստահութեան հավատի հիման վրա, այլ պաշտպանելու յ է այն ժամանակ և այն չափով, յերբ և վոր չափով նա պայքարում է գործնականում ինքնակալութեան դեմ»: Ինտելիգենցիան իրենից ինքնուրույն ուժ չէր ներկայացնում: Նրա ճնշող մեծամասնութիւնը գնում էր խոշոր և մանր բուրժուագիտի հետ, և միայն նրա աննշան մասն իր բախտը կապեց բանվոր դասակարգի հետ, վորպէս հեղափոխութեան հեղեմոնի (ղեկավարի):

Ճարական չինովնիկները, ռեակցիոն կալչեղափոխութեան, իրենց քաղաքական անհեռատեսութեան հետեանքով կարծում էյին, վոր ծավալվող հեղափոխական շարժման մեջ մեղավոր են չարանենգ «հեղափոխականները», «խռովարարները», «ուսանողները», այլ վոչ թէ որչեղտիվ այն պայմանները, վորոնք գործնականում հող էյին պատրաստել բանվորների և գյուղացիական մասսաների հեղափոխական խմորման համար:

Սակայն ագիտատորները չառաջացրին, վորքան էլ նրանք ճարտասաններ լինէյին, 1905 — 07 թվականների բուռն հեղափոխական շարժումը:

Հեղափոխութեան հիմքը հենց այդ ժամանակ կազմում էր ճորտատիրութեան (ֆեոդալիզմի) մնացորդների վոչնչացման հասունացած խնդիրը: Կապիտալիստական դարգացման ճանապարհին կանգնած Ռուսաստանը պետք է վշրեր հին կյանքի շրջանակները, վորոնք նրա համար արդեն նեղ էյին: Գյուղացիութիւնը ազահորեն ձգվում էր դեպի կալչեղափոխական հողերը: Համայնքը՝ գյուղում, «բնակութեան շրջանը»՝ հրեաների համար և այլ սահմանափակումները, հալածանքը՝ հավատի համար, անշնորք և տգետ բյուրոկրատիայի կամայականութիւնը, — այս բոլորը խանգարում էր կապիտալիզմի և յերկրի տնտեսական դարգացման ազատ աճումը: Անհրաժեշտ էր, առաջին հերթին, վերացնել ֆեոդալական-ճորտատիրական հասարակակարգը:

Ռուս-յապոնական պատերազմը թուլացրեց կառավարութեան և սրեց դասակարգային հակադրութիւնները, արա-



Դա նշանակում էր հայտարարել պատերազմ\*:

1904 թ. փետրվարի 5-ին Յապոնիան Պատերազմի ընդհատեց Ռուսաստանի հետ դեպլոմատի- սկիզբը. Պարս- Արսուրի մոսի յերեք որ հետո փաստորեն սկսվեց պատե- րազմը՝ Յապոնական ականակիրները գրոհ տվին Ռուսական եսկադրայի վրա՝ Պորտ- Արտուրի տակ (նավահանգիստ հարավային Մանջուրիայում, վոր գրաված էր չինացիներից «վարձակալութան» պատր- վակով):

Ռուսական յերեք նավ միանգամից դուրս ընկան շարքից: Նավատորմը ամուր փակվեց Պորտ-Արտուրի նավակայա- նում: Յապոնացիք բացի այդ, վոչնչացրին ուսական յերկու հաճանավեր, վորոնք չնայած պատերազմի վտանգին՝ անհոգ կերպով թողնված էին Կորեայի նավահանգիստնե- րում: Շնորհիվ այդ գործողութունների, յապոնացիները սկզբից և յեթ գերակշռութուն ստացան ուսական նավա- տորմի նկատմամբ: Պորտ-Արտուրի գրոհից անմիջապես հետո յապոնական զորքերը սկսեցին ցամաք փոխադրվել և շարժվել դեպի Հյուսիս: Ռուսական նավատորմի փորձերը՝ ձեղքել- անցնել ականներով փակված Պորտ-Արտուրը— վերջացավ վողբերգորեն՝ հողս ցնդեց ծովակալի նավը՝ իրեն, ծովակալ Մակարովի հետ միասին, վորի վրա վորպես յեռանդուն պետի մեծ հույսեր էր դրվում: Մի կողմ շարտեղով Յալու գետի գիծը պաշտպանող յերկու անգամից սովելի թույլ ուսական վաշտը՝ յապոնացիները մտան Մանջուրիա: Այդ իսկ ժա- մանակ յապոնական մի ուրիշ բանակ աի իջավ Հարավա- յին Մանջուրիայում, գրավեց Պորտ-Արտուրը Ռուսաստանի հետ միացնող յերկաթուղաղիծը և առաջ յաղալով դեպի հարավ, գրավեց Դալնի (նավահանգիստ, վորը Պորտ-Ար-

\* Ռուս-Յապոնական պատերազմը վորոշ մտքով հանդիսացավ առա- ջացած ընդհարում գերմանական և անգլիական իմպերիալիզմի միջև, քանի վոր Ռուսաստանի թիկունքին կանգնած էր Գերմանիան, իսկ Յապոնիա՝ Անգլիան, սակայն պատերազմի հիմքը կազմում էր Ռոմանովների գա- ղութային քաղաքականութան շարունակութունը:

տուրի նման ուսաները «վարձակալել» էին չինացիներից): Այսպիսով Պորտ-Արտուրն արդեն փակվեց բոլոր կողմերից:

Չորհարամանատար Կուրոպատկինը վա- Պարսուրյունը վախենալով հարձակվել յապոնացիների կյառյանի ակ վրա, պաշտպանողական դիրք բռնեց հարա- վային Մանջուրիայի գլխավոր յերկաթուղա- գծի հանգույցի— Լյառյանի մոտ: 1904 թվի ոգոստոսին իրենք յապոնացիներն անցան հարձակման և գրոհ տվին Լյառյանի բանակատեղերի վրա:

Յապոնական մի բանակ անցավ Կուրոպատկինի թի- կունքը: Վախենալով կտրվել Ռուսաստանից՝ գլխավոր հրա- մանատարը հրամայեց նահանջել և, այսպիսով, յապոնացի- ների ձեռքն ընկավ Լյառյանի ամրակուռ բանակատեղերի հարուստ ավարը:

Ռուսական զորքի համար անհաջող ան- Ջարդը ցախե ցավ նաև Շախե գետի վրայի ջարդը (հոկ- գեսի վրա տեմբերին), վորտեղ շարքից դուրս ընկան 45.000 զինվոր: Միակ միթիթարութուն կա- րող էր հանդիսանալ այն, վոր առաջին և վերջին անգամ ուս- ների ձեռքն ընկավ Շախեյի մոտ յապոնական 11 թնդանոթ:

Ինչ առաջ, 1904 թվի ամռան, ուսա- Ռուսական ես- կան նավատորմը Պորտ-Արտուրից դուրս կադրայի կոր- գալու փորձի ընթացքում վերջնականապես յարգվեց: Յապոնացիները ջարդեցին նա- յապես Վլադիվաստոկի հաճանավային ես- կադրան: Վոչնչացրած նավատորմի մնացորդները թագնվե- ցին Պորտ-Արտուրի նավակայանում կամ փախան չեղոք նավահանգիստներ, ուր նրանց զինաթափեցին:

Ստիպված՝ Կրոնշտատում արագորեն նոր նավատորմ կազմակերպվեց, մասամբ հնացած նավերից կամ, ինչպես արհամարհանքով սասում էին, «հին կրկնակողիկներից»: Հապ- ձեպ կազմակերպած նավատորմը ճանապարհ ընկավ աշնան՝ Բարենուսո հրվանդանի մոտով (Աֆրիկայի շուրջը): Կորեայի ափերին նա կարող էր հասնել, համենայն դեպս, յեկող տարվա գարնանից վոչ շուտ:

Մինչդեռ 1905 թվի սկզբին Պորտ-Ար-  
Պորտ-Արտուրի սուրը անձնատուր յեղավ բոլոր զորքով  
անկուսը և նավատորմի մնացորդներով: Յապոնացի-  
ները ձեռքն ընկավ 32.000 զերի, 500-ից  
ավելի թնդանոթ, 4 զրահակիր, 2 հածանավ և 20-ից  
ավելի նավ:

Սա արդեն վոչ թե անհաջողութուն էր, այլ կատար-  
յալ կատաստրոֆա:

Յեզ համենայն դեպս դա դեռ «ծաղիկներն» էին, «պտուղ-  
ները» դեռ մնում էին առաջիկայում:

Զնայած նրան, վոր 1905 թվի սկզբին  
Ռուսական բա- ուսական բանակն անվիճելիորեն թվով  
նակի կործա- գերակշռում էր յապոնական բանակին,  
նուկար Մուկ- այնուամենայնիվ Կուրոպատկինը «հնարք  
դեմի քակ գտավ» Մուկդենի տակ վճռական ճակա-  
տամարտը տանուլ տալ (1905 թվի փետր-  
վարին): Ռուսական բանակը ջախջախվեց և կիսով չափ  
վոչնչացավ: Կորուստը գերիների հետ միասին հաշվվում էր  
120.000 մարդ: Հին «հզորագույն» բանակի մնացորդները  
փախչում էին առանց յետ նայելու: Յապոնացիներն անար-  
գել շարժվեցին Մուկդենից դեպի հյուսիս 180 կիլոմետր և  
տիրեցին Հարավային Մանջուրիան, իսկ հուսիսային Ման-  
ջուրիա նրանք չզնացին, վորովհետև այնտեղ վոչինչ չու-  
նեցին անելու: Յամաքի վրայի կործանման միացավ նաև  
ծովի վրա յեղած կատաստրոֆան (միլենույն թվի մայիսին):

1904 թվի աշնան ծովակալ Ռոժդեստ-  
Յ ու ս ի մ ա: վենսկու գլխավորութամբ Կրոնշտատից  
Ռուսական յե- դեպի խաղաղ ովկյանոսի ափերը մեկնող  
կորդ յվ յե- ուսական յերկրորդ եսկադրան վոչնչացվեց  
բորդ Եսկադ- Յուսիմայի մոտ (Կորեան Յապոնիայից բաժա-  
րաների ան- նող նեղուցի կղզիներից մեկը): Յերրորդ  
կուսը եսկադրան ծովակալ Նեբոգատովի հրամա-  
նատարութամբ «հաջողութամբ» անձնա-  
տուր յեղավ: Յուսիմայից հետո Ռուսաստանն այլևս նավա-  
տորմ չունեց: Պատերազմն, ըստ էյության, վերջացավ:

41.000 սպանված. 57.000 հաշմանդամ, 12.000 սպանված խոր-  
տակված նավաստիներ՝ — ահա նրա արյունոտ արդյունքը:

Մեկը մյուսին արագ հետևող պարտու-  
Պ ա ս ե ր ա գ մ ր թյունները չէին կարող զարհուրելի տպավո-  
յեվ պարսվո- ռութունը չգործել Ռուսաստանում զանազան  
դ ա կ ա ն ու ս սոցիալական գրուպաների վրա: Ռուս-յապո-  
թյունը նական պատերազմը վորպես հազվագյուտ  
յերևույթ՝ ժողովրդականութուն չունեց ընդ-

հանրապես: Մորելիզացիան առաջացրեց գյուղացիների մեջ  
խուլ հուզմունք. հայրենասիրական «հրճվանք» չունեցավ  
վորեք քիչ թե շատ նշանակալից հասարակական խավ. ան-  
գամ լիբերալ բուրժուազիան՝ հանձինս կադետների կուսակ-  
ցության, բացարձակ չարտահայտվեց պատերազմի դեմ: Ինչ  
վերաբերում է բոլշևիկներին, ապա նրանք ընդգծում էին  
պարտության բարենպաստ դերը. «Ռուսական ազատության  
գործը և ուսական (ու համաշխարհային) պրոլետարիատի  
պայքարը հանուն սոցիալիզմի խիստ կախված է ինքնա-  
կալության գինվորական պարտություններից», գրում էր  
Լենինը: «Ռուս ժողովուրդը ինքնակալության պարտու-  
թյունից ոգավեց: Պորտ-Արտուրի կապիտուլացիան — դա  
ցարիզմի կապիտուլյացիայի նախերգանքն է»: Իեռ մինչև  
Պորտ-Արտուրի ընկնելը, Լյաոյանի անհաջողությունները  
խիստ խախտեցին հավատը դեպի ամենահզոր ցարիզմը:  
Վիթխարի ինքնակալությունը, բանից յերևում է, կանգնած  
էր փտած վոտքերի վրա — այդ ըմբռնեցին բնակչության  
լայն խավերը:

Կառավարությունն զգալով իր թուլու-  
Սվյասոպոլկ — թյունը, ստիպված էր վորոշ չափով մեղ-  
Միսկու «գա- մացնել իր քաղաքականությունը և «հասա-  
բունք» րակության» (ինչպես ասում էին այն  
ժամանակ)՝ այսինքն լիբերալ — բուրժուական շրջանների՝  
հետ մոտենալու ուղի փնտրել: Հենց Լյաոյանի ճակատա-  
մարտից հետո անմիջապես Սվյատոպոլկ-Միսկին նշա-  
նակվեց ներքին գործերի մինիստր՝ սոցիալիստ-հեղափոխա-  
կանների կողմից սպանված Պլեվեյի տեղը:

Լիբերալները ցնծում եյին. նրանց թվում եր, թե Սվյատոպոլկ-Միրսկին պիտի աշխատի գեմատվոնները (լիբերալ-ազնվական խավերի ինքնավարության մարմինների) հետ: Առաջին անգամ գեմատվոյի անդամները բացահայտ կերպով խոսեցին սահմանադրության մասին, այսինքն համառուսական ինքնակալի իրավունքները սահմանափակման մասին: Դա լիբերալի դարաշրջանի «գարնան» եպոխտի եր: Կառավարությունը Լյաոյանից հետո դեռևս վտառքի չկանգնած, ստիպված եր մատնների արանքով նայել լիբերալ շրջանների այդ «չարաճճիության» վրա և նույնիսկ թուլատրեց հրավիրել գեմատվայի համագումար (1905 թ. նոյեմբերին), վորտեղ մեծամասնությունը արտահայտվեց հոգուտ ժողովրդական ներկայացուցիչներին վճռական ձայն տալուն:

Համայն հեղափոխական ներշնչման հետևանքը յեղավ այն, վոր գերագույն իշխանությունը հատուկ մանիֆեստով անորոշ մանիֆեստը խոստումներ տվեց (1904 թ. դեկտեմբերի 12-ին) վարչական ռեֆորմների ու բնակչության իրավունքների վորոշ լայնացման և մամուլի ազատության մասին: Առաջվա պես արգելվում եր խոսել հասարակական հավաքույթներում:

Պորտ-Արտուրի պարտությունը «հասարակության» վրա ավելի ուժեղ ներգործություն ունեցավ, քան Լյաոյանի ամբարտաճանների տակ անհաջողությունը:

Կառավարությունը պատերազմը տանուլ տվեց և այժմ նրանից հեռացան (ձիշտ և՛ կարճ ժամանակով) անգամ հասարակական այն խավերը, վորոնք առաջ պատրաստ եյին նրան անպայման աջակցել «խռովության» դեմ պայքարում: Ցարական իշխանության դեմ յեղած դժգոհությունները, այդ ետպայում, ընդունեցին նոր ձև — բացարձակ մասսայական դեմոնստրացիաների ձև — փոխանակ նախկին՝ այսպես կոչված «բանկետային կամպանիայի» ձևի, յերբ բանկետներում, ճաշի սեղանի շուրջը հավաքվում եյին բուրժուական ինտելիգենցիայի և լիբերալ բուրժուազիայի ներ-

կայացուցիչները և ինքնակալությունը խորտակում եյին... դատարկահնչյուն սպառնալիքների հեղեղով:

1905 թվի հունվարի 9-ի շարժումը անմիջական արձագանքն եր Պորտ-Արտուրի անկման, վորը տեղի ունեցավ նույն թվի հունվարի 2-ին: Գապոնը, վոր կանգնած եր հունվարի 9-ի շարժման գլուխը, Պիտերի բանվորների դուրս գալը կապում եր ամբողջների հանձնման որվա հետ: Այդ փաստը՝ պատերազմի ազդեցությունը, վորպես «հեղափոխությունը արագացնողի» արտահայտվեց ուժգնորեն: Դեռ ավելի մեծ չափով, քան Պորտ-Արտուրը, անգամ Մոսկուենը — Ցուսիման յեղավ վերջին այն «կաթիլը», վոր լցրեց յերկարատև համբերության բաժակը: Այդ որից է վեր հեղափոխությունը, վոր սկսվեց 1905 թվի հունվարի 9-ից, տարածվում ե յերկրում լայն հեղեղով:

### III. ՇԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ՝ ՇՈՒՆՎԱՐԻ 9-Ը

Կառավարական շրջանների վորձերը, Զուբասովը յեղ բանվորական շարժումը մտցնել վորոշ հունի դեղ ին-վոսի-մեջ, այն վերցնել վոստիկանական խնամակալական սուկալության տակ՝ հաջողությամբ չպսակվեցին: Դա ցույց տվեց հունվարի 9-ը:

Դեռ շատ առաջ, մինչև «արյունոտ կիրակին», ցարական իշխանությունը ձգտում եր, թեկուզ կապիտալիստների համար աննշան կորստով, միավորել բանվորներին՝ իբրև թե նրանց կենցաղը բարելավելու համար՝ վոստիկանական պրոֆեսիոնալ միություններում, վորպեսզի բանվորների ուշադրությունը հեռացնի քաղաքական պայքարից: Այդ գործի գլուխ կանգնեց ռիսանկայի պետ ճարպիկ և խելոք Զուբատովը: 1901 թվին ռիսանկայի ոգնությամբ կազմակերպվեց «Մոսկվա քաղաքի մեխանիքական արտադրության բանվորների միավորություն»: Զուբատովի գործակալները նման կազմակերպություններ ստեղծեցին նաև Մինսկում, Ոդեսայում, Ֆիլիսովետոգրադում, Նիկոլայեվում և Խերսոնում: Զուբատովյան կազմակերպություն-

ները, ռխրանկայի հասկացողութեամբ, պետք է բանվորական շարժումը դասկային վորոշ սահմաններում, սակայն այդ խնդիրը նրանց ուժից բարձր եր: Բանվորները շուտով սկսեցին յետանդուն գործադուլային այնպիսի շարժում, վորի չափը Զուբատովյան կազմակերպութեանների կանոնադրով չէր նախատեսուիլած. կապիտալիտները համառորեն դանդատուիցին Պիտեր՝ ձեռներեց ռխրանիկի վրա, և Զուբատովը՝ կորցնելով իր ավտորիտետը շուտափուլթ հետացվեց:

Այսպես անփառունակ վերջացավ «Զուբատովչիանն»:

Սակայն՝ վոչ բոլորովին: Մի քանի ժա-  
Գապոնը յեվ մանկից հետո նա կենդանացավ նոր ձևով  
գապոնովոչի- Պիտերում: Բանվորական շարժումը դոռով  
նան տիրանալու վերջին փորձերը կապված են  
նխրանկայի գործակալ-քահանա Գապոնի  
անվան հետ, վորը շարունակեց «Զուբատովյան» քաղաքա-  
կանութեանը:

Գապոնը կազմակերպեց Պիտերում մի ընկերութեուն նման Մոսկվայի «մեխանիքական արտադրութեան բանվոր-  
ների միավորութեան»: Գապոնական «Փաբրիկ-գործարա-  
նային բանվորների ժողովը» սկսեց աշխատել 1903 թվի  
գարնանից: 1904 թվի վերջին նա իր շարքերում ուներ  
մինչև 10.000 անդամ. հատկապես սկսիվ գործում եր Վի-  
բորգի ռայոնական ընկերութեունը: Ահա հենց այս ընկե-  
րութեան, վոր ծնունդ առավ ռխրանկայի հովանավորու-  
թեան տակ, վիճակված եր վորոշ դեր խաղալ հեղափոխա-  
կան դեպքերի զարգացման մեջ, չնայած նրան, վոր նրա  
ղեկավարներն առաջադրում էին բանվորներին բոլորովին  
էլ վոչ հեղափոխական նպատակներ:

Ներքին գործոց նախկին մինիստրութեան գործերում  
պահպանվել է «Պետերբուրգ քաղաքի Փաբրիկ-գործա-  
րանային ռուս բանվորների ժողովի» կանոնագրի սկզբը-  
նական նախագիծը, վոստիկանութեան դեպարտամենտի  
մտցրած ուղղումներով:

Ահա այդ կանոնագրից մի քանի քաղ-  
Գապոնական վածքներ. «Ս.—Պետերբուրգ քաղաքի Փաբ-  
միխայիլովների ռիկ-գործարանային ռուս բանվորների ժո-  
կանոնագիրը դովը կազմակերպվում է՝ ա) աշխատանքից  
ազատ ժամանակ՝ «Ժողովի» անդամների  
իրական ոգտի համար՝ ինչպես հոգեկան-բարոյական, նույն-  
պես նյութականի վերաբերյալ՝ զգաստ և խելացի ժամանակ  
անցկացնելու համար, բ) ազատ բանվորների մեջ ռուսական  
ազգային ինքնագիտակցութեունն արթնացնելու և ամբապն-  
դելու համար, գ) բանվորների իրավունքի և պարտականու-  
թեունների վերաբերյալ նրանց խելացի տեսակետներ ռսու-  
ցելու և զարգացնելու համար և վերջապես, դ) «Ժողովի»  
անդամների ինքնագործնելութեունը արտահայտելու համար,  
վորը նպատուած է բանվորների կյանքի և աշխատանքի  
պայմանների որինական բարելավման:

«Մատնանշած նպատակին հասնելու միջոցները՝ — ա)  
«Ժողովի» շենքում անպայման արգելվում է՝ վոողով խաղեր,  
վոգելից խմիչքների գործածութեուն, և արգելել «Ժողովի»  
անդամին կամ հյուրին հարբած դրութեամբ «Ժողովի» շեն-  
քում ներկայանալ, բ) ձեռք բերել Ռուսաստանի լրագրական  
և հանդեսային մամուլի ոգտավետ հրատարակութեուններ,  
հիմնել մատենադարան, կազմել ընթերցարան, իր անդամ-  
ների միջից կազմակերպել հոգևոր և աշխարհիկ խումբ,  
և յերաժշտական կրուժոկներ, կազմել՝ ինչպես «Ժողովի»  
շենքում, նույնպես և վարձու շենքերում համերգներ, ընտա-  
նեկան և գրական-յերաժշտական յերեկույթներ, գ) կազմա-  
կերպել ամեն շաբաթ կրուժոկների և անդամների ընդհանուր  
ժողովներ՝ խելացի-բազմակողմանի քննելու համար իրենց  
կարիքների և ինքնակրթութեան հարցերը, դ) զրույցներ  
կազմակերպել կրոնական-բարոյական բնույթի, այլ և բա-  
ցաարութեուններով ընթերցանութեուն, յե) կազմակերպել  
պատշաճ թուղտովութեամբ (ընդգծած խոսքերը կանո-  
նագրում ավելացրել է վոստիկանութեունը) դասախոսու-  
թեուններ հանրակրթական առարկաների վերաբերյալ և,  
հատկապես, հայրենագիտութեան մասին ռ. մասնավորապես

բանվորական հարցի մասին, վորոնք մատնանշեն և բացատրեն բանվորին նրա իրավական դրուժյունը և տգիտությունն ից ու կեղտոտությունն ից դեպի լույսը գուրս գալու որինական ճանապարհները, գ) կազմել փոխադարձ ոգնության կապիտալ՝ իր անդամների հիվանդության, գործազրկության և հատուկ կարիքների համար, ե) կազմել ներքին գործոց մինիստրության կողմից հատուկ մշակած և հաստատած կանոնագրի հիման վրա (ավելացրած և վոստիկանական դեպարտամենտի կողմից) թաղման գանձարկղներ, ինչպես և բաց անել, ամեն անգամ պատշաճ իշխանության հատուկ թույլտվությամբ, և այլ հիմնարկություններ, վորոնք նպաստեն վաստակի ավելացման, ապահովեն փոխադարձ ոգնությունը՝ նյութական դժվարությունների և ընդհանրապես ծանր հանգամանքների երահասության դեպքում, ը) կազմակերպել «Ժողովի» շենքում թեյարան (նախաճաշով), իսկ ընկերության գործերի ծավալման դեպքում՝ բաց անել և սեփական սպառողական կրպակ, թ) այս կանոնագրի հաստատման որից սկսած «Ժողովի» վարչության անդամները և պաշտոնական այլ անձինք մեկ տարվա ընթացքում բոլորովին ձրիաբար անձնազոհությամբ պիտի վարեն իրենց պարտականությունները»:

Բազմակողմանի կերպով տիրանալ բանվորական շարժման ու կենցաղին — ահա թե ինչն էր կազմում գապոնական «Ժողովի» հիմքը: Կազմակերպության ղեկավարությունը հանձնված էր Գապոնին, սակայն վոստիկանությունը աչքը չէր հեռացնում Գապոնից և առանց յերկմտության ընդգծում էր կանոնագրի հավելման մեջ, վոր «բանվորների համար դասախոսությունները, հատկապես բանվորական հարցի վերաբերյալ, կայանում են անպայման վոստիկանության ներկայացուցչի ներկայությամբ»: Բնորոշ է նաև վոստիկանության դեպարտամենտի հետևյալ մեջբերումը. «Գործադուլի դեպքում «Ժողովի» փոխադարձ ոգնության կապիտալից նպաստներ չեն կարող տրվել»:

«Ժողովը» պետք է գլխավորեր հատուկ ներկայացուցիչ, վորը «Ժողովի գործնեյության համար պատասխանատու յեր

կառավարության հանդեպ. «Ժողովի» լիազորը, գրված է կանոնագրում, «ընտրվում է «Ժողովի» գոյության առաջին յերեք տարվա համար պատասխանատու անձնավորությունների կրոժոկի կողմից՝ աշխարհիկ և հոգևոր կոչում ունեցող ինտելիգենտ (!) անձանց թվից՝ յերեք տարի ժամանակով»: Վոստիկանությունն էր կողմից ավելացրել է՝ «ներկայացուցչին պաշտոնում հաստատելը կախված է Ս. Պետերբուրգի քաղաքապետից»: Գապոնական Ընկերության ժողովներում բանվորները սովորաբար յերգում էին ցարական որհներգը՝ «Տեր, պահպանիր կայսրին»: Պահպանվել է մի լուսանկար, վորի վրա հանված են «Ժողովի» պարագլուխները քաղաքային վոստիկանապետ Ֆուլոնի հետ միասին: Մի խոսքով, թվում էր, ամեն ինչ նախատեսված էր, վորպեսզի բանվորական շարժումը հաստատորեն ուղղել վորոշ հունով՝ հոգուտ ինքնակալության:

Սակայն փաստորեն վոչ վոքի կողմից չղեկավարվող, տարերային հեղափոխական շարժումը դեն չպրտեց այս անգամ ռիսրանկայի հաշիվները և պարուրեց «իրեն» Գապոնին, հակառակ նրա կամքի, հեղափոխական հեղեղով:

Քահանան անսպասելի կերպով ընկավ ալիքների դադաթը:

Շարժման համար պատրվակ ծառայեց Շարժման համար պատրվակ ծառայեց Մուտիլովի գործարանից անբավարար հիսկիգրը, պոստիկանների վոչ չբանվորների արձակումը, սիլովցիների վորոնք գապոնական «Ֆարբիկ-գործարարական ընկերության բանվորների ժողովի» անդամներ գործադուլից հեռացրան, ղրծարանի ադմինիստրացիան, չնայած բանվորների յեռանդուն խնդրանքի, ցերի առաջին հետ ընդունել:

Քաղաքապետը, վորի ոգնության դիմեց Գապոնը, նույնպես հրաժարվեց: Սյն ժամանակ, վորպես պատասխան այդ արձակման, բանվորները վորոշում են գործադուլ հայտարարել:

Հունվարի 3-ին պուտիլովցիները ընդհատում են աշխատանքները, հունվարի 4-ին գործադուլավորներին միանում են Ֆրանսուսական գործարանի բանվորները, իսկ հետագա

որերին՝ կանգ առան Պիտերի գրեթե բոլոր գործարանները Գործադուլին մասնակցում էին 150.000 բանվոր: Շարժման գլուխ կանգնեց գապոնսկան «Փողովը», վորովհետև թե բոլշևիկները և թե մենշևիկներն այդ շրջանում չունեին բավականին ուժեղ կազմակերպություններ: Գապոնովցիներին շրջանում մի միտք է հասունանում՝ աղերսագրով ցարի մոտ գնալ: Այդ առաջարկը բոլոր ռալյոններում ցնծութուն է առաջացնում: 4-5 որվա ընթացքում յեռանդուն քննում են ցարին ուղղված դիմումի նախագիծը: Սոցիալ-դեմոկրատները փորձեցին հորդորել բանվորներին հրաժարվել ցարի մոտ թափորով գնալուց՝ դժվար չէր նախատեսներ, վոր նա կվերջանար զուր արյունահեղությունով: Սակայն բանվորները հետևում էին Գապոնին, և սոցիալ-դեմոկրատներին մնում էր միայն բանվորական ժողովներում, ուր քննվում էին ցարին ուղղված դիմումը, աղերսագրի մեջ մտցնել կուսակցության մինիմում-ծրագրի պահանջները:

Պիտերի այն ժամանակվա դրության Հունվարի 9-ը մասին մի բանվոր՝ Պետերբուրգի կոմիտեյի յեվ սոցիալ-դեմոկրատներն

«Գրում եմ Նեվայի զաստավի Սեմեննիկովի գործարանի բանվորների հենց նոր կայացած ժողովի թարմ տպավորության տակ... ահա յերկու որ է, ինչ գործադուլ է հայտարարել Սեմեննիկովի գործարանը: Յերկու շաբաթ առաջ գործադուլ է արել Շառլ բամբակ մանելու Ֆարբիկը՝ վիրորդի կողմում: Գործադուլը տեեց չորս որ: Բանվորները վոչնչի չհասան. այսոր-վաղը այդ գործադուլը կրկին կնորոգվի: Ամեն տեղ բարձր տրամադրութուն է, բայց չի կարելի ասել, թե հոգուտ սոցիալ-դեմոկրատների յե: Բանվորների մեծ մասը կողմնակից է միայն տնտեսական պայքարի ու դեմ է քաղաքական պայքարին: Սակայն, պետք է սպասել և հուսալ, վոր այդ տրամադրութունը փոփոխվելու յե, և բանվորները կհասկանան, վոր առանց քաղաքական պայքարի՝ տնտեսական վոչ մի բարելավման հասնել չի կարելի: Այսոր գործադուլ հայտարարեց Նեվայի Նավա-

շինարարական Ընկերության (Սեմեննիկովի) գործարանը: «Ռուս Ֆարբիկ-գործարանային բանվորների ժողովի» տեղական բաժանմունքը ձգտում է հանդես գալ սկսվող գործադուլի ղեկավար, բայց իհարկե, դա նրան չի հաջողվի: Զեկավարը պիտի լինի սոցիալ-դեմոկրատիան, չնայած անգամ նրան, վոր նա այստեղ չափազանց թույլ է»:

Նամակի հեղինակը մանրամասնորեն բնութագրում է Պիտերի բանվորների յերերուն տրամադրութունը՝ հունվարյան յելույթի նախորդակին: Գապոնսկան հոետորները ընդհանրապես ավելի հարգի էին, քան սոցիալիստները, սակայն նրանց չհաջողվեց վերջիններեա բոլորովին չեղոքացնել:

Իսկ մի քանի դեպքերում սոցիալ-դեմոկրատները ժողովներում ղեկավար դեր էին կատարում. թեև ելի ստիպված էին հաշվի առնել գապոնովցիների ազդեցութունը:

Ահա, որինակի համար, հետաքրքիր մի շարիխ Պետերբուրգի կոմիտեյի անդամի միենույն նամակից՝ «թեև ժողովի հսկայական մեծամասնութունը (90%) — խոսքը վերաբերում է Նեվայի նավաշինարական գործարանի բանվորների ժողովին — սոցիալիստների կողմն էր, սակայն ժողովը վերջի-վերջո ցրվեց առանց հետևանքի և վորոշումը հետաձգեց վաղվան: Համենայն դեպս, կարելի յե ասել, վոր սոցիալ-դեմոկրատներին հաջողվեց բանվորների տրամադրութունը թեքել իրենց ոգտին»:

Մինչ այդ մոմենտում յեղած յերերուն դրությունը յերկու որից հետո վերջնականապես վորոշվեց՝ սոցիալ-դեմոկրատները, ընդհանուր առմամբ, գապոնովցիների նկատմամբ գերակշռութուն չստացան, և դեպի պալատ կազմակերպվող թափորը խափանելը՝ բացարձակապես անհնարին գործ էր:

«Միայն այժմ, յերբ դեմ առ դեմ ընդհարվում ենք տարերային գործուլային տենդի հետ, վորով այսորվանից բուն էլ են զրեթե բոլոր գործարանները, Ֆարբիկները, անգամ, մանր արհեստանոցները, — կարգում ենք բոլշևիկյան «Вперед» թերթում տպագրված հունվարի 7-ի նամակում,

— միայն այսօր մենք կարող ենք հաշվի առնել կուսակցութեան ամբողջ անկազմակերպութիւնը: Դրա հետեւանքն այն է, վոր մենք՝ Սանկտ-Պետերբուրգի կազմակերպութիւնը, բանվորական տարերային շարժման հանդեպ միանգամայն անուժ ենք: Հարկավոր է միայն փողոց դուրս գալ և տեսնել, թե ի՞նչ է կատարվում շրջապատում, հասկանալու համար, թե վորչափ մենք անուժ ենք: Չե՞ վոր այժմ անհրաժեշտ են հազարավոր, տասնյակ հազար թերթիկներ, անհրաժեշտ են կազմակերպված բանվորական ժողովներ, պատրաստի փորձված հոստոթներ, վորոնք կարողանան քահանա Գապոնից բանվորների բազմութիւնը դեպի մեզ թեքել: Իսկ մենք ի՞նչ կարող ենք անել—բաց թողնել մի քանի հարյուր թերթիկներ, վորոնք բոլորովին չեն նկատվի, ուղարկել մի քանի հոստոթներ՝ թողնելով նրանց իրենց բախտին...

Թափօրի նախապատրաստական աշխատանքները տարված էյին բոլոր ռայոններում՝ վոստիկանութեան աչքի առաջ: Տարակույս չկար, վոր կառավարութիւնը, նախապես, իմանալով ցարին դիմելու մտադրութիւնը, վորոշում է արգելք չհանդիսասանալ այդ գաղափարի իրագործման, և միայն վերջին վայրկյանին աղերսագրի հանձնման փորձին պատասխանել արյունահեղութեամբ: Այդ նպատակով Պիտերը նախապես լցված էր զորքով և ռայոնական շտաբներում հերթապահում էյին պատերազմական համազգեստով սպաներ:

Վերջապես հաջորդեց վինվորական բաղխման օրը՝ հունվարի 9-ը:

Տարբեր ռայոններից դեպի Չմեռային պալատ Թ ա ֆ ո ռ ր շարժվեցին Գապոնի գլխավորութեամբ հարյուր հազարավոր բանվորներ „*Боже, царя храни*“ («Տեր պահիր ցարին») և „*Коль славен наш гос-подь*“ յերգելով, խաչվառներով, սրբերի ու թագավորական պատկերներով: Թափօրը բոլորովին խաղաղ բնույթ էր կրում և հիշեցնում էր ավելի շուտ խաչյերթ, քան հեղա-

փոխական դեմոնստրացիա. հեղափոխական պլակատներ ու լոզունգներ չկային:

«Այնպիսի տեսարան էր, վկայում է մեկ ակնատես մոնարխիստ, — վոր ինձ համար, վորպես ուղղափառի՝ նվիրված ինքնակալ թագավորին, սիրող՝ հայրենի պատմութիւնը ու հնութեան ավանդութիւնը՝ միակ ինքնակալ թագավորի մասին՝ իր անձնվեր ժողովրդի հետ, — վոչ մի կասկած անգամ չմնաց, վոր չէյին կրակելու, չէյին համարձակվելու կրակելու»:



Արյունոտ կրակի 25 ամյակի առթիւ՝ 1905 թ. հունվարի 9-ը (22-ը) Պետերբուրգում: Բանվորական ցույցի ցրումը աղմուկալուսովոյի շենքի առաջ:

Բայց ցարը համարձակվեց...  
Հրաձգութիւնն սկսվեց Նարվի դարբասների մոտ...  
Շլիսիլբուրգի տրակտով բանվորները առաջ էյին գնում, չնայած նրանց ուղղած հրացանների փողերին, գնում էյին՝

ասելով «Մեռնենք, ընկերներ, վերադարձ չկա»: Զինվորները այստեղ ևս կրակում էին:

Տրոյիցի կամրջի մոտ ամբոխի վրա բաց արին կատաղի համազարկ, ֆնացած լրացրեց հեծելազորը՝ կոտորելով աջ ու ձախ, ծերերին, կանանց, յերեխաներին...

Ինքը Գապոնը կարողացավ ծածկվել և հետո վախժավ արտասահման\*:

Արյունոտ սպանդանոցը տևեց 1<sup>1</sup>/<sub>2</sub>-ից մինչև 4 օր 4 ժամը ցերեկվա ժամը 4-ը: Զինված դիմադրություն անսպասարատ, խաղաղ տրամադրված բաղձությունը գապոնովիցների ղեկավարությունում փախավ ամեն կողմ, առանց դիմադրություն փորձ անգամ անելու: Միայն Վասիլևսկի կզգում բանվորները գործում են ավելի վճռական՝ այստեղ հեռագրասյուներից ու կիոսկներից բարձրացնում են բարիկադ: այս ուսյոնում հատկապես ավելի նկատելի յեր սոցիալ-դեմոկրատները ազդեցությունը, վորոնց ղեկավարությունում բանվորները ուժով խլում են զինական խանութներից յեղած զենքը և հանդիպում են հեծալազորին հրացանաձգությունում:

Սակայն շուտով ընկնում է բարիկադը...

Ցարը հաղթեց իրեն «հավատարիմ հպատակներին»...

Իսկ պանեղների և մայթերի վրա ընկած էին հազարի չափ զոհեր, վորոնցից 200-ը՝ սպանված...

...«Թագավոր. մենք Սանկտ-Պետերբուրգի «Թագավոր. տարբեր խավերի բնակիչները և բանվորները, մեր կանայք ու յերեխաները և անողնախան ծերունի ծնողները, յեկել ենք քեզ մոտ, թագավոր, արդարություն և ոգնություն փնտրելու, — այս խոսքերով եր սկսվում ցարին ուղղած զրմումը: — Մենք աղքատացել ենք, մեզ ճնշում են, ծանրաբեռնում ուժից բարձր աշխատանքով, մեզ անպատվում են, մեզ մարդի տեղ չեն դնում, մեզ հետ վերաբերվում են վորպես ստորակների, վորոնք պետք է միայն համբերությունում տանեն»

\* Հետագայում Գապոնը վերադարձավ Ռուսաստան և այստեղ բռնկվելով ռեբանկայի հետ օւնեցած կապի մեջ՝ սպանվեց իր կողմնակիցների ձեռքով:

իրենց դառը բաժինը և լոնն: Մենք ել համբերել ենք, բայց մեզ հրում են դեպի աղքատություն լուծը, դեպի տգիտությունն ու անարդարությունը, մեզ խեղդում է դեսպոտիզմն ու կամայականությունը, և մենք հազիվ շունչ ենք քաշում: Այլևս ուժ չկա, թագավոր: Համբերության ժամը հատավ: Մենք հասել ենք այն սարսափելի վայրկյանին, յերբ մահը գերադասելի յե, քան անտանելի շարչարանքը շարունակելու...»

Բանվորները, անկասկած, սոցիալ-դեմոկրատները ազդեցություն տակ, աղերսագրում մտցրել էին տնտեսական պահանջներին զուգընթաց նաև քաղաքական բնույթի և ամենից առաջ՝ Հիմնադիր ժողովի պահանջ:

«Անհրաժեշտ է ժողովրդական ներկայացուցչություն, անհրաժեշտ է, վորպեսզի ինքը՝ ժողովուրդն ոգնի և կառավարի իրեն: Չէ վոր նրան են ավելի հայտնի իսկական կարիքները, Մի մերժիր նրա ոգնությունը, ընդունիր այն, հրամայիր անմիջապես՝ իսկույն և յեթ հրավիրել ուսական հողի ներկայացուցիչներին՝ բոլոր դասակարգերից, բոլոր խավերից, նույնպես և բանվորների ներկայացուցիչներին: Թող լինի և կապիտալիստ, և քահանա, և բժիշկ, և վարժապետ, — թող յուրաքանչյուրը հավասար և ազատ լինի ընտրելու, — դրա համար հրամայիր, վորպեսզի Հիմնադիր ժողովի ընտրությունները կայանան ընդհանուր, գաղտնի և հավասար ձայնավությունում:»

Հիմնադիր ժողովի հրավիրելու պահանջի հետ միասին աղերսագրում զրված էին նաև խոսքի, մամուլի ու ժողովների ազատության, 8 ժամյա բանվորական օրվա, լրիվ քաղաքական ամիստիայի, դասային անհավասարության վոչնչացման, հողերի յետ գնման վարձի վերացման, հողերը ժողովրդին աստիճանաբար անցնելու մասին պահանջներ:

Ցարին ուղղած զրմումը այսպիսի ծրագրով դա կարող եր լինել միայն խելահեղ, զեպի կայսրը յեղած կույր հավատի արդյունք և միաժամանակ իշխանությունն ու կիսատիրաննիկ Գապոնի կողմից յեղած գիտակցական պրովակացիայի պտուղ:

Սակայն բանվորներին գնդակահարելով, դրա հետ միասին ցարը գնատակահարեց նաև հավատը դեպի ինքնակալության փրկարար դերը, մի հավատ, վորը դարերով արմատացել էր գյուղացիական միջավայրում:

Հունվարի 9-ի նախորդյակին, յերբ հավաքույթներու հարց եր բարձրանում անհաջողության հնարավորությամասին, ամբոխը միաձայն պատասխանում եր՝ «Այդ դեպքում մենք թագավոր չունենք»...

Յեվ, իսկապես, հունվարի 9-ից հետո այլևս չկար թագավոր, այն թագավորը, վորը յերկար ապրում եր բանվորների և գյուղացիների յերևակայության մեջ, կապված գյուղացիության հետ՝ վորպես վերագասակարգային ուժ:

Հենց այդ պատճառով էլ «այո՛ւնոտ կլենինը հունվարի 9-ի մասին

լեռնից հենց այդպես էլ գնահատում ե հունվարի 9-ը Պետերբուրգում. «Պատմական խոշորագույն դեպքեր կատարվում Ռուսաստանում: Պրոլետարիատը ապստամբել ցարիզմի դեմ: Կառավարութունը պրոլետարիատին հասցրել մինչև ապստամբութուն: Այժմ հաղիվ թե կարելի լի՛ կասկածել, վոր կառավարութունը դիտավորյալ կերպով հնարավորութուն տվեց գործադուլային շարժման համեմատաբար անարգել ծավալումը և վերածումը լայն դեմոնստրացիաների, ցանկանալով գործը հասցնել մինչև զինվորական ուժի գործադրությանը: Յեվ նա հասցրեց մինչև այդ՛! Հրապարակվոր սպանվածներ և վիրավորներ՝ ահա արյունոտ կրակի՛ հունվարի 9-ի արդյունքը Պետերբուրգում: Չորհ հաղթեց անգն բանվորներին, կանանց և յերեխաների՛ Չորքը հաղթահարեց թշնամուն՝ գնդակահարելով դետնվող պառկած բանվորներին»: «Մենք նրանց լավ դաս տվինք»՝ աննկարագրելի ցինիզմով այժմ խոսում են ցարի ծառաներ ու նրանց յեվրոպական լակեյները՝ կոնսերվատիվ բուժուազիայի շարքերից... Այն, դասը չափազանց մեծ

Ռուսական պրոլետարիատը յերբեք չի մոռանա այդ դասը: Բանվոր դասակարգի ամենամեծ պատրաստ, ամենայետաճանց շերտերը՝ միամտորեն հավատալով ցարին և անկեղծորեն ցանկանալով «իրեն՝ թագավորին» հանձնել տանջված ժողովրդի խնդիրը, բոլոր նրանք լավ դաս ստացան զինվորական ուժից, վորը ղեկավարում ե թագավորը կամ նրա հորյեղբայր բարձրագույն իշխան Վլադիմիրը: Բանվոր դասակարգը քաղաքացիական կռիվի մեծ դաս ստացավ: Հեղափոխական պրոլետարիատի դաստիարակութունը մեկ որվա մեջ այնչափ առաջ անցավ, վորչափ անկարող եր անցնել հին, սովորական, մոռացված կյանքի ամիսների ու տարիների ընթացքում:

«Ինչպիսիք...» կոչը, վոր լավեց Նևսկու վրա հունվարի 9-ին մի բանվորական բազմության միջից, այժմ անհետեվանք մնալ անկարող ե: Այս խոսքերով կենինը վերջացում ե «РЕВОЛЮЦИОННЫЕ ДНИ» հոդվածը, գրված արյունոտ կիրակիի տված «դասի» տպավորության տակ:

Այսուհետ թեև կոխեց «ռուսական պատմության շրջադարձման կետը»: Ռուսաստանում սկսվեց առաջին հեղափոխութունը:

Յեվ ահա հենց այդ՛ հսկայական ժողովրդական մասսաների դեպի քաղաքական գիտակցութունը և հեղափոխական պայքարը յեղած արթնացման մեջ ե կայանում 1905 թվի հունվարի 9-ի պատմական նշանակութունը:

«Մասսաների իսկական դաստիարակութունը յերբեք կարելի չե բաժանել իրեն մասսայի ինքնուրույն քաղաքական՝ և մասնավորապես՝ հեղափոխական պայքարից: Պայքարն ե միայն դաստիարակում շահագործվող դասակարգին, և միայն պայքարն ե բաց անում նրա ուժերի չափը, լայնացնում նրա հորիզոնները, բարձրացնում նրա ընդունակութունները, պարզում նրա միտքը, կոփում նրա կամքը» (Լենին, «Հունվարի 9-ը» — գեկուցում բանվորական յերիտասարդության ժողովում):

#### IV, ՀԵՂԱՓՈՒՈՒՅՅՈՒՆԸ ՔԱՅԼՈՒՄ Ե

**Հուլի 1905 թվականի գործադուլները**

Հունվարի 9-ի շարժումը ուժեղ արձագանք գտավ վողջ Ռուսաստանում: Վորպես պատասխան բանվորների գնդակահարման գործադուլներ տեղի ունեցան 122 քաղաքներում: Այդ շրջանի գործադուլային շարժման մասին կարելի չէ պատկերացնել հետևյալ թվերից: մինչև 1905 թվականը մեկ տասնամյակի ընթացքում գործադուլավորների թիվը կազմում էր 430 հազար մարդ, այսինչ հունվարի ընթացքում գործադուլավորների թիվը հասնում էր 440 հազարի, այսինքն հեղափոխության մեկ ամսվա ընթացքում պայքարին մասնակցում էին ավելի շատ բանվորներ, քան նախընթաց 10 տարվա ընթացքում: Ռուսաստանում հունվարյան գործադուլների նմանը յերբեք դեռ չէին յեղել: Սակայն հետագա գործադուլները ել ավելի գերազանցեցին հունվարյան շարժումը: 1905 թվի գարնանը գործադուլների ակտիվները բարձրացան իրենց գագաթնակետին: Գործադուլային պայքարն սկսվեց հարավում, ապա ընդգրկեց շարժման մեջ վողջ կենտրոնական Ռուսաստանը, Ուրալը, Սիբիրը:

Հունվարի վերջին կանգ առան Պետերբուրգի գրեթե բոլոր խոշոր գործարանները: Պուտիլովի գործարանի բանվորները պահանջ էին դրել «պատգամավորությունը կազմել ինչպես Պուտիլովի գործարանի ակցիոներական ընկերությունից, այնպես և բանվորներից՝ յերկու կողմից ել հավասար ձայներով»:

Չղադարող գործադուլները և բանվորների հեղափոխական տրամադրությունների վերելքը ամենալավ առհավատ չյա էին այն բանի, վոր կառավարության չհաջողվեց հունվարի 9-ից հետո նյութած «բանվորական» պատգամավորություն հորինել:

Այն ժամանակ յխրանկան, ըստ վերին հրամանի, իր մարդկանցից հավաքեց կարծեցյալ-բանվորական դելեգացիա: Վերջինս «բախտ» ունեցավ ցարին ներկայանալիս՝ նիկոլայ II-ից լսել հետևյալ խրատները. «Գիտեմ, հեշտ չէ բանվորների կյանքը: Շատ բան պետք է լավացնել և բարեկարգել, սակայն համբերություն ունեցեք: Ինքներդ, խղճով ասացեք, հասկանում եք, վոր պետք է արգարացի լինել նաև դեպի ձեր տերերը և մեր արդյունաբերությունն պայմանները հաշվի առնել: Յեվ հուզված ամբոխով ինձ ձեր կարիքների մասին հայտնելը՝ հանցագործություն է»:

Հունվարի 9-ից հետո ցարի խոստումներին վոչ վոք այլևս չէր հավատում. «Յես հոգ կտանեմ բանվոր մարդկանց մասին, վորպեսզի նրանց կենցաղը բարելավելու ամեն հնարավոր բան արվի, և վորպեսզի այսուհետև ապահովվի որինական ճանապարհով արտահայտելու նրանց հասունացած կարիքները»:

Յեվ արդեն կատարյալ ծաղրով էին հնչում բանվորներին ուղղած ցարի հետևյալ խոսքերը. «Յես հավատում եմ բանվոր մարդկանց անկեղծ զգացմունքներին և նրանց դեպի ինձ՝ անհողողոզ նվիրվածության, ուստի և նրանց ներում եմ (1) իրենց մեղքերը»:

Սակայն դեպքերը շուտով ցույց տվին, «Ֆոկուսներ» (Շիդլովսկու) կոմիսիան վոր մտքերը հանգստացնելու համար բավական չէ սահմանափակվել բանվորի աշխատանքի պայմանների բարելավման մոլթ ակնարկներով: Գործադուլային շարժման ազդեցության տակ կառավարությունն ստիպված էր շուտափույթ ստեղծել բանվորական հարցի վերաբերյալ հատուկ կոմիսիա, սենատոր Շիդլովսկու նախագահությամբ, վորին զանազան գերատեսչությունների և ֆարբիկանտների ներկայացուցիչների հետ միասին՝ պիտի մասնակցեյին նաև բանվորների ընտրած ներկայացուցիչները:

Մենչևիկները և բոյլշևիկները դեպի այդ կոմիսիան  
ուսնեյին տարբեր մտածեցում: մենչևիկները հնարավոր էյին  
գտնում, վոր Շիդլովսկու կոմիսիայում բանվորներին ներ-  
կայացուցիչները կհանդիսանան «Ռուսաստանում բանվոր-  
րական մասսաների ժամանակավոր լայն կազմակերպման  
կորիզը» (Լ. Մարտով): Իսկ բոյլշևիկները — բացի բոյկո-  
տիստներին գրուսայից, վորոնք դեմ էյին ընտրութուններին  
վորեւե մասնակցության, — ազիտացիոն նպատակով, կողմ-  
նակից էյին նախապատրաստական կամուսնիայի մասնակ-  
ցության և վորոշեցին բոյկոտի յենթարկել կոմիսիան, բայց  
վոչ ընտրութունները: Ընտրութունները ցույց տվին սո-  
ցիալ-դեմոկրատիայի ազդեցության հակայական աճում՝  
400 ընտրվածներից 20% սոցիալ-դեմոկրատներ և 40%-ը  
ձախ արամազրված բանվորներ էյին: Փետրվարի 17-ին  
ընտրվածների ժողովում ձայների մեծամասնությամբ ըն-  
դունվեցին սոցիալ-դեմոկրատներին մշակած պահանջները:  
Սյդ պահանջները, ինքնին հասկանալիյե, կառավարության  
կողմից մերժվեցին: Փետրվարի 20-ին «պետական ֆոկուս-  
ներին» կոմիսիան, ինչպես անվանում էյին բանվորները,  
արձակվեց:

Հեղափոխության անցքերի դարգացման  
Գործադուլը հետևյալ ետապը հանդիսացավ Իվանովո-Վոզ-  
նեսենսկու գործադուլը, վոր սկսվեց մայիսին:  
«Կուսակցական կազմակերպությունը  
(բոյլշևիկներին), գրում ե ընկ. Բարենցովան —  
նախնական մեծ աշխատանք ե տարել գործադուլի նախա-  
պատրաստման համար: Սյդ հարցը ամիս ու կեսի ընթաց-  
քում քննվում եր մի շարք կուսակցական ժողովներում և  
վերջնականապես վճռվում ե գործարաններում ամենից շատ  
ժողովրդականություն վայելող անկուսակցական բանվոր-  
ների մասնակցությամբ մայիսի 11-ի ժողովում: Սյդ նույն  
ժողովում վերջնականապես մշակվում ե պահանջների ծրա-  
գիրը և նկատի առնվում լիազորների ցուցակը: Գործադուլի  
հենց առաջին օրից կուսակցական կոմիտեն ձգտում ե  
միավորել տնտեսական և քաղաքական պայքարը, պռանձ-

նապես ընդգծելով վերջինի նշանակութունը և ընդդիմա-  
դրութուն ցույց տալով այդ նշանակութունը նսեմացնող  
փորձերին: Պահանջները շարքի մեջ մտցվում ե կես՝ ընդ-  
հանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման  
վրա Սահմանադիր ժողով գումարելու մասին»:

Մայիսի 15, Տալի գետակի մոտ հավաքվեցին Իվանովո-  
Վոզնեսենսկու ձեռնարկութուններից մոտավորապես 35—40  
հազար բանվորներ, ուր և տեղի ունեցան Փարբիկների և  
գործարանների լիազորների ընտրութունները: 110 լիա-  
զորներից կազմվեց բանվորական պատգամավորների խոր-  
հուրդ, վորը սկսում ե դեկավարել գործադուլը: «Սյդ գրում  
ե Վ. Ս. Սմիրնովը — բանվորական պատգամավորների  
առաջին խորհուրդն եր Ռուսաստանում» («Стачечное дви-  
жение» в Иваново-Вознесенске в 1905 году):

Գործադուլային շարժումը Իվանովո-Վոզնեսենսկում  
ծանր ու համառ բնույթ ստացավ: Ժանդարմներից մեկը  
այսպես ե բնութագրում բանվորների տրամադրութունը,  
«ժողովուրդն ընդհանրապես հավատում եր պատգամավոր-  
ներին և հոետորներին»: Գործադուլավորների ազդեցու-  
թյան տակ գործարանատերերը հարկադրված էյին մաս-  
նակի գիջումներ անել: Բանվորական օրը կրճատվում ե 11-ից  
մինչև 10 ժամ: Մշտական բանվորների ուժեղը ավելաց-  
վում ե 15%-ով: Բանվորները ուժասպառութունից հարկա-  
դրված համաձայնվում են այդ պայմաններին: Գործադուլը,  
այսպիսով վերջանում ե յերկու ամսից հետո բանվորների  
վոչ լիակատար հաղթանակով, սակայն նա խորը հետք ե  
թողնում բանվորների գիտակցության մեջ: «Բանվորական  
պատգամավորների խորհրդի անդամները, գրում ե Յ.

<sup>1</sup> Իմիջի այլոց, Իվանովո-Վոզնեսենսկու խորհուրդը կարելի յե բան-  
վորական պատգամավորների խորհուրդներին շարքը դասել, ինչպես ընդ-  
գծում ե Պ. Գորինը, «բացառապես ֆորմալ տերմինալոգիայով, բայց  
վոչ ըստ գործնելության՝ 1905 թվի ձորհուրդներին գործնելության հիմ-  
նական և բնորոշ գծի նախորդման իմաստով»: 1905 թվի գարնանը դեռ  
չկար ընդհանուր հեղափոխական վերելք, ինչպես նույն թվի աշնանն  
եր, և Իվանովո-Վոզնեսենսկու բանվ. պատգ. խորհրդի հանցանքը չեր,  
վոր նա չկարողացավ զինված ապստամբության հարց առաջադրել:

Սամոյլովը, — չնայած խորհրդի գոյության վախճանին, գործադուլի ընդհատման մոմենտից սկսած, փաստորեն շարունակում են բանվորների ներկայացուցիչների դեր խաղալ: Բոլոր ֆաբրիկներում և գործարաններում բանվորները շարունակում են համարել նրանց իրենց պատգամավորներ և առաջվա նման վստահում են նրանց՝ ադմինիստրացիայի հետ ունեցած մանր կոնֆլիկտների ժամանակ հանդես գալ իբրև իրենց ներկայացուցիչներ, իսկ ադմինիստրացիան... հաշտվում էր այդ փաստի հետ»:

Յեվա առավել դասակարգային պայքարի խիստ ձև է ստանում հուլիսյան գործադուլը Լոձում (Լեհաստանում): Այստեղ, գործադուլի ժամանակ բարեկազմներ են բարձրացվում, բանվորները զինված ճակատամարտի յեն բռնվում գործի և վոստիկանության հետ Լոձի գործադուլը, Իվանովո-Վոզնեսենսկո գործադուլի նման, վերջանում է բանվորների մասնակի հաղթանակով՝ բանվորական

որը կրճատվում է 12 ժամից մինչև 10-ը: Շնոր զինված ճակատամարտերը, զրում է Լենինը Լոձի դեպքերի մասին, ավելի ու ավելի ակներև են դարձնում ժողովրդի վճռական զինված պայքարի անխուսափելիութունը ցարիզմի զինված ուժերի դեմ... Պրոլետարական պայքարը ընդգրկում է նոր, ավելի յետամնաց ուսյուններ և ցարի ուղիղչնիկներն աշխատում են հոգուտ հեղափոխության՝ տնտեսական ընդհարումները դարձնելով քաղաքական... կատարվող անցքերը, ընդարձակվող և սուր կերպարանք ստացող հեղափոխական շարժման տարերային պրոցեսը գալիս հանգում են ժողովրդական զինված ապստամբության լողունգին... ժողովուրդը այդ առանձին բռնկումների և կռիվների ընթացքում սովորում է հեղափոխություն կատարել: Մեր գործն է՝ յետ չմնալ մոմենտի խնդիրներից, կարողանալ միշտ ցույց տալ պայքարի ավելի բարձր աստիճանը, ոգտվելով անցյալի փորձից ու ցուցմունքներից»...

### V. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՆԻՔԸ

Սակայն, թված բոլոր գործադուլները, անկասկած, նսեմանում են հոկտեմբերի ընդհանուր քաղաքական գործադուլի թափի և հեղափոխական նշանակության հանդես: Ինչպես սովորաբար լինում է, նրան շարժառիթ հանդիսացավ «աննշան մի դեպք»:

Մոսկվայում Միտինի տպարանի գրաշարները պահանջեցին բանվորական որի կրճատում և 1000 տանի գործավարձի բարձրացում, հաշվելով նաև կետագրության նշանները: Ինչն համերաշխության, գործադուլը պաշտպանեցին Մոսկվայի մնացած տպարանները, իսկ հետո՝ «գործադուլը ծավալվեց». գործադուլ հայտարարեցին Մոսկվայի հացթուխները, իսկ Դոնի I գնդի կողակները գրոհով վերցրին Ֆիլիպովի հացագործարանը: Հոկտեմբերի 2-ին յերեք որով ընդհատեցին աշխատանքը Պետերբուրգի տպարանների գրաշարները: Կարճ ընդմիջումից հետո գործադուլը վերսկսվեց նոր, և ավելի ուժեղ թափով: Այս անգամ շարժման զուլան անցան յերկաթուղային բանվորները: «Սկսվեցին սրտի գալարումները», զրում էր սև-հարյուրակային որգան «Новое время»: Հոկտեմբերի 7-ին գործադուլ հայտարարեց Մոսկվա — Կազանի յերկաթուղին, հոկտեմբերի 9-ին՝ Մոսկվա — Կիև — Վորոնեժի, Մոսկվա — Բրեստի և մյուս յերկաթուղիները: Այդ նույն որը հեռագիրը տարածում է յերկաթուղային գործադուլի լողունգները՝ Սահմանադիր ժողով, ազատություններ, ամնիստիա, 8 ժամյա բանվորական որ:

Յերկաթուղականների շարժումը իր յետևից տարավ բոլոր տատանվողներին և ծավալվելով դարձավ ընդհանուր քաղաքական գործադուլ. կանգ առան գործարանները, դադարեցին բանկերը, բորսայում խուճապ սկսվեց, գործադուլին միացան անգամ դատարանի չինովնիկները և գիմնադիստներ:

«Փամիլուսներ չլսնայի»

Հոկտեմբերի 13-ին լույս տեսավ ցարական սատրապ Տրեպոլի հայտնի հրամանը:

«Պաշտոնական: Գեներալ-Նահանգապետի և Պետերբուրգի գարնիզոնի պետի ծանուցումը: Մայրաքաղաքի բնակչությունը հուզված է առաջիկա, իբր թե, մասնայական անկարգությունների լուրերով: Մայրաքաղաքում արդեն ձեռք են առնված անձի և գույքի պաշտպանություն չհասնելու, ուստի խնդրում եմ բնակչությանը տարածված լուրերին չհավատալ: Յեթե անգամ, վորոշ տեղերում փորձեր արվին անկարգություններ կազմակերպելու, ապա նման փորձերը կդադարեցվեն սկզբից և յեթ, հետևաբար չեն կարող լուրջ կերպարանք ստանալ: Զորքերին և վոստիկանությունը հրաման եմ արձակել անհապաղ ամենակտրուկ կերպով ձնշել ամեն մի նման փորձ, ամբոխի ընդդիմադրություն դեպքում՝ դատարկ համազարկներ չտալ ու փամփուռաներ չլսնայի (ընդգծումը մերն է): Պարտք եմ համարում այդ մասին նախազուշացնել մայրաքաղաքի բնակչության, վորպեսզի ամեն մի քաղքենի, վորը միանում է անկարգություններ անող ամբոխին, գիտենա, թե ինչ վտանգի յե յենթարկում իրեն: Իսկ մայրաքաղաքի շրջահայաց բնակչության՝ ծանր հետևանքներից խուսափելու համար, հրավիրում եմ կարգը խանգարող հավաքումներին չմիանալ»:

Ո՞վ եր Մոսկվայում գործադուլների գլուխ կանգնած:

«Հեղի խորհուրդը»

Սկզբում, մինչև յերկաթուղականների գործադուլ հայտարարելը, շարժման գլուխ եր կանգնած այսպես կոչված «հինգ գավառների պատգամավորների խորհուրդը»: Խորհրդում գերակշռող ազդեցություն ստացան մենշևիկները: Այդ բացատրվում է նրանով, վոր Մոսկվայի բոլշևիկները վստահությունամբ չեյին վերաբերվում ամեն մի լայն ընտրովի կազմակերպության և թերագնահատում էյին բանվորական պատգամավորների և խորհուրդների: Յերկաթուղականները չմտան «պատգամավորների խորհուրդ», վախենալով վորքրամասնություն կազմել սոցիալ-դեմոկրատների հանդեպ: Նրանք կազմակերպեցին

ինքնուրույն գործադուլային կոմիտեներ ըստ ծառայություն, արհեստանոցների, ճանապարհների, միավորելով նրանց հանգուցային գործադուլային կոմիտեներում: Բոլշևիկները յերկաթուղային բանվորների մեջ ունեյին իրենց «ս.դ. յերկաթուղային Միությունը», բայց գործադուլին տոն տվող ծառայողների շրջանում ամենամեծ ժողովրդականություն վայելում էյին եսերները և ազդիկալները, վորոնք մտնում էյին Միությունների միություն ինտելիգենտական, կիսապրոֆեսիոնալ, կիսաքաղաքական կազմակերպության մեջ: Յերկաթուղականները գործադուլային կոմիտեներգրավեցին մեխանիկական գործարանների և ստալծագործական ֆաբրիկաների բանվորների ներկայացուցիչներին, նույնպես և քաղաքային ծառայողների և Մոսկվայի քաղաքային ուսուցիչների տեխնիկների և երկայացուցիչներին: Տեքստիլ և մի շարք այլ ձեռնարկություններում գործադուլները տարվում էյին գործադուլային կոմիտեյի ազդեցությունից անկախ, բոլշևիկներին անմիջական ղեկավարությունամբ: Ընդհանրապես, հոկտեմբերյան որերին Մոսկվայում չհաջողեց ստեղծել ինչպես միասնական գործադուլային կենտրոն, նույնպես և բանվորական պատգամավորների Խորհուրդ:

Պետերբուրգում, հակառակ Մոսկվայի

Բանվորական հոկտեմբերյան գործադուլն սկսվելուց անպատգամավոր միջապես հետո, շարժումը գլխավորեց տարերային ձևով կազմակերպված բանվորական պատգամավորների խորհուրդը: Մենշևիկները, առաջադրելով «Բանվորական կոմիտեյի» կազմակերպման նախադիծը, հեղինակներից մեկի (Կուզովյովի) արտահայտությունամբ՝ միայն «ընդառաջում են մասսաների արամադրություն»:

Հոկտեմբերի 13-ին Խորհուրդն արդեն կազմակերպված եր: Խորհրդի նախագահ ընտրվեց սկզբունքներից գուրկ Նոսար-Նրուսատլը, իսկ նախագահի ողջական՝ Լ. Տրսցկին, վորն աշխատում եր մենշևիկների հետ համերաշխ:

Բոյլը կիկները խորհրդի մեջ փոքրամասնություն էլին կազմում և ծայրահեղ ձախ ու պոպուլիզիայի դերում էլին: Իսկ եսերները հիմնական հարցերում մենշևիկների հետ միասին՝ գնում էլին բոյլը կիկների դեմ: Սոցիալ-դեմոկրատիայի թշնամական տարրերի և հատկապես խորհրդի պատահական խմբավորումների վրա հիմնվող Նոսարի ազդեցությունը չեզոքացնելու ձգտումը նախադրյալներ ստեղծեց միավորելու բոյլը կիկների և մենշևիկների ուժերը այսպես կոչված «Ֆեդերատիվ խորհրդի» մեջ, ուր մտնում էլին Կենտրոնական Կոմիտեյի (բոյլը կիկների) և Կազմակերպչական Հանձնաժողովի (մենշևիկների կենտրոնի) ներկայացուցիչները: Նույնպես «Ֆեդերատիվ խորհուրդ» ստեղծվեց և համարյա թե նույն ձևով նաև Մոսկվայում: Պիտերի բոյլը կիկները Ֆեդերատիվ խորհրդում ձեռք չբերին դերակազմող ազդեցություն: Ընդհակառակը, Մոսկվայում «Ֆեդերատիվ խորհուրդը ամբողջությամբ հեղափոխական գիծ էր տանում, այսինքն՝ մենշևիկները անկարգություններ էլին անում և առանց լուրջ դիմադրություն հետևում էլին բոյլը կիկներին» („ПЯТЫЙ ГОД“, Сборник Московского Истпарта).

Պիտերի խորհրդի մենշևիկյան ղեկավարությունը արտահայտվում է հեղափոխության հետագա բոլոր ետապներում և դրա հետևանքով հոկտեմբերյան գործադուլը՝ ինչպես մենք կտեսնենք ստորև, չոգտագործվեց մինչև վերջը:

Գործադուլից ամենայն ակներևություններ հետևում էր զինված ապստամբության անհրաժեշտությունը: Բոյլը կիկները հարցը հենց այդպես էլ դնում են:

«Մենք քաղաքական գործադուլ ենք հայտարարում՝ կարգում ենք բոյլը կիկյան այդ շրջանի թուղիկներից մեկում, պահանջելով անհապաղ ազատել քաղաքական բանտարկյալներին, և հայտարարում ենք, Վոր պատրաստ ենք պայքարել մինչև վերջը՝ ինքնակալությունը միանգամայն տապալելու և դեմոկրատիկ հանրապետություն հաստատելու համար:

Մենք ընդունում ենք, Վոր դրան կարելի չէ հասնել ժողովրդական զինված ապստամբություն միջոցով միայն: Ուստի մենք կոչ ենք անում բոլոր բանվորներին, վորոնք հասկացել են այդ, համախմբվել կուսակցական հեղափոխական կոմիտեներին շուրջը վերահաս զինված ապստամբությունը նախապատրաստելու և ղեկավարելու համար»:

Իշխանությունն սկսում է հավասարակշռությունը կորցնել: Տրեպոլի հրամանը անուժ հանդիսացավ: Գործադուլը հաղթականորեն շարունակում է ծավալվել: Յերկրի բոլոր կենտոնակ կենտրոնները կազմալուծվում են: Բերլինի բորսայում հոկտեմբերի 15-ին 1904 թվի պետական փոխառությունը ընկավ 2,5%, իսկ ուսական արտաքին առևտրի բանկի ակցիաները՝ 9 1/4 տոկոսով, Հարկավոր էր վճարակաշարեն դիմել ծայրահեղ միջոցներին:

Այդ ժամանակ մինիստրների կոմիտեյի Բուլիգինյան նախագահ Վիտտեն առաջարկեց ցարին դումայից միջ-Պետական Դումա գումարելու և «ազատուչելի վիսսեյի թյուններ» շնորհելու մանիֆեստի նախագուման գիծը, վորովհետև «բուլիգինյան դումայի» նախկին փորձը հոկտեմբերյան գործադուլից հետո պետք էր համարել տապալված: Պեսլը և ասել, Վոր դեռ 1905 թվի փետրվարին, գործադուլների հակայական հորձանքից հետո, ցարը հրամայել էր այն ժամանակվա ներքին գործերի մինիստր Բուլիգինին «մշակել վստահություն վայելող անձանց որինագծերի մշակման և քննություն մասնակցելու հարցը»: Հոկտեմբերյան գործադուլի փոթորիկն այդ նախագիծը պատմության աղբակույտը ձգեց: Շարժումը հասավ նոր աստիճանի և չբավարարվեց պոչատ ակֆորմներով:

Ցարը սակայն շարունակում էր դանդաղել և հայտարարեց, Վոր մինչև վորոշում ընդունելը «ադոթեն աստուն»:

Վիտտեյի հետ ցարի ունեցած խոսակցութեան հենց հաջորդ առավոտյան կանգ առաւ պետերբուրգյան հանգուցցի վերջին ճուղը — ֆինլանդական յերկաթուղին:

Հոկտեմբերի 17-առավոտից աշխատանքները ընդհատեցին պետական հիմնարկների ծառայողները, Պետակա՝ Բանկի և ֆինանսների մինիստրութեան և սենատի վիճանատների չինոյիսիկները, գործադուլին միացան անգամ արքունական բալետի դերասանները:

Չնայած վոստրիկանութեան ընդդիմադրութեան, Պիտերի բանվորական պատգամավորների թորհուրդը գումարվեց հենց նույն օրը և ընդգծելով գործադուլի խոշոր հաջողութունները, վճռեց պայքարը շարունակել մինչև վերջ, սակայն թորհուրդը ապստամբութեան կոչ չարարի:

«Ներկա ընդհանուր գործադուլը կարող է վճռական հարվածի հասցնել տապալվող ինքնակալութեանը», ասվում է թորհուրդի բանաձևում:

Պիտերի թորհուրդը ղեկավարող մենշևիկները ըստ ելութեան անգործութեան ելին մատնված, Նրանց վոչ բավական վճռողական և վոչ բավական հեղափոխական քաղաքականութեան բացասական հետևանքները շատ շուտ յերևան յեկան: Ճգնաժամը

Մոսկվայում վրա հասավ հոկտեմբերի 17-ին, հենց նույն օրը, յերբ գործադուլը իր լարվածութեան ամենաբարձր կետին եր հասել: Հանդես յեկան առաջին գործադուլային կոմիտեները — բանվորների արամադրութեան սկսում է խիստ կերպով ընկնել և գործադուլը դեպի անկում թեքվել: Այդ միանգամայն բնական է, քանի վոր գործադուլը չհասավ ինքնակալութեան դեմ զինված ապստամբութեան: Պետք է ընդգծել, վոր բավականաչափ ուժեղ չեղ գործադուլի ղեկավարութեանը: Բոյլձեիկները չափազանց թույլ ելին շարժումն ընդգրկելու և նրան ճիշտ ընթացք տալու համար, մինչդեռ մենշևիկները գիտակցորեն ձգձգում

եյին՝ ցարիզմի դեմ զինված բաղխման մոմենտը և ջլատում բանվոր դասակարգի ուժերը:

Հոկտեմբերի 17-ին ցարիզմը սրտի կսկիւն հոկտեմբերի 17 ծով համաձայնվում է զիջումների և վճռում մանիֆեստը և «մանյովր անել»: Հոկտեմբերի 17-ի մանիֆեստում ցարը խոստանում է, «անձի

իրական անձեռնմխելութեան, խղճի, խոսքի, ժողովների և միութեանների ազատութեան հիմունքներով բնակչութեանը քաղաքացիական ազատութեան անխախտ սկզբունքներ շնորհել» և, «իբրև անխախտ կանոն՝ սահմանել, վոր պետք է վոչ մի որեւէ ուժի մեջ չմտնի առանց պետական դումայի հավանութեան և վորպեսզի ապահովվի մեր կողմից կարգված իշխանութեանների գործողութեանների որինակալութեան վրա հսկողութեան խնդրում ժողովրդի ընտրյալների և մասնակցութեան հնարավորութեանը»: Այս մանյովրով ցարիզմը ամբացնում է իր խիստ խախտված դիրքը: Բուրժուազիան և բուրժուական ինտելիգենցիան այդ մոմենտից սկսած վերջնականապես անցնում են հակահեղափոխական բանակը. մանիֆեստը խոստանում էր նրանց այն, ինչ վոր ձգտում էին նրանք ձեռք բերել: Բանվորներին խաբել, իհարկե, այնքան էլ դյուրին չեք, բայց բանվորներին ընդդիմադրելու համար կառավարութեանը պատրաստի ուներ սվիններ, գնդացիներ, «սև հարյուրյակ» (կազմալուծված տականքների խուլիգանացած տարրեր):

Հոկտեմբերի 17-ին սկսված պայքարը զարգացման նոր շրջան է մտնում:

«Հեղափոխական պրոլետարիատը քալեցիկը հոկտեմբերի 17-ի ջին մեծ հաղթանակին, գրում է Լենինը, մանիֆեստի նա պետք է այժմս լայնացնի ու խորացնի մասին հեղափոխութեան բազան, դա տարածելով դուրս: Գյուղացիութեանը բարձրացնել մինչև ազատութեան գործի գիտակից պաշտպանութեանը, գյուղացիութեան ոգտին ամենալուրջ միջոցներ պահանջել, նախապատրաստել գյուղական այն շարժումը, վորը

քաղաքի առաջավոր պրոլետարիատի հետ միասին ջախջախի վերջնականապես ինքնակալութունը, ձեռք բերի լիակատար ու իսկական ազատութունը, — ահա այս է հիմա Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի հերթական խնդիրը: Հեղափոխութեան հաջողութունը կախված է պրոլետարիատի և գյուղացիութեան այն մասսաների քանակից, վորոնք վտառի կելնեն նրան պաշտպանելու և այն հաջող կերպով վերջացնելու համար: Հեղափոխական պատերազմը մյուս պատերազմներից տարբերվում է նրանով, վոր նա իր գլխավոր ռեզերվը ձեռք է բերում իր թշնամու յերեկվա դաշնակիցների բանակից, ցարիզմի յերեկվա կողմնակիցներից կամ այն մարդկանցից, վորոնք կուրորեն գնում են ցարիզմի յետևից և համառուսական քաղաքական գործադուլի հաջողութունը մուժիկի մտքին ու սրտին ավելի բան կասի, քան բաղամտեսակ մանիֆեստների և որենքների հակասական խոսքերը»:

Հոկտեմբերի 17-ից անմիջապես հետո գրված այդ միևնույն՝ „Первая победа революции“ հոդվածում Վ. Ի. Լենինը տարբերում է 1905 թվի հետևյալ ետապները.

«Ռուսական հեղափոխութունը հենց նոր էր սկսել զարգանալ, յերբ ամբողջ քաղաքական ավանսցեհան՝ ինչպես այդ մեկ տարի առաջ, գրավել էր լիբերալ բուրժուան»:

Հեղափոխութունը վտառի կանգնեց, յերբ հունվարի 9-ին հանդես յեկավ քաղաքի բանվոր դասակարգը:

Հեղափոխութունը առաջին հաղթանակը տարավ, յերբ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների պրոլետարիատը մի մարդու նման վտառի յեկավ և թոթափեց ցարական գահը, վորից այնպես անհաշիվ թշվառութուններ ելին կրել բոլոր ժողովուրդները և ամենից շատ՝ բոլոր ժողովուրդների աշխատավոր դասակարգերը:

Հեղափոխութունը թշնամուն վերջնականապես կջախջախի և յերկրե յերեսից կվերացնի արյունարբու ցարի գահը, յերբ բանվորները մեկ ել վտառի կելնեն և իրենց յետևից կտանեն գյուղացիութունը»:

Հեղափոխութեան առաջին հաղթանակի հետ միաժամանակ ընդհանուր քաղաքական գործադուլի վախճանը կան գործադուլը՝ գլխավորապես մենշևիկների և եսերների շնորհիվ՝ թուլացավ և սահմանափակվեց: Այդ պատճառով հեղափոխութեան հաղթանակն անկայուն էր, նա ժամանակին չողտագործվեց զինված ապստամբութուն կազմակերպելու համար:

Այդ հանգամանքը հարկավոր է ընդգծել ևս առավել նրա համար, վոր գործադուլների հորձանքը հոկտեմբերին հասավ մինչ այդ չտեսնված բարձրութեան: Կ. Սիդորովը հոկտեմբերյան գործադուլի թափը վորոշում է 500 հազար մարդով և գտնում է, վոր այդ թիվը բնավ լրիվ չէ: Ա. Շեստաֆովը գալիս է այն յեզրակացութեան, վոր հոկտեմբերյան գործադուլին մասնակցել են մինչև 1,700,000 բանվորներ և ծառայողներ:

«Քաղաքական շարժման այդպես միաժամանակ և այդքան մասսաների ընդգրկումը, վոր տեղի ունեցավ հոկտեմբերյան գործադուլի որերին 2-3 շաբաթվա ընթացքում, մինչ այդ Ռուսաստանում տեսնված չէր: Յեթե այդ կադրերին ավելացնենք նաև ուսանող յերիտասարդութունը, ապա համարձակորեն կարող ենք ասել, վոր 1905 թվի հոկտեմբերյան որերին յերկու միլիոնից ավելի մարդ էր փողոց դուրս յեկել հեղափոխութեան կարմիր դրոշի տակ» (А. Шестаков. „Октябрьская стачка 1905 г.“):

Յեվ ահա այդ իր նշանակութեամբ միանգամայն բացարիկ գործադուլը ճնշվում է առանց զինված ապստամբութեան փորձի:

Սկզբում «տատանվեց» Մոսկվան, իսկ հետո և Պիտերը: Վիտտեյին հաջողվեց գործադուլը դադարեցնելու պայմանները համաձայնեցնել գործադուլային կոմիտեյի ներկայացուցիչներին հետև հոկտեմբերի 22-ի առավոտյան 11 ժ. 59 րոպ. Պետերբուրգի յերկաթուղային հանգույցը աշխատանքը վերսկսեց: Բայց չնայած գործադուլի լիկվիդացիային, գործադուլային պայքարի պրոցեսում և սկզբում գլխա-

քաղաքի առաջավոր պրոլետարիատի հետ միասին ջախջախի վերջնականապես ինքնակալությունը, ձեռք բերի լիակատար ու իսկական ազատություն, — ահա այս է հիմա Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի հերթական խնդիրը: Հեղափոխության հաջողությունը կախված է պրոլետարիատի և գյուղացիության այն մասսաների քանակից, վորոնք վոտքի կելնեն նրան պաշտպանելու և այն հաջող կերպով վերջացնելու համար: Հեղափոխական պատերազմը մյուս պատերազմներից տարբերվում է նրանով, վոր նա իր գլխավոր ռեզերվը ձեռք է բերում իր թշնամու յերեկվա դաշնակիցների բանակից, ցարիզմի յերեկվա կողմնակիցներից կամ այն մարդկանցից, վորոնք կուրորեն գնում են ցարիզմի յետևից և համառուսական քաղաքական գործադուլի հաջողությունը մուժիկի մտքին ու սրտին ավելի բան կասի, քան բազմատեսակ մանիֆեստների և որենքների հակասական խոսքերը»:

Հոկտեմբերի 17-ից անմիջապես հետո գրված այդ միևնույն՝ „Первая победа революции“ հոդվածում Վ. Ի. Լենինը տարբերում է 1905 թվի հետևյալ ետապները.

«Ռուսական հեղափոխությունը հենց նոր եր սկսել զարգանալ, յերբ ամբողջ քաղաքական ավանսցենան՝ ինչպես այդ մեկ տարի առաջ, գրավել եր լիբերալ բուրժուան:

Հեղափոխությունը վոտքի կանգնեց, յերբ հունվարի 9-ին հանդես յեկավ քաղաքի բանվոր դասակարգը:

Հեղափոխությունը առաջին հաղթանակը տարավ, յերբ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների պրոլետարիատը մի մարզու նման վոտքի յեկավ և թոթափեց ցարական գահը, վորից այնպես անհաշիվ թշվառություններ եյին կրել բոլոր ժողովուրդները և ամենից շատ՝ բոլոր ժողովուրդների աշխատավոր դասակարգերը:

Հեղափոխությունը թշնամուն վերջնականապես կջախջախի և յերկրի յերեսից կվերացնի արյունաբբու ցարի գահը, յերբ բանվորները մեկ ել վոտքի կելնեն և իրենց յետևից կտանեն գյուղացիությունը»:

Հեղափոխության առաջին հաղթանակի հետ միաժամանակ ընդհանուր քաղաքագործադուլի վայսմանը կան գործադուլը՝ գլխավորապես մենշևիկների և եսերների շնորհիվ՝ թուլացավ և սահմանափակվեց: Այդ պատճառով հեղափոխության հաղթանակն անկայուն եր. նա ժամանակին չոգտագործվեց զինված ապստամբություն կազմակերպելու համար:

Այդ հանգամանքը հարկավոր է ընդգծել ևս առավել նրա համար, վոր գործադուլների հորձանքը հոկտեմբերին հասավ մինչ այդ չտեսնված բարձրության: Կ. Սիդորովը հոկտեմբերյան գործադուլի թափը վորոշում է 500 հազար մարդով և գտնում է, վոր այդ թիվը բնավ լրիվ չէ: Ա. Շեստակովը գալիս է այն յեզրակացության, վոր հոկտեմբերյան գործադուլին մասնակցել են մինչև 1,700,000 բանվորներ և ծառայողներ:

«Քաղաքական շարժման այդպես միաժամանակ և այդքան մասսաների ընդգրկումը, վոր տեղի ունեցավ հոկտեմբերյան գործադուլի որերին 2-3 շաբաթվա ընթացքում, մինչ այդ Ռուսաստանում տեսնված չէր: Յեթե այդ կադրերին ավելացնենք նաև ուսանող յերիտասարդությունը, ապա համարձակորեն կարող ենք ասել, վոր 1905 թվի հոկտեմբերյան որերին յերկու միլիոնից ավելի մարդ եր փողոց դուրս յեկել հեղափոխության կարմիր դրոշի տակ» (А. Шестаков. „Октябрьская стачка 1905 г.“):

Յեվ ահա այդ իր նշանակությամբ միանգամայն բացառիկ գործադուլը ճնշվում է առանց զինված ապստամբության փորձի:

Սկզբում «տատանվեց» Մոսկվան, իսկ հետո և Պիտերը: Վիտտեյին հաջողվեց գործադուլը դադարեցնելու պայմանները համաձայնեցնել գործադուլային կոմիտեյի ներկայացուցիչների հետ և հոկտեմբերի 22-ի առավոտյան 11 ժ. 59 րոպ. Պետերբուրգի յերկաթուղային հանգույցը աշխատանքը վերսկսեց: Բայց չնայած գործադուլի լիկվիդացիային, գործադուլային պայքարի պրոցեսում և սկզբում գլխա-

Իս նահանջ եր «ձախ ֆուգիերի» թմբկահարություն տակ: Այդ այնքան ել հասկանալի չե՞ր մասսաներին, վորովհետև մենշևիզմը այդ ժամանակ իր բուրժուական էյուլթյունը թագցնում եր հեղափոխական ճարտասանության վարագույրի տակ: Պիտերի Սորհրդի դերը նախորոշվում եր նրանով, վոր գլխավորվում եր «ձախ» մենշևիկներով: Բոյլշևիկները Սորհրդի վերջնական գնահատականը տվին մի միայն նոյեմբերին, Լենինի գալուց հետո: Սակայն բոյլշևիկները մենշևիկներից տարբերվում էյին նրանով, վոր հեղափոխության ամբողջ ընթացքում վորոշակի դնում էյին զինված ապստամբության հարցը:

Հոկտեմբերի 18 շարժման միացան մի քանի զորամասեր: Համալսարանում կայացավ զինվորականների հոյակապ միտինգ, 14-րդ նավատորմի կազմի նավաստիները այդ նույն օրը զորանոցների պատահաններից, ուր նրանց փակել էյին շարժմանը մասնակցելու վտանգը կանխելու համար, գոռում էյին.

«Մենք ժողովրդի հետ ենք, բացեք դռները ու մենք կգնանք ձեզ հետ»:

Բոյլշևիկների Պետերբուրգի Կոմիտեն այդ անցքերի հետևանքով կոչ ե անում պատասխամբության զինված ապստամբության: «Միայն զինված ապստամբությունը և ժամանակավոր հեղափոխական Կառավարությունը, միայն ժողովրդական հեղափոխական բանակը կազատի ձեզ այդ սարսափելի շայկայից... Իսկ հիմա, ընկերներ, զենք, զենք, ամենից առաջ — զենք և ժողովրդական միլիցիա: Թող այդ լինի մեր մարտակոչը, մեր գլխավոր հոգսը: Կորչի վոստիկանությունը և ցարական զորքը»!

Իսկ Սորհուրդը՝ մենշևիկների ազդեցության տակ ապստամբության լողունգը և «ձեռք բեր զենք» լողունգը համարում եր անհամապատասխան և անժամանակ: Սորհուրդը պահանջում եր հեռացնել ամբողջ վոստիկանությունը վերից վար, հեռացնել քաղաքից զորքերը, քաղաքական ամենիստիա, Սահմանադիր ժողովի գումարում և այլն, բայց

նա այդ նպատակին հասնելու համար ձանադարհ չե՞ր ցույց տալիս, յի՞թե չհաշվենք ընդհանուր գործադուլը:

«Ինքնակալ կառավարությունը՝ սեղմված Ռուսաստանի պրոլետարիատի ընդհանուր քաղաքական գործադուլի յերկաթե ճիրաններում, համաձայնվեց զիջումներին», — ընդգծում ե Սորհուրդը — բայց գործադուլը ինքնուստինքյան «առանց և Սորհուրդը — բայց գործադուլը ինքնուստինքյան «առանց հեռանկարի, առանց ակտուալ խնդրի» (Պ. Գորին), դատապարտված եր տապալման: Բոլոր նվաճումները վոչինչ էին առանց ինքնակալության կործանման: Մասսաները դրա մեջ կարող էյին համոզվել «մամուլի ալտոթյան և ըստմայա բանվորական որվա» որինակներով: Հոկտեմբերի 17-ի «բարձրագույն» մանիֆեստը կարողացավ լույս տեսնել միայն «Правительственный Вестник» և «Свет» սև հարյուրակային լրագրերում (վերջինս դրա համար բանվորների կողմից ավերման յենթարկվեց): Տպարանների բանվորները հրաժարվում էյին տպագրել ցարական փաստաթուղթը, այդ նույն ժամանակ ազատ տպվում էյին հեղափոխական թուղթիկները և լույս եր տեսնում «Известия Совета» լրագիրը: Սակայն այդ դրությունը յերկար չտևեց: Հակահեղափոխության հաղթանակը լիկվիդացիայի յենթարկեց «մամուլի ազատությունը»: Նույնչափ ել ապարդյուն անցավ 8 ժամյա բանվորական որվա համար յեղած պայքարը:

«Պետերբուրգի պրոլետարիատի մարտական լողունգը, ասում եր Լենինը, այն ժամանակ 8 ժամյա բանվորական օրն եր և զենք»: Անընդհատ աճող բանվորական մասսաների համար ակներև եր, վոր հեղափոխության բողոքը կարող ե վճռել և կվճռի միմիայն զինված պայքարը:

## VI. ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ Ե ԱՆՑՆՈՒՄ

Նոյեմբերյան գործադուլը շտաոի նավաստիների զինվորական ապստամբության ճնշման, հեղափոխության հսկայական ալիքը տարածվեց բովանդակ

յերկրում նոյեմբերին: Կառավարութիւնը հարձակման եր  
անցնում. Լեհաստանը հայտարարված եր պատերազմական  
դրութեան մեջ. ապստամբված նավաստիներն մահապա-  
տիժ եր սպանում:

Պետերբուրգի բանվորներն, իրենց հերթին, պահանջում  
եյին անցնել հակահարձակման: Սորհուրդն այդ տրամա-  
դրութիւնը արտահայտել է նոյեմբերի 1-ին ընդունված բա-  
նաձևի մեջ.

«Կառավարութիւնը շարունակում է քայլել դիակներէ  
վրայով:

Նա դաշտային դատարանի յի հանձնում իրենց իրավութե-  
ներն ու ժողովրդի ազատութիւնը պաշտպանելու համար  
ապստամբված Կրոնշտատի բանակի և նավատորմի համար՝  
ձակ զինվորներին: Նա ճնշված Լեհաստանի պարանոցին և  
ձգել պատերազմական դրութեան ողակը: Բանվորական  
պատգամավորների Սորհուրդը կոչ է անում Պետերբուրգի  
հեղափոխական պրոլետարիատին՝ իր անարկու ուժը, ընդհա-  
նուր քաղաքական գործադուլի և բողոքի ընդհանուր միտինգ-  
ների միջոցով արդեն ապացուցած, իրենց յեղբայրական հա-  
մերաշխութիւնը յերևան բերել Կրոնշտատի հեղափոխական  
զինվորների և Լեհաստանի հեղափոխական պրոլետարներէ  
նկատմամբ: Վաղը, նոյեմբերի 2-ին, ցերեկվա ժամը 12-ին  
Պետերբուրգի բանվորները ընդհատում են իրենց աշխա-  
տանքը՝ «կորչեն դաշտային դատարանները! կորչի մահապա-  
տիժը, կորչի պատերազմական դրութիւնը Լեհաստանում և  
ամբողջ Ռուսաստանում» լողունգներով):

Կոչը զարմանալի հաջողութիւն ունեցավ: Ն յեմբերյան  
գործադուլն իր չափերով գերազանցեց անգամ հոկտեմբեր-  
յանը: Վիտտեն վորձում է շարժումը կանգնեցնել «յեղբայր  
բանվորներին» ուղղած կոչով և խնդրում է խնայել իրենց  
կանանց և յերեխաներին. «ժամանակ տվեք, — գրում էր  
Վիտտեն, — այն ամենը, ինչ հնարավոր է, կարվի ձեզ համար»:

Սորհուրդը Վիտտեյին պատասխան է ուղարկում, վորի  
մեջ հայտնում է իր աներևակայելի զարմանքը ցարակա-  
մինիսարի անպատկառութեան առթիվ, վորն իրեն թույլ է

տալիս հետերբուրգի բանվորներին «յեղբայրներ» անվանել  
և ընդգծում է, վոր «ցարական մինիստրների բարյացակամ  
վերաբերմունքի կարիքը չի զգում» ու պահանջում է «ժո-  
ղովրդական կառավարութիւն» ընդհանուր, հավասար, ուղիղ  
և զարտնի ընտրական իրավունքի հիման վրա»:

Գործադուլը կառավարութեանը հարկադրեց զիջումներ  
անել. Լեհաստանում վերացվում է պատերազմական դրու-  
թիւնը, Կրոնշտատում նավաստիները ազատվում են ուղ-  
մա-դաշտային դատարանի իրավասութիւնից և նրանց պա-  
րանոցից կախված ողակը քակվում է հարյուր հազարավոր  
պրոլետարների ձեռքով:

Նոյեմբերի 5-ին գործադուլը վերջացավ հենց այն ժա-  
մանակ, յերբ նա առաջին անգամ միաձուլեց բանվորների  
և զինվորականների շարքերը, ճիշտ է, թեև վոչ բավակա-  
նաչափ ամուր և լիակատար կերպով:

Պիտերի Սորհրդի գործնեյութեան այդ  
Ջինվորներին շրջանի հուշարձանը հանդիսանում է զին-  
ուղղված վորներին ուղղված մանիֆեստը:  
մա նիֆեստը Մանիֆեստում ասված էր.

«Բանակի և նավատորմի յեղբայր զին-  
վորներ! Դուք հաճախ խորհուրդ և աջակցութիւն ստանալու  
համար դիմում եք մեզ՝ բանվորական պատգամավորների  
Սորհրդին: Յերբ ձերբակալեցին Պրեբորաժենսկի գնդի զին-  
վորներին՝ դուք մեր ոգնութեանը դիմեցիք: Յերբ ձերբա-  
կալեցին Ռադմա-էլեքտրոտեխնիքական դարոցի աշակերտ-  
ներին՝ դուք մեր աջակցութեանը դիմեցիք: Յերբ նավա-  
տորմների կազմերը պահակախմբի հակողութեան տակ վտար-  
վում եյին Պետերբուրգից Կրոնշտատ, նրանք մեր պաշտ-  
պանութիւնն եյին խնդրում: Գնդերի մի ամբողջ շարան  
իրենց պատգամավորներն են ուղարկում մեզ մոտ:

Յեղբայր-զինվորներ! դուք արդարացի յեք: Դուք բանվոր  
ժողովուրդից բացի ուրիշ պաշտպանութիւնն չունեք. յերբ  
բանվորները ձեզ չպաշտպանեն, ձեզ փրկութիւնն չկա: Նդո-  
ված գորանոցը խեղդամահ կանի ձեզ:



խնդրարկուներ, միջնորդներ, գանգատվողներ, դժգոհներ, ալելի հաճախ բանվորներ, ծառաներ, գործակատարներ, գյուղացիներ, զինվորներ, նավաստիներ... Վրասնք միանգամայն ֆանտաստիկ պատկերացում ունեյին Սորհրդի ուժի ու մեթոդների մասին: Որինակի համար՝ Ռուս-յապոնական պատերազմին մասնակցած մի կույր ինվալիդ, ամբողջովին խաչերի ու մեղալների մեջ կորած, գանգատվում էր դառը կարիքից ու խնդրում, վորպեսզի Սորհուրդը «ճնշում գործ դնի հենց նրա վրա» (այսինքն ցարի)... («1905 թ.»):

Ինքնակալութունը ժամանակավոր կառավարութունն էր անվանում Սորհուրդը և հարկադրված էր առժամանակ հաշտվել նրա գոյութան հետ:

Նոյեմբերին, ինչպես մենք տեսանք, կառավարութունը... հարձակման և անցում, բայց նոյեմբերյան գործադուլի ուժից սարսափած, նահանջում է: Ցարիզմը շարունակում է գրոհի պատրաստվել և Սորհուրդն իր հերթին հարկադրված էր ավելի վճռական զիջք ընդունել, թեև չի նախապատրաստում անմիջական զինված ապստամբություն: Մոտենում է պայքարի վերջին արյունալից գործողութունը: Վստիկանութունը նոյեմբերի 26-ին կալանավորում է Սորհրդի նախագահ Սրուստալև-Նոսարին:

Դեկտեմբերի 2-ին Սորհուրդը հավանութուն է տալիս «Ֆինանսական մանիֆեստի» բնագրին, վոր բացարձակ մարտակոչ էր ինքնակալությանը: Սորհուրդը կոչ էր անում.

«Հրաժարվել արքունական գանձարանի յետգնման և այլ վճարումները մուծելուց\*, բոլոր գործարք»

\* Արտասահմանյան բուրժուազիան ցարի կառավարութանը դրամ էր մատակարարում մեծատոկոս փոխառությամբ, ցարական ինքնակալության թևերի տակ և նրա ոժանդակությամբ՝ ոտարյերկրյա կապիտալիստները ահազին շահեր էյին ստանում ուսական յերկրից. բացի փոխառվութունների համար վճարվող վորոշ բարձր տոկոսներից, նրանք գործարաններ էյին հիմնում Ռուսիայում, ոգուտ քաղելով ուսու բանվորի ծայրահեղ և ժամազին աշխատանքից: Նրանք վաճառում էյին Ռուսիայում երենց ապրանքները բարձր գներով և մեծամեծ օգուտներով: Ահա թե նրանք ինչու էյին վախենում հեղափոխութունից, վորը կարող էր զրկել

ների դեպքում, աշխատավարձի և ուժիկի վճարումները պահանջել վոսկով, իսկ հինգ ուսուրուց պակաս գումարները — լիարժեք հնչյուն դրամով: Յետ վերցնել խնայողական գանձարկղներից և Պետական բանկից ավանդները, պահանջելով վորպեսզի ամբողջ գումարը վճարվի վոսկով»:

«Ֆինանսական մանիֆեստը» բացի դրանից կոչ է անում.

«Տապալել կառավարութունը, խլել նրա վերջին ուժերը»:  
Մանիֆեստի ուժն ակներև էր. խնայողական գանձարկղները մեծվող ավանդները դեկտեմբերի ընթացքում զգալի չափով պակասում են, մինչդեռ ավանդների պահանջը ուժեղ կերպով ավելանում է: Կառավարութունը, ընդհանուր առմամբ, այդ ամսվա ընթացքում կորցնում է մինչև 100 միլ. ուսուրի:

Սորհրդի հետ հաշիվները մաքրելու անմիջապես շարժառիթը ծառայեց «մանիֆեստը», վորը դնում էր զինված ապստամբու-

նրանց այդ կեղեքիչ յեկամուսներից: Բացի այդ, ուսու ինքնակալության մեջ նրանք տեսնում էյին նեցուկ ընդդեմ բանվորական հեղափոխութունների՝ Սրեմուտցու, նրանք շատ լավ էյին հասկանում, վոր յեթե ուսու բանվորներն ու գյուղացիք հաղթեն, այդ հաղթութունը կբարձրացնի Սրեմուտցան Յեվրոպայի բանվորների հեղափոխական վոզին և այնտեղ էլ կբռնկեն հեղափոխութուններ կապիտալի դեմ, սոցիալիստական հեղափոխութուններ: Բայց հեղափոխության սկզբում ոտարյերկրյա կապիտալիստները — բանկիրները, չեյին վստահանում ցարին նոր փոխառվութուն մատակարարել հեղափոխության դեմ կոպիտ համար, իսկ յեթե հանկարծ ինքնակալութունը գլուխ բանվորի կոչվի և գյուղացու տրեխի աքացուց: Այն ժամանակ չէ վոր գուր տեղը ծախված՝ կկորչեն փողերը: Բայց յերբ բուրժուազիան թիկունքը դարձրեց դեպի հեղափոխութունը և և անցավ ցարի կողմը, այն ժամանակ ոտարյերկրյա բանկիրներն էլ (Ցրանսիան) վճուցին նրան փող տալ: Իհարկե, հետո այս ոգնության փոխարեն մեծամեծ տոկոսներով նրանց վճարվեց՝ ի հաշիվ գյուղացիների և բանվորների: Մինչև իսկ այժմ արտասահմանյան կապիտալիստները դեռ հույս ունեն մեզանից փող պոկելու ցարի կառավարության դեփոխութունների դիմաց, դրանց հաշվում և այն փոխառության դեմաց, վոր արված էր 1905 թվի հեղափոխութունը ճնշելու համար: Բայց այդ հաշվի մեջ նրանք սխալվում են, վոր ցարի պարտքերը, յեթե հեղափոխութունը հաղթի՝ չեն վճարվելու: 1917 թվի Հոկտեմբերյան Հեղափոխութունը կատարեց այդ խոստումը:

Ման. Խմբ.

թյան հարցը, բայց և դրա հետ միասին նա որչեղարիվ կերպով դարձավ վճռական ճակատամարտի սկզբնապատճառը: Խորհրդի վորոշումը արտատպող լրագրերը յենթարկվեցին կոնֆիսկացայի և ընդհատվեցին:

Դեկտեմբերի 23-ին բանվորական պատգամավորների Խորհրդի անդամները ձերբակալվեցին և պահակախմբի ուղեկցութեամբ բանտ ուղարկվեցին: Վոստիկանութեան դեպարտամենտն այդ ժամկետներ սխրագործութեան մասին հայտնում և ցարին հետևյալը. «Ս. Պետերբուրգ քաղաքում դեկտեմբերի 3-ին Վոլնո-Նկոնոմիչեսկոյե ընկերութեան շենքում Տրոցկու նախագահութեամբ և 37 անդամների ներկայութեամբ խորհուրդային սենյակում տեղի ունեցող նիստի ժամանակ ձերբակալվեց բանվորական պատգամավորների Խորհրդի գործադիր Կոմիտեն, ինչպես և բանվորական պատգամավորների Խորհուրդը թվով 230 մարդ նիստերի ընդհանուր դահլիճում: Գործադիր Կոմիտեյի նիստի շենքում խուզարկութեան ժամանակ յերևան և բերված բանվորական պատգամավորների Խորհրդի կնիքը, բանաձևերի բնագրեր, զինվորներին ուղղված կոչերի սևագրութեան և այլ կոչեր, դրամարկղային հաշվետվութեան, թղթակիցների հասցեներ, և նույն Խորհրդի վորոշումը՝ դեկտեմբերի 3-ին մի քանի լրագրեր ընդհատելու մասին, դեկտեմբերի 3-ի նիստի չվերջացրած արձանագրութեանը՝ ամբողջ կայսրութեան մեջ ընդհանուր գործադուլ հայտարարելու և զինված ապստամբութեան մասին, մի տետրակ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. կնիքի ուստիակով, ռայոնական կոմիտեների անդամների հասցեներով և զանազան ուրիշ նշանառուներ և ձեռագրեր: Բացի դրանից, գտնված և 9 սարքին ատրճանտկ, 18 ջարդված և ինքնագործ դաշույններ»:

Խորհրդի ձերբակալութեանից հետո Պետերբուրգի պրոլետարիատը իրեն զգաց գլխատված: Նոր կազմով Խորհուրդ կազմակերպելու փորձը լիովին չհաղողվեց: Յերկրորդ խորհուրդը, կամ ավելի ճիշտը Խորհրդի Գործկոմը՝ Պարվուսի նախագահութեամբ, վորը փոխարինեց Տրոցկուն, գլխավոր

րապես զբաղվում էր բանվորական կյանքի առօրյա գործերով — այսպես ասած «վերմիշելով» (Բ. Պերես): Մոսկվայի Խորհրդից նա տարբերվում էր նրանով, վոր զինված ապստամբութեան մասին պարզ ու վորոշ լողունգ չեր ձևակերպում սահմանափակվելով գործադուլի կոչով: Բայց այս անգամ



1905 թ. Մոսկվայի ապստամբութեան որերին վոստիկանութեանը և Սեմյոնովսկի գվարդիյսկի գնտի զինվորները, վորոնց ուղարկել էին ապստամբութեանը ճնշելու համար, «կասկածելի» անցորդներին խուզարկում են:

գործադուլը Պետերում համերաշխ չեր և շուտով ընդհատվեց: Ինքնակալութեան հետ տեղի ունեցած վճռական մարտը Մոսկվայում, ուր դեկտեմբերին հեղափոխական շարժումը հասավ դասակարգային լարվածութեան իր ամենաբարձր ձևին, Պետերում պատշաճ արձագանք չգտավ: «Բանվորական պարլամենտի» մենշևիկյան ղեկավարութեանն իր պտուղները ավեց:

## VII. ԴԵԿՏԱՄԲԵՐՅԱՆ ԶԻՆՎԱԾ ԱՊՍԱՄԲՈՒՅՅՈՒՆԸ


Բանվորական հեղափոխությունն արագ քայլերով մոտենում էր ամենաբարձր վերելքին՝ դեկտեմբերյան զինված ապստամբություն: Գործադուլային կոմիտեյի փոխարեն նույնները վերջերին կազմակերպված Մոսկվայի Սորհուրդը դեկտեմբերի 4-ին միացավ «Ֆինանսական մանիֆեստին», իսկ դեկտեմբերի 7-ին պատմական կարևորություն ունեցող վորոշում ընդունեց՝ ընդհանուր քաղաքական գործադուլի կոչ անել պրոլետարիատին և աշխատել այդ գործադուլը փոխել զինված ապստամբության: Մոսկվայի խորհրդում գլխավոր դեր էլին խաղում բոլշևիկները և շնորհիվ դրան Սորհուրդն ավելի մարտունակ էր, քան Պիտերինը, նա «սոցիալիստների և հեղափոխական դեմոկրատների» իսկական մարտական միություն էր («ըստ էյություն — գրում էր Լենինը — բանվորական պատգամավորների խորհուրդը հանդիսանում է սոցիալիստների և հեղափոխական դեմոկրատների չձևավորված լայն մարտական միություն»):

Դեկտեմբերի 7-ին, առավոտյան ժամը 12-ին, ինչպես պայմանավորված էր, ամբողջ գործադուլը Մոսկվայում գործադուլ սկսվեց: Բոլշևիկները, վորոնք փաստորեն ղեկավարում էին ամբողջ շարժումը՝ քանի վոր գերակշռող ազդեցություն ունեին ֆեդերատիվ խորհրդի մեջ, աշխատում էին ժամանակ շահել, վորպեսզի իրենց յետևից տանեն վոչ միայն բանվորներին, այլ և զինվորներին:

Մենք արդեն առիթ ունեցանք համոզվելու, վոր իշխանությունը ամենից շատ վախենում էր բանվորների և զինվորների միացումից և նա, իհարկե, աշխատեց ապստամբության պատրաստվելու համար հեղափոխությունն անհրաժեշտ ժամանակամիջոց չտալ: Դեկտեմբերի 8-ին վոստիկանությունը՝ հոկտեմբերի 17 ապստամբությունից հետո՝ առաջին անգամ «Ակվարիումում» ձերբակալեց բանվորական միտինգը:

Զինված կռվի սկիզբը հանդիսացավ ֆիդելերի տան վրա յեղած հարձակումը, ուր հասկիզբը վաքվել էյին հեղափոխականները: Հենց այդ որն էլ բարձրացվեցին քարիկադներ: Մոսկվայի իշխանությունը վերջնականապես հարձակման անցավ դեկտեմբերի 9-ի գիշերը: Այդ իսկ մոմենտից սկսվեց կյանքի և մահու ճակատամարտը:

«Կռիվը բորբոքվել էր ամենալայն չափերով, — գրում էր «ИЗВЕСТИЯ МОСКОВСКОГО СОВЕТА» լրագիրը, — Մոսկվայի փողոցներում յերկարատև ժամերի ընթացքում աշյունալի ճա-



Բարիկադները վրա

կատամարտ էր բռնվել ապստամբված ժողովրդի և ցարական զորքերի միջև: Բարիկադները բարձրացվում էյին արագորեն: Համազարկերը ճարճատում էյին անընդհատ: Հավաքվող բանդիտների խմբերը յենթարկվել էյին Թնդան թների կրակի: Փողոցի մայթերի ձյունը ամբողջովին ներկվել էր ազատության մարտիկների թարմ արյունով:

Այսպես ծագեց (զգալի չափով տարբրայնորեն, այդպես էյին վորոշել առաջուց ղեկավար կազմակերպությունները) բարի-

կադային և պարտիզանական զինված կոիվը Մոսկվայում առաջ կենտրոնում, և ապա ծայրամասերում, ուր ապստամբ-վածներին յետ եյին մղել զորքերն ու վոստիկանութունը՝ ինքնակալությանը առանձնապես յեռանդուն դիմադրություն ցույց տվին Պրեսնիա և Ջամոսկվորեցկի ուայոնները:

Յերրորդ մարտական ուայոնում՝ Ռազոժ-Սիմոնովսկու սկո-Սիմոնովսկու անկախ հանրապետու- հանրապետու- թյուն կազմվեց, վորը կառավարվում էր բոլ- քյունը շեխինների կողմից: Բայց այդ հանրապետու- թյունը կարված էր Մոսկվայի մնացած մասե- րից և այդ պատճառով ազդեցություն չգործեց կովի յելքի վրա:



1905 թ. Մոսկվայում — «Պրեսնիայում»:

Վերջին եր զրուժինայի զինվորները  
 Կ ո ի վ ն ե ր ը թիվը: Կառավարական զորքերը յերկար ժա-  
 Պրեսնիայում մանակ չեյին համարձակվում գրավել Պրես-  
 նիան, վախենալով զրուժիններից:  
 Ե՛սկապես, ինչպես վկայում է Ս. Չերնոմորդիկը, — Պրես-  
 նիացիների զինված ուժերը բնավ այնքան էլ մեծ չե ին, ինչ-  
 պես այդ պատկերացում էր կառավարությունը՝ Դրուժին-  
 նիկների միացյալ ուժերը կազմում էյին՝ 1) Շմիդովսկու  
 զրուժինան — 40 մարդ — զինված մաուզերներով, 2) Դրաչեի  
 գործարանի բանվորների զրուժինան — 15 մարդ — զինված  
 բրաունինգներով, 3) Բրեստի յերկաթուղագծի արհեստա-

նոցների (այժմյան Բալտյան-Բելոռուսական յերկաթուղագծի  
 արհեստանոցներ) բանվորների զրուժինան — 20 մարդ — զին-  
 ված բրաունինգներով և հրացաններով, 4) Պրոխորովսկու  
 մենչևիկյան զրուժինան — 10 — 20 մարդ, 5) Պրոխորովսկու  
 ս. հ. 15 մարդ՝ զինված սմիա-վետոններով: Վոստիկաններին  
 և զինվորներին զինաթափ անելուց հետո պրեսնիացիների  
 զինված ուժը հասավ 200 զինված մարդու, վորոնք ունեյին  
 մոտավորապես 80 հրացան և մաուզեր: Սհա և Պրեսնիայի  
 զրուժինների ամբողջ զինված ուժը, վորի մասին Մոսկվա-  
 յում լեզենդաներ էյին պատմվում:

Իսկ ընդամենը Մոսկվայում, Տրոցկու հաշվով, յեղել է  
 700 — 800 զրուժինիկներ և մոտավորապես 500 զինված  
 յերկաթուղականներ, վորոնք գործում էյին վողգալներում  
 և յերկաթուղագծերի վրա...

Ինչպիսի ինքնուրաց անվեհերություն, ինչպիսի հերո-  
 սություն պետք է յերևան բերեյին զրուժինիկները, վոր-  
 պեսզի այդպիսի ուժերով 9 որվա ընթացքում կարողանային  
 պաշտպանել Պրեսնիան:

Ճարիղմը հարկադրված էր ապստամբվածներին ճնշելու  
 համար Պիտերից պահանջել Սեմյոնովսկի և Լադոսկի ընտիր  
 զնդերը: Մոսկվայի զորքի վրա իշխանությունը հույս չեր  
 դնում:

Դեկտեմբերի 16-ին սկսվեց Պրեսնիայի հրետանային  
 ուժակոծումը: Դեկտեմբերի 17 գիշերը Պրեսնիան շրջապատվեց  
 ամեն կողմից: Դեկտեմբերի 18 առավոտը Պրեսնիան արդեն  
 մաքրված էր բարեկազմներից:

Ճնշելով ապստամբությունը, ինքնակա-  
 Սպասամբու- լությունը միաժամանակ սկսեց դաժան  
 քյան վախճա- պատժի յենթարկել ապստամբներին: Պատ-  
 նը: Պատժիչ ջո- ժիչ ջոկատների գլուխ էյին կանգնած Ռի-  
 կասները մանի նման յեռանդուն, ամեն ինչի պատ-  
 րաստի սպաներ: Յերկաթուղիների կայա-  
 բաններում սեմյոնովցիները գնդակահարում էյին հեղափո-  
 խությանը մասնակից կամ աննշան մասնակից մարդկանց՝  
 հեղինակներից մեկի արտահայտությամբ՝ ինչպես ճուտերի:

Մյուսները շարքում ընկնում և նաև ակտիվ հեղափոխական մեքենավար Ուխտոմսկին:

Վ. Վլադիմիրովը այսպես և նկարագրում այդ տոկոս մարտիկի մահապատիժը. — «Միանգամայն պատահաբար, Լյուբերցի կայարանից անցնելու ժամանակ՝ Ուխտոմսկին իջնում և տեղական պանդոկում, անտեղյակ լինելով կայարանում ղեկավորներ լինելու մասին: Սյդոտեղ նրան խուզարկելու ժամանակ՝ մոտը ատրճանակ են գտնում, կալանավորում և



Բանվորներին ֆաբրիկում գնդակահարում են:

ուղարկում են կայարան սպայի մոտ: Հարցաքննության ժամանակ Ուխտոմսկին իր ազգանունը չհայտնեց: Սպան, նա յեղով իր ձեռքին յեղած ցուցակը և լուսանկարները, նրանցից մեկի և Ուխտոմսկու միջև նմանություն գտնելով՝ արցականչեց. — Դուք մեքենավար Ուխտոմսկին եք, դուք սեռք և գնդակահարվեք...

— Ցես այդպես ել գիտեյի՝ սառնասրտությամբ պատասխանեց Ուխտոմսկին:

Վորքան և յեղել Մոսկվայի ապստամբության զոհերի ընդհանուր թիվը մինչև պատժիչ եքսպեդիցիան, — ճիշտ հայտնի չէ: 47 բուժարանների սովյալներով տոմարաված և յեղել 885 վիրավոր, 174 սպանված և վերքերից վախճանված. ընդհանուր առմամբ սպանվել և մինչև 1000 մ. և նույնքան ել վիրավորվել, նույն թվում 86 յերեխա:

1905 թվի պատմությունը հեղափոխության արյունալի արդյունքները վորոշում և հետևյալ թվերով, 1905 թվի հունվարի 9-ից մինչև առաջին Պետական Դումայի գումարումը՝ 1906 թ. 9-ից մինչև առաջին Պետական Դումայի գումարումը՝ 1906 թ. 27-ից մոտավոր, համենայն դեպս վրչ գերազանցված հաշվով, ցարական կառավարությունը սպանել և 14,000 մարդ, վրով, ցարական կառավարությունը սպանել՝ 1,000, վիրավորել՝ մոտավորաժանապատժի յենթարկել՝ 1,000, վիրավորել են), ձերպես 20,000 (վորոնցից շատերը վախճանվել են), ձերբակալել, աքսորել, բանտերը նետել — 70,000 մարդու:

Մոսկվայի ապստամբության պարտության գլխավոր պատճառը՝ ասում և Ս. Չերքյան պարսունորդիկը — հանդիսանում և Համառուսական կապի թուլությունը, ղեկավարության, կենտրոնացման բացակայությունը, վորի հետևանքով կառավարությունը հնարավորություն ունեցավ անպատիժ կերպով վարչավաճից և Պետերբուրգից ուժեր տեղափոխել Մոսկվա:

Դեր խաղաց նաև կուսակցական կազմակերպության անպատրաստ լինելը: Դրա հետ միասին Մոսկվայի ապստամբությունը աջակցություն չստացավ գյուղացիության կողմից: Պետք և ընդգծել սակայն, վոր չնայած պարտության, Մոսկվայի պրոլետարիատն իր հերոսական ապստամբությամբ հսկայական գանձ մտցրեց բոլոր յերկրների բանվոր դասակարգի հեղափոխական փորձի մեջ:

Գ լ խ ա վ ո Ր փորձը փոխությունը հետագայում բնութագրում և իրրև 1917 թվի «գլխավոր փորձը» («Горькая нервальная репетиция»): «Սյդ 2րջանի

ամեն մի ամիսը, գրում ե լենինը, և՛ մասսաների, և՛ առաջնորդների, և՛ դասակարգերի և կուսակցությունների քաղաքական գիտություն հիմունքների ուսուցման իմաստով հավասար ե «խաղաղ» «սահմանադրական» դարգացման մեկ տարուն»:

### VIII. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ», ՆՐԱՆՑ ԿԱՊԱԿՑՈՒՄՆ ՈՒ ՏԵՄՈՐ

Այն հանգամանքը, վոր բանվորական հեղափոխությունը Մոսվայում կղզիացած եր (անջատված) «գյուղացիական պատերազմի» յերկրորդ հրատարակությունից, վորը այդ մոմենտին դեռ նոր եր դարգանում, ապստամբությունը անխուսափելի պարտություն հասցրեց:

1856 թվին Մարքսը գրում եր Ենգելսին. «Գերմանիայի ամբողջ գործը կախված կլինի պրոլետարական հեղափոխությունը իր տեսակի գյուղացիական պատերազմի յերկրորդ հրատարակությամբ զորացնելու հնարավորությունից: Այն ժամանակ գործը հիանալի կլինի»:

1905 թվին գյուղացիական հեղափոխությունը բավականին ուշ վրա հասավ, սակայն նրա առաջին հատկանիշները վորոշվել եյին իսկապես արդեն 1905 թվի գարնանը: Բացի դրանից 1905 թ. ընթացքում կայսրության մի շարք վայրերում տեղի ունեցան նավաստիների և զինվորների ապստամբություններ, վորոնք նախագուշակում եյին գալիք «գյուղացիական պատերազմը»:

Զինվորական ապստամբություններից ամենամեծ թափ ստացավ 1905 թվի ամառը և աշնանը նավատորմում տեղի ունեցած ապստամբությունը: Հունիսին Ուրեսայի ծովափին «Պատյոմկին» զրահակրի վրա ծածանվեց կարմիր դրոշակը: Նավաստիները կործնեցին ամենից ուսուցիչն սպաներին և վորոշեցին սպասել եսկադրայի գալուն, վորպեսզի նրան ել գրավեն ցարիզմի դեմ մղվող պայքարին: Սակայն ամբողջ

եսկադրայից «Պատյոմկինին» միացավ (այն ել կարճ ժամանակով) միմիայն «Գեորգիյ Պրեդոնոսեց» զրահակրը:

«Պատյոմկինը» 11 որվա ընթացքում դեգերում եր Սև ծովի վրա և վերջիվերջո չստանալով աջակցություն և չունենալով հաստատուն ղեկավարություն, վորոշեց անձնատուր լինել ուժինական իշխանության: Հունիսի 25-ին «Պատյոմկինը» ժամանեց Կոնստանցիա: Այստեղ նավաստիներն ափ իջան, ցրվեցին զանազան ուղղությամբ, իսկ զրահ



Ապստամբությունը «Պատյոմկին Տավրիչեսկի» զրահակրի վրա:

հակիրը վորոշ ժամանակից հետո վերարարձվեց ցարական կառավարության: Այսպես վերջացավ պատյոմկինյան ապստամբությունը՝ մեր նավատորմի պատմության ամենափայլուն հեղափոխական եջերից մեկը...

«Պատյոմկին» ապստամբությունը ամենախոշոր հեղափոխական եպիզոդներից մեկն եր: Յարիզմն այն ժամանակ առաջին անգամ զգաց, վոր նավաստիները միշտ հլու չեն հնազանդվելու:



Նոյեմբերին շարժումը բորբոքվում է մի առանձին ուժով: Նոյեմբերի 11-ին նավաստիները սպանում են Բրեստի գնդի հրամանատարներից մեկին, զինվորական միտինգը ցրելու փորձի համար: Ստեղի հրամանատարի սպանությունը ազդանշան ծառայեց ապստամբության համար: Նավաստիները դրանից անմիջապես հետո փակվեցին զորանոցներում և նավատորմի կազմերից պատգամավորներ ընտրեցին: Բոլոր զորանոցներում աշխույժ միտինգներ էլին տեղի ունենում: Նավահանգստի հրամանատար ադմիրալ Չուխնինին առաջադրվեցին հետևյալ պահանջները. 1) բոլոր զինվորական քաղաքական բանտարկյալների անհապաղ ազատում, 2) պատգամավորների անձի անձեռնմխելություն, 3) պատգամավորների ժողով՝ այնպիսի միջոցներ մշակելու համար, վորոնք կարողանային հանգստացնել յերկիրն ու նավատորմը:

Չուխնինը, պատասխանի փոխարեն բարձրացավ «Ռոստիսլավ» զրահակրի վրա, և այստեղ հավաքելով զորախումբը, հարց տվեց նրան՝ կհամաձայնվի արդյոք մասնակցել խոտվարարների ճնշմանը: Նավաստիները լուռ էլին:

Կարճատև տատանումից հետո խոսք է վերցնում մատրոս Սիրոտենկոն և սկսում է գանգատվել նավատորմի ծանր կյանքից: Չուխնինը Սիրոտենկոյին լսելուց հետո հրաման է տալիս նրան ձերբակալել, սակայն հրամանն ի կատար չի անվում: Չեռնոցը արդեն նետված էր: Ապստամբների ուժերը սկզբում արագ աճում են, նավաստիներին միացան սապյորները և բերդային հրետանին: Ապստամբության ամենայնուհեմ ժամանակ Շմիդտին ներկայացավ նավաստի պատգամավորությունը և խնդրեց նրան շարժման զուխն անցնել: Շմիդտը տատանվում էր: Բայց նավաստիների թախանձանքն այնքան էր ուժեղ, վոր լեյտենանտը հարկադրված էր համաձայնվել: Դրանից հետո Շմիդտն անցնում է «Ոչակով» հաձանավը, բարձրացնում է կարմիր և ծովակալական դրոշակը և ազդանշան է անում՝ «Ստանձնում եմ նավատորմի հրամանատարությունը, Շմիդտ»: «Ոչակովին» միացան հայտնի «Պատյոմկին» (վորը ապստամբությունից հետո վերանվանվել էր «Պանտելեյմոն»), «Սվիրեպլյ» հակապահանա-

կիրը և այլ նավեր, այդպիսով կարմիր դրոշակի տակ միանում են ընդամենը 11 նավ: Բայց ապստամբների ուժերը շուտով սկսեցին նվազել: Ընդհակառակը, «որինական իշխանություն» ուժերը՝ կիսովսու, Կերչ-Յենիկալսկի գնդի հրետանու և այլ գնդերի մասերի Սևաստոպոլ ժամանելով՝ արագորեն աճում են:

Նավատորմի մի մասը «կարմիր ադմիրալի» նկատմամբ խիստ թշնամական դիրք էր բռնել, սակայն, թերևս, վճռական նշանակություն ունեցավ ապստամբներին դաշտային թնդանոթներից ուժակոծելը: Մինչդեռ իրենք ապստամբները վորոնց ղեկավարում էր կամազուրկ Շմիդտը և մասամբ սոցիալ-դեմոկրատ մենչևիկները, գործում էլին ծայր աստիճանի անվճռական: Կար մի մոմենտ, յերբ ապստամբները կարող էլին հեշտություն գրություն տերը դառնալ, յեթե նրանք ավելի համարձակորեն ներգրավելին կայազորին շարժման մեջ: Հետագայում ապստամբությունը ճնշող Մելլեր-Չակոմեկսկին գրում էր Նիկոլայ թագավորին.

«... Բելոստոկի գնդի և այլ զորամասերի կողմից ծառայության պարտականությունների հավատարմության ամենաչնչին տատանումը պատճառ կդառնար, վորպեսզի ամբողջ նավատորմը, բերդն ու քաղաքն անցնեք խոտվարարների ձեռքը, վոր կառաջացնեք կորստաբեր հետևանքներ»:

Բայց Շմիդտի անվճռողականությունը կործանեց ամեն ինչ: Ծովային մի ձակատամարտ վճռեց պայքարի յեղը և ապստամբությունը խեղդվեց արյան մեջ:

Գեներալ բարոն Ֆոն-Կաուլբարսը ապստամբության ճնշման մասին այսպիսի տեղեկություն է տալիս ծովային մինիստրին.

«Ժամը յերեք և կեսին դաշտային թնդանոթներից կրակ բացեցին հարավային ծովախորշում գտնվողների վրա, վորոնք կարմիր դրոշակներն իսկույն իջեցրին, նմանապես և ռոնք կարմիր դրոշակներն իսկույն իջեցրին, նմանապես և նավակներում գտնվող խոտվարարների վրա, ի պատասխան վորի, Շմիդտն ազդանշան բարձացրեց, թե «շատ գերի սպաներ ունիմ»: «Սվիրեպլյ» ականակիրը գրոհի անցավ, բայց հարկապելով «Պաժյատ Մերկուրիա» ու «Կապիտան Սակեն»

հաժանավերի և «Ռոստիսլավ» զրահակրի ուժեղ կրակին, անհապաղ դուրս ընկավ շարքից, նույնպես և Չ համարա-  
կալված նավեր, վորոնցից մեկը ջրասույզ յեղավ: «Ոչակովը»  
հազիվ կարողացավ վեց անգամ կրակել, վորից հետո սպի-  
տակ դրոշակ բարձրացրեց: Այն ժամանակ, յերբ «Ոչակովը»  
հրաձգութեան եր յենթարկվում, դաշտային գումարտակները  
գնդակահոծում էին նավատորմային զորանոցները, վորոնք  
իրենց հերթին պատասխանում էին կրակով...»

Բարոն Կառլբարսը բավականին ճիշտ է նկարագրում  
Սևաստոպոլի վողբերգութեան վերջին գործողութիւնը:

Այնուամենայնիվ այդ դեռ վերջին գործողութիւնը չեր-  
առաջիկայում դաժան պատիժ եր սպասում խռովարարներին  
և «բունտի» ղեկավարներին:

Շմիդտը ճակատամարտը տանուլ տալուց հետո, փորձ է  
անում աղատվել ականակրի վրա նավաստիի հաղուստով,  
բայց բռնվում է: 1906 թվի մարտի 6-ին, Ոչակովից վոչ հեռու,  
Բերեզանի կղզու վրա ցարական դատարանի վճռով մահա-  
պատժի յեն յենթարկվում Պ. Պ. Շմիդտը, և Սերգեյ Չաստ-  
նիկ, Ալեքսանդր Գլատկով և Նիկիտա Անտոնենկո նավաս-  
տիները: Կառավարութիւնն այդ մահապատիժներով չի սահ-  
մանափակվում. տասնչակ նավաստիներ դատապարտվեցին  
քսուսուր ամամբ հարյուրավոր տարիների տաժանակիր  
աշխատանքների: Առաջին մահապատիժներին հաջորդեցին  
նորերը... Ցարը մահվան սարսափի ըողներն ապրեց և  
դրա համար դաժանորեն վրեժ լուծեց «կարմիր ազմիրա-  
լից»...

Սվիաբորգի ապստամբութիւնը, վորը  
«Սվիաբորգի» բռնկվեց 1906 թվի հուլիսին՝ առաջին Պե-  
տական Դումայի ցրելուց անմիջապես հետո,  
իր թափով և մասնակիցների թվով քիչ եր  
տարբերվում Սևծովյան ապստամբութիւն-  
նից: Շարժումը կղզիների վրա տեղի ունեցած ապստամբու-  
թիւնից բացի, ընդգրկեց նաև Ֆինլյանդիայի Հելսինգֆորս  
քաղաքը, ուր բանվորները կազմակերպեցին կարմիր գվար-  
դիայի շփոթներ: Ցարական իշխանութեան պաշտոնական

տեղեկութիւնները հաղորդում էին, վոր Հելսինգֆորսում  
«հեռախոսը չի գործում, հեռագիրը փչացված է, կարմիր  
գվարդիան բացարձակ միացել է ապստամբվածներին և  
քանդում է յերկաթուղային կամուրջները, կտրատում հեռ-  
գրասյունները, վոչնչացնում հեռագրալարերը, փչացնում է  
Ռեյվել տանող միակ ճանապարհը: Քաղաքում զինված ապս-  
տամբութեան կոչ է բաց թողնվել: Հայտարարված է ընդ-



1905 թ. պահեստի զինվորները հարձակվում  
են սպաների վրա:

հանուր գործադուլ...» Սակայն ինքնակալութեանը հաջողվեց  
ժամանակին վստահելի նավեր հասցնել կարմիր կղզիներին:

Յեվ շուտով սկսվեց դատաստանը...

Դատի յենթարկվեցին 1000 նավաստի և զինվոր:

Ոգոստոսի ընթացքում 50-ից ավելի հեղափոխականներ  
յենթարկվեցին մահապատժի:

վոտքի յեղան՝ հող ձեռք բերելու իրենց դարավոր տենչն իրագործելու համար: Շարժումն առանձնապես սուր ձև ստացավ ծայրագավառներում, Կովկասում, լեհական նահանգներում, Բեսարաբիայում: Ամառվա ընթացքում այդ վում էյին ազարակները նաև Մեծվոլգյան նահանգներում, Ուկրաինայում և Մերձբալտյան յերկրում:

«Ըստ յերևույթին, շարժման մեջ գլխավոր դեր խաղում էյին այն գյուղացիները, վորոնք ամառը գնում էյին կողմնակի աշխատանքների: Մեծ մասամբ, — գրում է Պ. Մասլովը, — գյուղացիները նախորոք դուռնացնում էյին տերերին, թե յերբ են գնալու նրանց մոտ: Նշանակված որը, ազարակից վոչ հեռու ծղնոտ էյին վառում... Ըստ այդ աղբանշանի հավաքվում էյին գյուղացիները խմբերը սայլերով... Հավաքված գյուղացիներն ուղղվում էյին դեպի տնտեսութունը ու մոտենալով նրան՝ կրակում էյին մի քանի անգամ, ապա ջարդում շտեմարանների փականքները, հացահատիկը բարձում սայլերն ու հեռանում... Թալանում էյին գլխավորապես հացահատիկը... Սովորաբար տները չէյին մտնում... Վոչ մի բռնութուն տեղի չէր ունենում... Ընդհանրապես գյուղացիներն աշխատում էյին իրենց զուսպ պահել և վորոշ սահմաններից դուրս չգալ»:

Չի կարելի ասել, վոր կալվածատիրական ազարակների ավերման այդ «խաղաղ ձևը» միակն եր: Կալվածատիրոջ հետ տեղի ունեցած պայքարում գյուղը գործադրում եր զանազան ձևեր՝ — ինքնագլուխ վար ու ցանքս, բոյկոտ, անտառահատում ու ավերում, մինչև իսկ կալվածատերերի ֆիզիքական վոչնչացում. գործադրվում եր գյուղում դեռ չտեսնված պայքարի ձև — ապստամբութուն, մի ձև, վորը գյուղացիները անկասկած յուրացրել էյին բանվորներից՝ հուսվար-փետրվարյան գործադուլներից հետո: Գյուղացիներն իրենց բոլոր պահանջներում ընդգծում էյին սակավահողութունը, վարձավճարի ծանրութունը, կալվածատերերի սված չնչին վաստակը:

«Լրագրերից մենք իմացանք, — գրում էյին Խերսոնի նահանգի Յելիսավետգրադի գավառի Պետրոպավովկայի և

Յելիսավետովկայի գյուղացիները, — վոր սույն թվի փետրվարի 18-ի բարձրագույն գրությամբ թագավորի հպատակներին իրավունք ե տրված արտահայտել իրենց կարիքները: Ոգտվելով դրանից, մենք նույնպես անհրաժեշտ ենք համարում պարզել մեր կարիքները: Անհրաժեշտ ե հող տալ յերկսեռ բոլոր հասակի մարդկանց, վորովհետև մեր աղքատության և տգիտության գլխավոր պատճառը՝ սակավահողութունն ե ու այն բարձր տուրքը, վորը գանձում ե մեզնից կալվածատերն իր հողը միայն մշակելու թույլտվության համար: Անհրաժեշտ ե վերացնել հողի ամեն տեսակի մասնավոր սեփականատիրութունը և բոլոր մասնատիրական, վանքապատկան, յեկեղեցապատկան և պետական հողերը հանձնել ամբողջ ժողովրդին: Անհրաժեշտ ե հողն օգտագործության տալ միմիայն այն անձանց ու արտելներին, վորոնք հողը մշակում են իրենք՝ առանց բատրակների աշխատանքի օգնության և այնչափ, վորչափ կարող են իրենք մշակել...»

Գյուղացիները յեղանները ձեռքներին պայքարում էյին այդ պահանջները համար, պայքարում էյին վոչնչացնելու համար, ինչպես գրում եր Լենինը, խոշոր կալվածատիրական ճորտատիրական հողատիրութունը և հողը (այս կամ այն հիմունքներով) գյուղացիներին անցնելու համար, պայքարում էյին անողոք ամբողջ 1905 թվին՝ և ել ավելի ուժեղ 1906 թվին:

Գյուղացիական շարժման հետևանքով 1905 թ. վոչնչացվեց 2.000-ից ավելի կալվածք: Կալվածատերերի ֆլամաները 19 նահանգներում, ուր առանձնապես մեծ բարձրության հասավ գյուղացիական շարժման ալիքը, վորոշվում եր 29 միլ. ուրբի. միայն Սարատովի կալվածատերերը «տուժեցին» 10 միլ. ուրբի: Ա. Շեստակովի հաշվով ավերվել են ընդհամենը կալվածատիրական ազարակներ՝ Սարատովի նահանգում — 272, Տամբովի նահ. — 130, Ուրյոլի նահ. — 84, Կուրսիի նահ. — 127, Ուկրաինա-Պենյայի նահ. — 30, Կուրսիի նահ. — 127, Ուկրաինա-Կնյայ Պրոգորովսկու, կնյայ Դեմիդովի, դուքս Լեյխտենբերսկու պալատները:

Գյուղացիական հեղափոխությունը յեկոսցիալ-դեմոկրատիան

Ո՞վ էր կանգնած ազրարային շարժման գլուխ: Քաղաքականապես ո՞վ էր ղեկավարում գյուղացիությունը:

Մասայական գյուղացիական շարժման մեջ քաղաքական տեսակետ և պահանջներ մտցնում էին առանձին կուսակցությունները: Այդ ինքնըստինքյան պարզ է: Սոցիալ-դեմոկրատները ազդեցություն ուժեղ էր միայն առանձին ուսուցիչներում — գլխավորապես Կովկասում և Մերձբալթյան շրջանում: Գուրիայի (Վրաստան) ապստամբությունը 1905 թ. գարնան ամբողջովին գտնվում էր սոցիալ-դեմոկրատների ղեկավարության տակ. գյուղացիները կալվածատերերից ուժով գրավում են հողը. նշանակում են վարձավճար, դատում են իրենք՝ դուրս վանելով «որինական իշխանություն» և ընդհանրապես ինքնավարության որդանները բնակչության ձեռքը ձգեցին: Միայն 1905 թվի վերջին կառավարությանը հաջողվեց կենտրոնից ուղարկված զորքերի ոգնությունը խաղաղացնել Գուրիան: Ապստամբված ուսուցիչի վրայով անցան ուժեղ պատժիչ ջոկատներ, և մի շարք մարդաբնակ վայրեր, որինակ 5000 բնակիչ ունեցող Կվերելի բնակատեղին վերջնական ավերման յենթարկվեց: Վրաստանի ապստամբությունը 1905 թվի գյուղացիական հեղափոխության ամենափայլուն եջերից մեկն է: Սակայն գյուղացիների սովորական ապստամբությունները քիչ էին նմանվում Գուրիայի ապստամբության. նրանք բավականաչափ կազմակերպված չէին, սակավ էին հասնում քաղաքական ընդհանրացման մակարդակին:

Եսեքները յեկոսցիական Միությունը»

Սոցիալիստ հեղափոխականներն անզոր գտնվեցին գյուղում ամուր գյուղացիական միություններ ստեղծելու համար. նրանք իրենք վատ էին կազմակերպված և իրենց առաջին համագումարը կարողացան հրավիրել միայն 1905 թվի վերջին: Գյուղացիների Համառուսական Համագումարը 1905 թվի ոգոստոսին ձևակերպեց «գյուղացիներին մնացած դասակարգերին հա-

վասարեցնելու»՝ պայքարի համար կազմակերպված Համառուսական Գյուղացիական Միության գաղափարը: Նույն 1905 թվի նոյեմբերին Մոսկվայում բացվեց Գյուղացիական Միության յերկրորդ համագումարը:

Այդ համագումարը, վորը ղեկավարում էին եսերները, մերժեց պատգամավորների մի մասի՝ հատկապես Սարատովի նահանգի պատգամավորների ապստամբության վճռական կոչը և բարի ցավակցությունների վորով բանաձև ընդունեց «յեկող տարվա փետրվարից վոչ ուշ» Մահմանդիթ ժողով գումարելու մասին: «Ժողովրդի պահանջները չիրագործվելու դեպքում — ապստամբ էր համագումարը — գյուղացիական Միությունը կղիմի ընդհանուր հողային գործադուլի, այսինքն, կմերժի բանվորական ուժ տալ բոլոր տեսակի տնտեսությունների տերերին, վորով և կզաղարեցնի նրանց աշխատանքները: Իսկ ընդհանուր գործադուլ կազմակերպելու համար համաձայնություն կգա բանվոր դասակարգի հետ»:

Գյուղացիական համագումարը փակելուց եՔիչ ձերբակալեք, ռաս սպանեք» Մոսկվայի բյուրոն: Մոսկվայի ապստամբության հաջող ճնշումից հարբած, կառավարությունը ապստամբ գյուղացիների նկատմամբ հաստատապես ընդունում է դաժան բեպրեսիաների գիծ: Ներքին գործերի մինիստր, հայանի դահիճ Պ. Դուրնովոն, վորը փոխարինեց բնավորությունը թույլ Սվյատոպոլկ-Միրսկուն, հրամայեց տեղերին ղեկավարվել հետյալ հրահանգով. «Անհապաղ դենքի ուժով վոչնչացնել ապստամբներին, իսկ ընդդիմադրության դեպքում — այրել նրանց բնակարանները: Ներկա վայրկյանին անհրաժեշտ է առընդմիջտ արմատախիլ անել ինքնավարությունը: Ձերբառկությունները հիմա իրենց նպատակին չեն հասնում անհնարին է դատել հարյուրավոր և հազարավոր մարդկանց: Այժմ միանգամայն անհրաժեշտ է, վորպեսզի զորքերը տագորվեն վերոհիշյալ ցուցմունքներով»: Տամբովի փոխնահանգապետ Բոգդանովիչը հրաման է տալիս վոստիկան

Հոմանսկուն. «Քիչ ձերբակալեք, շատ սպանեք», Իսկ Հոմանսկին իր հերթին հրահանգում է իր ստորադրյալներին՝ «Թողեք համոզմունքները, գործեք կրակով»:

Դուրնովոն կարողացավ համեմատաբար հեշտությամբ իրագործել այդ ծրագիրը, — գյուղացիական կազմակերպությունները չկարողացան նրան խանգարել, վորովհետև շատ թույլ էին և պրոլետարական ղեկավարություն չունեցին, իսկ բանվորական պատգամավորների խորհուրդները դեռ չէին կարողացել ամրացնել յերկու հեղափոխական հոսանքներին՝ պրոլետարականի և գյուղացիականի միացումը: Այդ իսկ պատճառով ցարիզմը կարողացավ ընկճել հեղափոխությունը մաս առ մաս. սկզբում նա արյան մեջ խեղդեց բանվորական հեղափոխությունը, իսկ հետո նաև գյուղացիականը:

Գյուղացիական պատգամավորներ խորհուրդները

1905 թվին գյուղացիական խորհուրդներ կազմակերպելու առանձին սակավաթիվ փառերը (Տվերի նահանգում, Նովորոսիյսկի և Ռոստովի շրջակայքում) և ել ավելի ուժեղ են ընդգծում այդ պերիոդում գյուղացիական շարժման ղեկավարության ընդհանուր թուլությունը, թեև շարժումն ինքնըստինքյան ավելի ուժեղ էր ընդունել: Ամբողջ դժբախտությունը կայանում էր նրանում, վոր գյուղացիությունը բանվոր դասակարգի հետ չէր ընթանում «ձեռք ձեռքի, մեջք մեջքի տված»: Գյուղացիական շարժումը յետ եր մնում բանվորականից:

Բանվորական հեղափոխության յեվ գյուղացիական պատգամի տեսակը

Այն ժամանակ, յերբ բանվորական հեղափոխությունն արդեն նվազում էր (1905 թվին), գյուղացիական շարժումը շարունակում էր աճել. 1905 թվի վերջին, ղեկավարության ապստամբության մոմենտին ագրարային շարժումը ընդգրկել էր գավառների 1/3 մասը, իսկ 1906 թվին՝ մոտավորապես գավառների կեսը: 1905 — 7 թ. շարժման կորագիծը հետևյալ տեսքն ուներ.

1905 թվի գարնանն ու ամառը ագրարային շարժումն ընդգրկել էր 96 գավառ, նույն թվի աշնանը — 171 գավառ, 1906 թվի գարնանն ու ամառը — 905 գավառ, նույն թվի աշնանը շարժումը խիստ կերպով ընկնում է և ընդգրկում է միայն 72 գավառ, 1907 թվի գարնանն ու ամառն ընդգրկում է 82 գավառ, աշնանը — 3 գավառ:

Դժվար չէ նկատել, վոր գյուղացիական շարժման տեմպը ակնհայտնի կերպով չի համապատասխանում հեղափոխությունից զարգացման հետ քաղաքներում:

Դա անպայման կործանարար նշանակություն ունեցավ հեղափոխության համար:

### IX. ԿԵՆՏՐՈՆԸ ՅԵՎ ԾԱՅՐԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Մոսկվայ յեվ Պիտեր

Հեղափոխության զարգացումը մայրաքաղաքում և գավառներում նույնպես տարբերվում է իր տարահարությունից: Ինչպես մենք տեսանք, 1905 թվին Մոսկվայի գործադուլից ավելի շուտ «հոգնեց», քան Պիտերը, իսկ ղեկավարներին, ընդհակառակը, Պիտերը չաջակցեց Մոսկվային: Իբրև կանոն՝ չափազանց յեռանդուն էր խոշոր պրոլետարական կենտրոնների բանվորների մասնակցությունը հեղափոխության: Հոկտեմբերյան որերին հատկապես փայլուն յելույթներ յեղան Յեկատերինոսլավում (այժմա Դինպրոպետրովսկ), Նարկովում և Ուդեսայում: Սակայն այդ որերին վոչ ամեն տեղ ստեղծվեցին, Պիտերի որինակով, բանվորական պատգամավորների խորհուրդներ:

Բանվորական պատգամավորների խորհուրդներ գավառներում

Մինչև հիմա հաստատված է, վոր խորհուրդները գոյություն են ունեցել հետևյալ քաղաքներում՝ Կենտրոնական Ռուսաստանում և հյուսիսում — Կոստրոմայում, Սարատովում, Սամարայում, Միտիչչում, Տվերում, Որեսկովո-Չուլսում, Վյատկայում, Յեկատիրինբուրգում, Նադեժդինսկու և Վոտկինսկու գործարաններում. հարավում — Ուդեսայում, Նիկո-

լաւում, Կրեւում, Կրեմենչուգում, Յեկատերինոսլավում, Յուզովկայում, Մարիուպոլում, Տագանրոգում, Ռոստովում-Դոնի վրա, Կովկասում՝ Նովորոսիյսկում և Բազվում. Միբիրում — Կրասնոյարսկում, Իրկուտսկում, Չիտայում. արեւմտյան Ռուսաստանում — Բելոստոկում և Սմոլենսկում, ու Մերձբալտյան յերկրում — Լիբավայում և Ռեկում: «Գալառական Խորհուրդների պատմութիւնը, նկատում է Վ. Ի. Նևսկին, անկասկած ավելի հարուստ է, քան թվում էր մինչև այժմ. խորհրդային կազմակերպութիւնը արդեն 1905 թվին տալիս է, ավելի շուտ, շոյափում է ձեերի այն բոլոր զանազանակերպութիւնը (բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների), վորը 1917 թվի հեղափոխութեան մեջ այդպիսի կատարյալ և լրիվ տեսք ընդունեց»: Սկզբում խորհուրդները «ստեղծվում են» արդյունաբերական քաղաքներում, ըստ վորում նրանք առաջանում են վոչ միանգամից, այլ աստիճանաբար՝ հեղափոխութեան պրոցեսում: Բանվորներն իբրև սկզբնական ձև վերցնում են այն մարտական հեղափոխական կազմակերպութիւնները, վորոնք ստեղծվել էյին արդեն մինչև հոկտեմբերյան որբը (գործադուլային կոմիտեներ և այլն): Պիտերի Խորհրդի կազմակերպած նոյեմբերյան գործադուլը Խորհուրդներին առաջ է քաշում իբրև այնպիսի պրոլետարական հեղափոխական կազմակերպութիւնների, վորոնք պետք է նախապատրաստեն զինված ապստամբութիւն: Այդ խնդիրը իրագործելուց բացարձակ կերպով հրաժարվում են միայն ակնհայտ մենշևիկյան խորհուրդները, ինչպես որինակ՝ Ողեսայի խորհուրդը: Դեկտեմբերին խորհուրդներն արդեն գոյութիւն ունեյին վոչ միայն արդյունաբերական ռայոններում, այլ և վոչ պրոլետարական բնակչութիւն ունեցող նահանգներում (Դոնի շրջան, Վոլգայի շրջան և այլն): Նոյեմբերյան գործադուլն ակնհայտնի կերպով ցույց տվեց, թե ինքնակալութիւնը տապալելու համար վորքան անհրաժեշտ է համառոտական խորհուրդների կենտրոնը: Սակայն, այդպիսի կենտրոն ստեղծելը չհաջողվեց՝ ռեակցիան հազթանակեց ավելի շուտ, քան հնարավոր դարձավ խորհուրդների միանալը:

Ամիոփելով հեղափոխական շարժման Հեղափոխական օարժումը և հետեանքները դավաճներում, հարկավոր է ատանձին կանգ առնել վոչ ռուսախոս ազգութիւնների շարժման վրա: Հատկապես զգալի էր հեղափոխութեան մեջ հրեյա բանվորների ունեցած մասնակցութիւնը: 1905 թվի վորապես հրեյա բանվորների վրա և Լեհաստանի մյուս քաղաքներում լեհ և հրեյա բանվորները կովում էյին ձեռք ձեռքի տված, չնայած նրան, վոր հրեյա մասսաներին գլխավորում էր «Բուհըրը» («Բուհըրը» հրեյական մանրբուրժուական կուսակցութիւն է, վորը յերբեմն ատանձին խնդիրների նկատմամբ մոտենում էր բոյլշևիկներին, իսկ ընդհանրապես հետեում էր մենշևիկներին): Հեղափոխական հրեյա բանվորների ճնշման տակ «Բուհըրը» ստիպած էր պաշտպանել բարիկադային պայքարի տակտիկան. «Ասում են, թե մենք շուտապել ենք, իբրև թե բարիկադները վաղաժամ էյին, մենք ղեկ պատրաստ չենք պայքարի նման միջոցի համար, անդեռ պատրաստ չենք պայքարի մեզ վաղուց են յերգում: Միշտ, հրաժեշտ է սպասել: Այդ մեզ վաղուց են յերգում: Միշտ, հենց վոր պրոլետարիատը ձեռնամուխ է լինում պայքարի նոր միջոցի, մենք ստիպված ենք լսել միևնույն որբը: Այդ մենք լսեցինք առաջին գործադուլի ժամանակ, միևնույնը մեզ կրկնեցին նաև այն ժամանակ, յերբ մենք սկսեցինք քաղաքական պայքարը: Կյանքը, սակայն, ապացուցեց, թե վորքան ճիշտ չեն այդ կշտամբանքները... Թեակոխում է այն մոմենտը, յերբ բոլորն սկսում են զգալ, վոր հետագա սպասումը անողուտ է այլևս, վոր ժամանակն է խոսքից գործի անցնել: Այդ դրում է ինքը մասսան և նա էլ անում է առաջին քայլերը»:

Պայքարի պատրաստականութեան այդ նույն տրամադրութիւնը հատուկ է նաև Ողեսայի հրեյա բանվորների համար, ուր մի ժամանակ «Բուհըր» տեղական կազմակերպութիւնն, իր հեղինակութիւնն ամրացնելու համար, պտիպված էր աշխատել ամուր կապեր հաստատելու բոյլստիպված էր աշխատել ամուր կապեր հաստատելու բոյլշևիկների հետ: Ողեսայի բարիկադային կոնիսերի ժամանակ

հրեյա բանվորները յետ չեյին մնում ուսանելից: Աշնանա-  
յին վերելքի նախորդակին «մշտական բնակութեան գծի»  
բոլոր քաղաքների և ավանների վրայով անցավ հրեյա աշ-  
խատավոր մասսաների միահամուռ բողոքի արիքը՝ այսպես  
կոչված ոգոստոսի 6 սահմանադրութեան — Բուլիզինյան Դու-  
մայի դեմ:

Ըստ այդ Դումայի սկզբնական նախագծի, ընտրական  
իրավունք ստանում էին ժողովրդի ունևոր շերտերը.  
հրեյաները միանգամայն զրկվում էին այդ Դումայի համար  
ընտրելու և ընտրվելու իրավունքից: Ինքնակալութեան  
կամարելիայի այդ նյութումների դեմ բազմամարդ ու փո-  
թորկալի միտինգներ են տեղի ունենում Կալիշում, Բրեստ-  
Լիտովսկում, Դրոզնոյում և այլ վայրերում, հաճախ բաց  
յերկնքի տակ: Մի քանի քաղաքներում, որինակ Վիլնայում,  
բողոքներն ընդունում են բացարձակ դեմոնստրացիաների  
և գործադուլների բնույթ: Վոստիկանութունը և կոզակ-  
ները ցուցարարներին ծեծում էին նազայականերով և փայ-  
տերով:

Հոկտեմբերյան գործադուլի ժամանակ հրեյա բանվոր-  
ներն իրենց ղեկավարներից ավելի առաջ են անցնում:  
Ս. Դիմանշտեյնը՝ իր «Революционное движение среди  
евреев» հոդվածում մի փաստ է բերում, վորը հետաքրքրա-  
կան է հենց այդ տեսակետից. այդ փաստը վերցված է  
հրեյական „Дас Нейе Лебн“ թերթից. «Բելոստոկում,  
գրում է Դիմանշտեյնը — հեղափոխական կազմակերպու-  
թյունների միջև յեղած տարաձայնութունների շնորհիվ  
բանվորական կազմակերպութունները չմիացան համաուս-  
սական յերկաթուղային գործադուլին»: Սակայն, գործը վեր-  
ջանում է նրանով, վոր «իրենք, բանվորները, առանց  
իրենց ղեկավարների, 18-ին (հոկտեմբերի) գործադուլ են  
հայտարարում»:

Հակառակ շատ մենչևիկների, բուճողովցիները, արտա-  
հայտելով հրեյական լայն մասսաների տրամադրութունը,  
հավանութուն են տալիս Մոսկվայի զինված ապստամբու-  
թյանը: «Ռուսական հեղափոխութունը — գրում էր «Բուճի»

որդան «Еврейский Рабочий» — իր զարգացման նոր  
ֆազն է մտնում. ընդհանուր գործադուլը փոխվում է զին-  
ված ապստամբութեան: Ապստամբութեան փորձեր կատար-  
վել են և առաջ, — հիշենք Լոձը, Լիեսան, — սակայն նրանք  
յեղել են հազվագյուտ ու բացառիկ և անկարող էյին փո-  
խել համաուսական գործադուլի ընդհանուր բնույթը, վորը  
ընդհանրապես մնաց իբրև «ձեռքերը խաչած» գործադուլ:  
Դեկտեմբերին մենք առաջին անգամ հեղափոխութեան որ-  
հասական գագաթի այն կողմը զգացինք և վտոք դրինք  
«ավետյաց յերկիրը», դեպի ուր ձգտում էր տարածվել հե-  
ղափոխական շարժումը... Մոսկվան ցույց տվեց, վոր զին-  
ված ապստամբութունը հնարավոր է, վոր նրա պատմակա-  
նորեն սրբագործված ձևը՝ բարեկաղային կոփվել է կարող  
հնացած համարվել»:

«Բուճի» այն ժամանակ բավական հեռու յերկանգնած  
այնպիսի ստոր մենչևիկներից, վորոնք ասում էին. «Կա-  
րիք չկար զենքի դիմել»... «Բուճի» մանր-բուրժուական  
առաջնորդները դեպի ձախ թեքվեցին, վորովհետև հեղա-  
փոխութունը դեկտեմբերյան ապստամբութեան մոմենտին  
հասավ իր կուլմինացիոն (ամենաբարձր) կետին: Սակայն  
հետագայում, յերբ սկսեց ուժեղանալ սեպտեմբերյան պրո-  
առաջնորդները թեքվեցին դեպի աջ, Բայց հրեյական պրո-  
լետարիատը 1905 թվի հեղափոխութեան ժամանակաշրջա-  
նում ակտիվ կերպով դուրս է գալիս ուս և լեն բանվոր-  
ների հետ՝ բոլոր ազգութունների բանվորների հետ միասին:

Հատուկ պայմաններում էր ընթանում  
Լասվիայում պայքարը Մերձբալտյան շրջանում, վորն  
այն ժամանակ մտնում էր ուսական կայ-  
սրութեան մեջ: Լատիշ բանվորների հեղափոխական շար-  
ժումը 1905 թվին հասավ ավելի մեծ բարձրութեան:

«Ռուսաստանի մնացած մասում և վոչ մի տեղ բուճ-  
ժուական հեղափոխութեան բոլոր հտապն էրը՝  
սկսած նրա առաջին քայլերից մինչև զինված ապստամբու-  
թյունը միաժամանակ չհն անցել այդպես հետևողակա-  
նորեն և արագ: Ռուսաստանի մնացած մասի զանազան

վայրերում այդ ետապներն, իհարկե, անցնում էին ավելի վեհ, ավելի լայն մասսաների մասնակցութեամբ և այլն, բայց վոչ մի տեղ նրանք այդպես կենտրոնացված\* չեն յեղել:

Այդ պատճառով, հեղափոխութեան պատմաբանի առջև այստեղ, ընդհանրապես, բացվում է, կարծես, իբրև վորոշ տեսակի նմուշ, վորոշ եկսպերիմենտալ\*\* լաբորատորիա: Դա՛ Լատվիայի 1905 թվի հեղափոխութեան և՛ ուժեղ, և՛ միաժամանակ թույլ կողմն է: Մասամբ, կտրված ընդհանուր հեղափոխութեանից, դուրս՝ նրա միասնական ղեկավարութեանից, նա չափազանց առաջ է անցնում և դրանից հետո, մասամբ հատկապես և այդ պատճառով, դաժան հակահեղափոխութեանից կրկնապատիկ զոհեր է կրում, վորոնք այստեղ նույնպես կենտրոնանում են փոքր տարածութեան և փոքրաթիվ մարդկանց վրա. ահա թե ինչու այդ զոհերը այդպես սարսափելի յեն» (Պ. Մտուչկա):

Շարժումը յուրահատուկ ետապներով Լեհաստան անցավ և մյուս ծայրագավառային ոայոնները, վորոնք 1905 թվին կազմում էին Ռուսաստանի անբաժան մասը՝ Լեհաստանում և Ֆինլանդիայում: «Լեհաստանում 1905 թ. հեղափոխական շարժումը դասակարգային պայքարի արտակարգ սրված բնույթ ստացավ, վորովհետև բուրժուազիան ամբողջովին հակահեղափոխական բանակումն էր գտնվում: Գյուղացիութեանը մասսայորեն հակահեղափոխական տարր էր. միայն բարձրները, մասամբ նաև սակավահող գյուղացիները գնացին քաղաքի «պրոլետարիատի» հետ (Пестковский и Красный, „Рев. Движ. в Польше“, „1905“, изд. Истпарта, III книга, вып. I):

Ֆինլանդիայում գործը բացարձակ զինված յելույթի չհասավ, յեթե չհաշվենք Սվեաբորգի նավատիների ապստամբութեանը: 1905 թվի ընթացքում, Ֆինլանդիայի բանվոր դասակարգը չստեղծեց իսկական հեղափո-


\* Միացված:

\*\* Փորձնական:

խական բոյլճեկյան կուսակցութեան և այդ եր, վոր նրան զինաթափ արավ ռեակցիայի դեմ ունեցած պայքարում:

Մենք վերը թեթևակի հիշատակեցինք գավառներում, կենտրոնական նահանգներում, Ուկրայինայում, Կովկասում (Գուրիայի ապստամբութեանը) տեղի ունեցած հեղափոխական շարժման մասին:

Դժբախտաբար վոչ ուսսախոս ազգութեանների հեղափոխական շարժման վերաբերյալ նյութեր ժողովված և հրատարակված են աննշան չափով, այնպես վոր ներկայաց-



1905 թ. դեկտեմբերը պրովինցիայում:

նել 1905 թվի հեղափոխութեան մեջ այդ ազգութեանների աշխատավորութեան մասնակցութեան լրիվ պատկերը՝ հարցի հետազոտութեան ամբողջ ետապում անհնարին բան է: Յեղած նյութերի հիման վրա ընկ. Ս. Դիմանշտեյնը գալիս է հետևյալ յեզրակացութեան.

«Հեղափոխական յելույթները կուլմինացիոն կետերը ծայրագավառներում և Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում ժամանակի տեսակետից չեն զուգադիպում, ինչպես այդ տեղի ունեցավ և ազրարային յելույթների

նկատմամբ: Յերբ ծայրագավառներն արդեն ուժասպառ են լինում, այն ժամանակ միայն 1905 թվի դեկտեմբերին կենտրոնը հասնում է իր զենիտին\*): Բացի դրանից, դեկտեմբերին ծայրագավառներում բարիկաղային կոիվների փորձն արդեն կապված էր այնտեղ կրած պարտութունների հետ, մինչդեռ Մոսկվայում՝ հա զեռ նոր սկսվեց: Ահա թե ինչու ծայրագավառներում տեղի չունեցան համանման յեւույթներ: Ընդհանրապես ծայրագավառները կատաղի, յերկարատև բարիկաղային կոիվների համար ավելի քիչ էլին հարմար, քան կենտրոնները: Կազմակերպչական տեսակետից Հեղափոխական ծայրագավառներն ավելի բարձր էլին կանգնած, սակայն վոչ ուղղմունակութան տեսակետից՝ ուժեղ ըստ ազգութունների բաժան-բաժան լինելու պատճառով: Մոսկվայի ապստամբութունը հանդիսանում է 1905 թվի հեղափոխութան ամենախոշոր մարտական ակտը, վորին հավասարը ծայրագավառներում չի յեղել»:

### X. ՇԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԲՈՅՆՇԵՎԻԿՆԵՐ, ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐ-ՏՐՈՑԿԻՍՏՆԵՐ

1905 թվի հեղափոխութունը մասսայական պայքարի փորձով ապացուցեց բոյլշևիկյան կուսակցութան քաղաքական հեռատեսութունը, հեղափոխութան ժամանակաշրջանի շարժիչ ուժերի և տակտիկայի զնահատութան ճշտութունը: Ինչի մասին էլին վիճում բոյլշևիկները վեճեր զինված և մենշևիկները: Մենշևիկները, հակառակ ապստամբութան մասին բոյլշևիկների, սերտ միութուն էլին վերտրում լիբերալ բուրժուազիայի հետ և զեմսկի կամպանիայի պլան էլին կազմում (մասնակցելով բանկետներին և ինքնավարութան որդանները խնդրագրերին), համոզված լինելով, վոր բուրժուազիան կմնա իբրև հեղափոխական դասակարգ մինչև ինքնակալութան պարտութունը: Մենշևիկները զինված ապստամբութան պատրաստվելու լողունգից սարսափում էլին

\* ) Վերելքի ամենաբարձր մոմենտ.

ավելի՞ քան կրակից: «ТАК ЛИ МЫ ГОТОВИМСЯ» հողվածում, մենշևիկների առաջնորդներից մեկը՝ Մարտովը, գրում էր «Ել ինչ յեւույթի պատրաստութան մասին կարող է խոսք լինել մեր կուսակցութան մեջ: Ցավոք սրտի պետք է արձանագրել, վոր այդ հարցի վերաբերյալ մեր ընկերների արձանագրել, սկսում է ուժեղ կերպով յերևան դալ զուտ ուտո-շրջանում սկսում է ուժեղ կերպով յերևան դալ զուտ ուտո-պիական տեսակետ, վորը սպառնում է նրանց շատ հեռուն տանել պրոլետարիատի դասակարգային պայքարի հունից»: Հետո, Մարտովն ապացուցում էր, վոր «մեր կուսակցութան և ամբողջ գիտակից պրոլետարիատի՝ միանգամայն հնարավոր յեւույթի քաղաքական պատրաստականութունը պետք է կայանա ազիտացիան խորացնելու և լայնացնելու, պրոլետարիատի բոլոր հեղափոխական տարրերի կազմակերպումը ամբացնելու և զարգացնելու», բայց վոչ բնավ անմիջական զինված ապստամբութուն պատրաստելու մեջ: «Ընդհատակյա կազմակերպութունների բոլոր ջանքերը, գրում է մենշևիկյան «Աքրա»-ն, վոչ մի նշանակութուն չեն կարող ունենալ, յեթե նրանք անկարող լինեն ժողովրդին զինել միակ անփոխարինելի զենքով՝ ինքնակալութան վրա հարձակվելու և դրա համար զինվելու այրող պահանջով: Ահա թե ուր պետք է ուղղենք մեր ջանքերը՝ մասսաների մեջ՝ ապստամբութան նպատակով ինքնազինման պրոպագանդ մղելու»:

«Այո, այո, իսկապես վոր դա նշանակում է հարցին խորը մոտեցում, հեզնանքով առարկում է Վլադիմեր Իլիչը՝ ծանրութան կենտրոնը վոչ թե զինման աշխատանքի մեջ է և վոչ էլ կազմակերպութան սխտեմատիկ նախապատրաստութան մեջ, այլ ժողովուրդը զինվելու և այն էլ ինքնա-զինվելու այրող պահանջով զինելու մեջ: Ամոթի ինչպիսի այրող զգացում էս ապրում սոցիալ-դեմոկրատներին փոխա-վորը զգացում էս այդ ֆիլիստերական ստորութունը, բեն, յերբ տեսնում էս այդ ֆիլիստերական ստորութունը: «Ժողովորն աշխատում է յետ քաշել մեր շարժումը»: «Ժողովուրդը զինել զինվելու այրող պահանջով՝ սոցիալ-դեմո-կրատիայի մշտական և ընդհանուր, ամենորյա և ամեն տեղի խնդիրն է, մի խնդիր, վորը միատեսակ կիրառվում է

և՛ Յապոնիայի, և՛ Անգլիայի, և՛ Գերմանիայի և Ռուսիայի վերաբերյալ: Հենց առորյա աշխատանքի այդ պայմաններին են տարբերվում այժմ պայմանները Ռուսաստանում: Հենց այդ պատճառով հեղափոխական սոցիալ-դեմոկրատները, վորոնք մինչև այժմս զենքի չեն կոչել, բայց միշտ ել բանվորներին զինել են զինվելու այրող պահանջով, հիմա այդ հեղափոխական սոցիալ-դեմոկրատները զնալով հեղափոխական ձեռներեց բանվորների յեակից, լողունգ են արձակել՝ դեպի զենք: Յեվ ահա այսպիսի մի մոմենտում, յերբ արդեն, վերջապես, արձակված է այդ լողունգը, „Աс-кpa“ -ն ճառում է՝ «ժանրության կենտրոնը զինվելու մեջ չէ, այլ ինքնազինվելու այրող պահանջի մեջ»:

Բոլշևիկները բացարձակորեն արտահայտվում են իբրև զինված ապստամբության կողմնակիցներ:

Կուսակցության III Համագումարում, վոր արդեն տեղի ունեցավ «Արյունոտ Կյուրակի»-ի դասից հետո, 1905 թվի մայիսին, բոլշևիկներն ընդունում են, վոր «զինված ապստամբության միջոցով ինքնակալության դեմ մղվող անմիջական պայքարի համար պրոլետարիատին կազմակերպելու խնդիրը, ներկա հեղափոխական մոմենտում, հանդիսանում է կուսակցության ամենազլխավոր և անհետաձգելի խնդիրներից մեկը\*):

\*) Իբրում ենք կուսակցության III Համագումարի բանաձևը զինված ապստամբության մասին.

«Նկատի ունենալով՝

1) վոր պրոլետարիատն, իր դրությամը լինելով ամենաառաջավոր և մեկ հեղափոխական դասակարգը, այդ իսկ պատճառով կոչված է զեկավար դեր խաղալ Ռուսաստանի ընդհանուր դեմոկրատական հեղափոխական շարժման մեջ.

2) վոր այդ շարժումը ներկա մոմենտում արդեն առաջ է բերել զինված ապստամբության անհրաժեշտությունը.

3) վոր պրոլետարիատն այդ ապստամբության մեջ անխուսափելիորեն կընդունի ամենայնոհմուն մասնակցությունը, վորը կվորոշի հեղափոխության բաղը Ռուսաստանում.

4) վոր այդ հեղափոխության մեջ պրոլետարիատը կարող է զեկավար դեր խաղալ միմիայն ձուլված լինելով իբրև միասնական և ինքնուրույն քաղաքական ուժ սոցիալ-դեմոկրատական բանվորական կու-

Մենշևիկները մերժում էին բոլշևիկներին՝ զինված ապստամբություն, հեղափոխական բանակ և հեղափոխական Կառավարություն լողունգները և այդ «յերրյակը» փոխարինում էին «հեղափոխական ինքնավարություն» մի պոչառ պահանջով:

Մենշևիկյան այդ լողունգի մասին կենինը գրում եր.

«Նախ և առաջ զուտ տեսականորեն ճիշտ չէ առաջի պլանում դնել հեղափոխական ինքնավարության այդ լողունգը՝ ժողովրդի ինքնակալության լողունգի փոխարեն: Առաջինը վերաբերում է կառավարման, յերկրորդը՝ պետության կազմակերպման: Այդ պատճառով, առաջինը կարելի չէ կապամակերպման: Այդ պատճառով, առաջինը կարելի չէ կապակցել բուրժուական «համաձայնություն» դավաճանական կաթերիային, յերկրորդը՝ անկասկած վոչ: Առաջինը ըն-

սակցության դրոշակի տակ, վորը զեկավարում է նրա պայքարը վոչ միայն դադարեցնելու պես՝ այլ և գործնականապես.

5) վոր միայն այդպիսի դերի կատարումը պրոլետարիատի համար կարող է ապահովել բուրժուական-դեմոկրատական Ռուսաստանի ունեոր դասակարգի դեմ մղվող սոցիալիզմի պայքարի ամենաձեռնառ պայմանները.

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության III-րդ համագումարը ընդունում է, վոր զինված ապստամբության միջոցով ինքնակալության դեմ մղվող անմիջական պայքարի համար պրոլետարիատին կազմակերպելու խնդիրը, ներկա հեղափոխական մոմենտում, հանդիսանում է կուսակցության ամենազլխավոր ու անհետաձգելի խնդիրներից մեկը:

Այդ պատճառով Համագումարը բոլոր կուսակցական կազմակերպություններին հանձնարարում է.

ա) պրոպագանդի և ագիտացիայի միջոցով պարզաբանել պրոլետարիատին առաջիկա զինված ապստամբության վոչ միայն քաղաքական նշանակությունը, այլ և գործնական-կազմակերպչական կողմը.

բ) այդ պրոպագանդի և ագիտացիայի ժամանակ պարզաբանել մասսայական քաղաքական գործադուլները դերը, վորոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ ինչպես ապստամբության սկզբում, նույնպես և ապստամբության ընթացքում.

գ) ամենայնոհմուն միջոցներ ձեռք առնել պրոլետարիատին զինելու, նմանապես և զինված ապստամբության և նրա անմիջական զեկավարության պլանը մշակելու համար, կազմակերպելով գրա համար ըստ կարիքի, կուսակցական աշխատավորներից հատուկ խմբեր:

դունելի յե ոսվորոժդենցիներին\* համար, յերկրորդը անընդունելի յե:

Յերկրորդ՝ հեղափոխական ինքնավարութեան կազմակերպումը նույնացնել համաժողովրդական զինված ապստամբութեան կազմակերպման՝ միանգամայն անմտութունն է: Ապստամբութունը քաղաքացիական պատերազմն է, իսկ պատերազմը բանակն է պահանջում, միչդեռ ինքնավարութունը ինքնստիճեցյան բանակ չի պահանջում: Կան յերկրներ, ուր գոյութուն ունի ինքնավարութուն, սակայն բանակ չկա: Յեզ հեղափոխական ինքնավարութունը հեղափոխական բանակ չի պահանջում այնտեղ, ուր հեղափոխութունը կատարվում է Նորվեգիայի նման, վորտեղ նախապես արձակեցին թագավորին և ապա հարցրին ժողովրդի կարծիքը: Բայց հեղափոխական ինքնավարութունը նույնացնել հեղափոխական բանակին, առաջ քաշել առաջինը և լռել յերկրորդի մասին այն դեպքում, յերբ բանակի վրա հենվող ու քաղաքացիական պատերազմ սկսող դեսպոտիզմը ճնշել և ժողովրդին՝ դառողակի անասելի ստորութունն է, վորը հավասար է կամ հեղափոխութեան դավաճանութեան, կամ ծայր աստիճանի անմտութունն:

Լենինը վերջացնում է այսպես. «Ժամանակակից ուսական իրականութունը պարզ կերպով ցույց է տալիս «հեղափոխական ինքնավարութեան» լողունգի անբավարար լինելը և ապստամբութեան ուղղակի ու ճիշտ լողունգի անհրաժեշտութեանը»:

Ապստամբութեան ոեակցիոն յերկրորդ վեներ ժամանակավոր հեղափոխական կառավարութեան կազմին մասնակցելու հնարավորութունը, վորը կարող էր հիմնվել ինքնակալութեան փլատակներին վրա: Բոյլշևիկները հնարավոր էլին համարում ինքնակալութունը տապալելուց հետո՝ վորոշ պայմաններով, իշխանութունը բաժանել հե-

\* Ոսվորոժդենցիներ համարվում էլին լիբերալ բուրժուանները, վոր հրատարակում էին «Освобождение» քրգանը:

ղափոխական մանր բուրժուադիայի հետ: Իսկ մենշևիկները վախենում էլին, վոր նման տակտիկա կիրառելով, բանվոր դասակարգի կուսակցութունը հարկադրված կլինի գյուղացիութեան տեսակետ ընդունել և չի կարող իր դասակարգային ինքնուրույնութունը պահպանել: Նման տակտիկայի դեպքում բոյլշևիկներին՝ մենշևիկներին կարծիքով սպառնում էր վերասեռման և բուրժուական կառավարութեան հավելյալ մի մասը դառնալու վտանգը: Սոցիալ-դեմոկրատիան—ասում էլին մենշևիկները — «պետք է ձգտի հեղափոխութեան ամբողջ ընթացում այնպիսի դիրք բռնել, վորը ամենից լավ կերպով կապահովի հեղափոխութունը առաջ տանելու հնարավորութունը, բուրժուական կուսակցութունների անհետևողական և շահախնդիր քաղաքականութեան դեմ մղվող պայքարում չկապի նրա ձեռքերը և պաշտպանի նրան բուրժուական դեմոկրատիայի մեջ տարրալուծվելուց: Այդ պատճառով սոցիալ-դեմոկրատիան իրեն չպետք է նպատակ դնի ճառով սոցիալ-դեմոկրատիան ժամանակ իշխանութունը ժամանակավոր կառավարութեան ժամանակ իշխանութունը դրավելը կամ բաժանելը, այլ պետք է մնա իբրև ամենահեղափոխական ուղղիցիայի կուսակցութուն»:

Լենինը ջախջախեց ուղղորտունիզմով (համաձայնողական վողով) անված մենշևիկյան այդ պատճառաբանութունները: Լենինը հեղափոխութեան ավելի հավանական յեղքը համարում էր վոչ թե պարզապես թագավորի իրավունքները համարում էր ինքնակալին սահմանադրական միասակային ու ինքնակալութեան լիակատար կործանումը: «Սակայն, յեթե ինքնակալ կառավարութունը իրոք տապալվի, շարունակում է Լենինը, ապա նա պետք է փոխարինվի մեկ ուրիշով: Իսկ այդ ուրիշը կարող է լինել միմիայն ժամանակավոր հեղափոխական կառավարութունը: Նա կարող է հենվել միայն հեղափոխական ժողովրդի վրա, այսինքն՝ պրոլետարիատի և գյուղացիութեան վրա: Նա կարող է միմիայն զիլատատուրա լինել, այսինքն՝ վոչ թե պարզապես «կարգապահութեան», այլ պատերազմի կազմակերպող թյուն: Ով գրոհով է հարձակվում բերդի վրա, նա չի կարող հրաժարվել շարունակել պատերազմը նաև բերդը գրավե-

լուց հետո: Յերկուսից մեկը՝ կամ բերդը պետք է գրավել մեր ձեռքում պահելու համար, կամ գրոհի չանցնել ու հայտարարել, վոր մի փոքրիկ տեղ ենք ուզում բերդի պատերի տակ\*:

\* Կուսակցության III համագումարը Վ. Ի. Լենինի ղեկուցման առթիվ ժամանակավոր Հեղափոխական Կառավարության մասին, ընդունեց հետևյալ բանաձևը.

Նկատի ունենալով՝

1) վոր, ինչպես պրոլետարիատի անմիջական շահերը, նույնպես և սոցիալիզմի վերջնական նպատակները համար մղվող նրա պայքարի շահերը, պահանջում են հնարավորության չափ լրակատար քաղաքական ազատություն, և, հետևապես, կառավարման ինքնակալական ձևը դեմոկրատական հանրապետությանը փոխարինում.

2) վոր Ռուսաստանում դեմոկրատիկ հանրապետություն կազմակերպելը հնարավոր է միմիայն իբրև հետևանք ժողովրդական հաղթական ապստամբության, վորի որդանը հանդիսանելու յե ժամանակավոր Հեղափոխական Կառավարությունը, միակը, վորն ընդունակ է ապահովել նախընտրական ազդեցության ազատությունը և հրավիրել՝ պաղտնի ձայնատվությանը՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա Սահմանադիր ժողով, վորը իրոք պետի հանդիսանա ժողովրդի կամքի արտահայտիչը.

3) վոր Ռուսաստանի տվյալ հասարակական-տնտեսական կարգում այդ դեմոկրատական հեղաշրջումը վոչ թե կթուլացնի, այլ կուժեղացնի բուրժուազիայի տիրապետությունը, վորը կանդ չունենալով վոչ մի բանի հանդեպ վորոշ մոմենտում, անխուսափելիորեն, կփորձի Ռուսաստանի պրոլետարիատից խլել հեղափոխական շրջանի նվաճումների հնարավորին չափ մեծ մասը.

Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության

III Համագումարը վորոշում է.

ա) անհրաժեշտ է բանվոր դասակարգին կոնկրետ կերպով պարզաբանել հեղափոխության ամենահավանական ընթացքը և վորոշ մոմենտում ժամանակավոր Հեղափոխական Կառավարություն ստեղծելու հնարավորության մասին, վորից պրոլետարիատը պետի պահանջի իրագործել մեր ծրագրի (ծրագիր-միևիմուսի) բոլոր մոտակա քաղաքական և տնտեսական պահանջները.

բ) նայած ուժերի և նախապես ձիշտ վորոշման չենթարկվող այլ ֆակտորները հարաբերակցության, թույլատրվում է ժամանակավոր Հեղափոխական Կառավարության մեջ մեր կուսակցության լիազորներին մասնակցությունը՝ բոլոր հակահեղափոխական փորձերի դեմ անխնայ պայքար մղելու և բանվոր դասակարգի ինքնուրույն շահերը պաշտպանելու նպատակով.

— Մենք կարիք չունենք հետամուտ լինել Հեղափոխական Կառավարության մեջ պորտֆելներ ստանալուն, ասում էյին մենչևիկները: — Մենք պետք է միանք իբրև ծայրահեղ հեղափոխական ուղղության: Իսկ իշխանությունը ամբողջովին և անբաժանելիորեն պետք է գտնվի բուրժուազիայի՝ իբրև բուրժուական հեղափոխության ղեկավարի՝ ձեռքին\*:

Մենչևիկները գտնում էյին, վոր բուրժուական հեղափոխության մեջ, այսինքն այնպիսի հեղափոխության, վորտեղ առաջին պլանում դրվում է կիսաճորտական կալվածատիրական-ֆեոդալական հասարակակարգը վերացնելու խնդիր, ամբողջ իշխանությունը պետք է լինի բուրժուազիայի ձեռքին, իսկ բանվոր դասակարգը պետք է գործե իբրև ծայրահեղ ուղղության՝ միայն «ներքևից»:  
«Մա բուրժուական հեղափոխություն է՝ ասել ենք մենք միշտ», գրում էր մենչևիկ Ա. Մարտինովը: Յեթե այդպես է, ապա պրոլետարիատը չպետք է իշխանությունը իր ձեռքն առնի:

գ) այդպիսի մասնակցության իբրև անհրաժեշտ պայման համարվում է կուսակցության կողմից լիազորների վրա ունենալի խիստ հսկողությունը և սոցիալ-դեմոկրատիայի անկախության անշեղ պաշտպանությունը (ս. - դ.) ձգտելով լրակատար սոցիալիստական հեղաշրջման՝ անհաշտ փորձերով բուրժուական կուսակցություններին: Սոցիալ-դեմոկրատիայի անկախության անշեղ պաշտպանությունը.

դ) անկախ այն հանգամանքից, թե հնարավոր կլինի արդյոք սոցիալ-դեմոկրատներին մասնակցությունը ժամանակավոր Հեղափոխական Կառավարության մեջ, անհրաժեշտ է պրոլետարիատի ամենալուր խավերում վարության մեջ, անհրաժեշտ է պրոլետարիատի ղեկավարած և զինված պրոպագանդան անել սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարած և զինված պրոպագանդան կողմից ժամանակավոր Կառավարության վրա մշտապես ներգործելու գաղափարը՝ հեղափոխության հաղթանակները լայնացման և հաստատման նպատակով:

\* Մեզ չպետք է գործացնի, վոր 1917 թվին, կերենշիշայի շրջանում, յերբ հարկավոր էր նեցուկ հանդիսանալ հակահեղափոխական բուրժուազիայի կործանվող իշխանությունը, մենչևիկները (և եսերները) մասնակցությունը հարկավոր Կառավարության մեջ 1917 թ., ինչպես և 1905 թ., մենչևիկները իրենց զլխավոր պարտականությունն էյին համարում պաշտպանել բուրժուազիային՝ պրոլետարիատի և նրա կուսակցության՝ բոլորիկներին կուսակցության «չափազանց սրահանջները» հանդեպ:

Ինչպէս եւ կայանում բոյլը կիկնների բռնած դիրքի տարբերութիւնը մենշկիկներին: Դեմոկրատական հեղափոխութեան մեջ պրոլետարիատի դաշնակիցների հարցը վերաբերյալ ամենասուր տարածայնութիւնները կապված չեն բոյլը կիկնների և մենշկիկների կողմից տրված հեղափոխութեան բնույթի ընդհանուր գնահատութիւնից: Թե՛ նա և թե՛ մյուսը մոտակա հեղափոխութիւնն ընդունում ելին իբրև բուրժուական հեղափոխութիւն: Վիճում ելին ըստ ելութեան այն մասին, թե ի՞նչպես «բուրժուական հեղափոխութիւնը հասցնել վախճանին»:

Մենշկիկները հույս ունեյին հանձնին Պրոլետարիատի լիբերալ բուրժուազիայի ձեռք բերել վստահելի դաշնակից: «Մենք իրավունք ունենք հույս դնել բուրժուական դեմոկրատիայի հեղափոխականացման վրա», գրում եր միևնույն Ա. Մարտինովը: Ընդհակառակը, դեպի գյուղացիութիւնը՝ վորպես հեղափոխական շարժիչ ուժի, մենշկիկները վերաբերվում ելին անվստահութեամբ:

Մինչդեռ բոյլը կիկնները դաշնակիցներ վնտրում ելին ամենից առաջ և զլխավորապես գյուղացիութեան մեջ: «Այդ հսկայական խավի (գյուղացիութիւն) մեջ՝ գրում եր Լեւինինը — հենց այն սլատճառով, վոր դեմոկրատական հեղաշրջումը դեռ չի կատարված, պրոլետարիատի հետ քաղաքական ձևերի իրացման ասպարիզում նա ավելի մեծ շահեր ունի, քան «բուրժուազիայի» մեջ՝ այս բառի իսկական ու սահմանափակ իմաստով»:

Կուսակցութեան III համագումարում, Լեւինին իր գեկուցման մեջ մանրամասն գարգացնում ե այդ միտքը և ասպարցում, վոր անհրաժեշտ ե գյուղացիութեան ներս քաշել պրոլետարիատի հեղափոխական պայքարի մեջ, վոր անհրաժեշտ ե պաշտպանել գյուղացիների ամեն տեսակի ազրարային շարժումը, կանգ չառնելով կալվածատերերի հողերը բռնագրավելու առջև և դրա հետ

միասին, խորացնել հենց գյուղացիութեան ներսում յեղած դասակարգային հակասութիւնները:

«Իր ինքուրույնութեան, իր սովորութեան, իր հաստատակամութեան ուժով դեպ իրեն գրավել ճնշված, լքված, գյուղացիութեան տատանվող, անկայուն, յերերուն մասսային, մանր-բուրժուական դեմոկրատիային, կտրել նրան դավաճան լիբերալ բուրժուակից ու այդպիսով վերահսկողութիւն ունենալ այդ բուրժուազիայի վրա և ժողովրդական մասսայական շարժման զլուխն անցած՝ ջախջախել նդոված ինքնակալութիւնը, — այս ե բուրժուական հեղափոխութեան ժամանակ սոցիալիստական պրոլետարիատի խնդիրը»:

Լեւինի այս խոսքերից յերևում ե, վոր, առաջադրելով պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի լողունգը, բոյլը կիկնները վորոշակի ընդգծում ելին բանվոր դասակարգի դեկավար դերը այդ դիկտատուրայի մեջ: Բոյլը կիկններն աշխատում ելին հաստատուն կերպով ամրացնել ուսկցիային հաղթահարելու համար անհրաժեշտ բանվորների և գյուղացիների միութիւնը:\*

\* Ահա կուսակցութեան III համագումարի բանաձևը՝ գյուղացիական շարժման վերաբերմունքի մասին.

- « Նկատի առնելով.
- 1) վոր ներկայումս աճող գյուղացիական շարժումը, հանդիսանալով տարերային և քաղաքականապես անդիտակից, այնուամենայնիվ անխուսափելիորեն ուղղվում ե ընդդեմ գյուղութիւն ունեցող հասարակարգի և ընդհանրապես, ճորտատիրութեան բոլոր մնացորդներին դեմ.
- 2) վոր սոցիալ-դեմոկրատիայի նպատակներին մեջ մտնում ե գոյութիւն ունեցող հասարակական և քաղաքական կարգի դեմ յեղած յուրաքանչյուր հեղափոխական շարժման պաշտպանութիւնը.
- 3) վոր դրա հետևանքով սոցիալ-դեմոկրատիան պետք ե աշխատի գյուղացիական շարժման հեղափոխական դեմոկրատական բովանդակութիւնը մաքրել ամեն տեսակի ուսակցիոն խառնուրդներից, զարգացնելով գյուղացիներին հեղափոխական ինքնագիտակցութիւնը և մինչև վերջը հասցնելով նրանց դեմոկրատական պահանջները.
- 4) վոր սոցիալ-դեմոկրատիան, իբրև պրոլետարիատի կուսակցութիւն, պետք ե ամեն դեպքում և ամեն հանգամանքներում անշեղորեն ձգտի գյուղական պրոլետարիատի ինքնուրույն կազմակերպման և սլորդաբանել նրան՝ նրա շահերի անհաշտ ներհակութիւնը գյուղացիական բուրժուազիայի շահերին, — Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական



կտա նրան Ռուսաստանի բուրժուական հեղափոխութեան ժամանակավոր կոնյունկտուրան, նա կձգի ամբողջ կապիտալիստական աշխարհի դասակարգային պայքարի կշեռքի նժարին:

Չեռքում պետական իշխանութունը, յետևից՝ հակահեղափոխութունը, առաջից՝ երոպական ռեակցիան, նա ամբողջ աշխարհի իր յեղբայրակիցներին իր վաղեմի կոչը կհնետի, վորն այս անգամ կլինի վերջին գրոհի կոչ՝ «Պրոլետարներ բոլոր յերկիրներ, միացե՛ք...» Ռուս պրոլետարիատը դաշնակիցներ կարող և գտնել միմիայն զբուրժուականներն և կառավարչներն սոցիալիստական հեղափոխութունն:

Յերկրի ներսում պրոլետարիատը դաշնակիցներ չի գտնի: Յեկս առավել, նա «թշնամական բաղխումներ կունենա վոչ միայն բուրժուազիայի բոլոր խմբավորումների հետ, վորոնք պաշտպանում եյին նրան իր հեղափոխական պայքարի առաջին շրջանում, այլ և գյուղացիութեան լայն մասսաների հետ (ընդգծումը մերն է), վորոնց աջակցութեամբ նա իշխանութեան հասավ»:

Տրոցկու հայացքները հիմնովին սխալ եյին, վորովհետև «պերմանենտ հեղափոխութեան» իր թեորիայով Տրոցկին փորձում էր «ցատկել» գյուղացիութեան վրայով, հաշվի չառնելով շարժիչ ուժերի ունակ հարաբերութունը:

Տրոցկին աղջատել է պերմանենտ հեղափոխութեան սխեման, վորը դեռ անցած դարի կեսերին տվել է Կարլ Մարքսը: Անընդհատ հեղափոխութուն ասելով ինչ էր հասկանում գիտական սոցիալիզմի հիմնադիրը: Մարքսն անընդհատ հեղափոխութուն ասելով հասկանում էր այնպիսի հեղափոխութուն, վորը միշտ դարգանում է «բարձրացող գծով», սակայն Մարքսը դեմոկրատական հեղափոխութեան ժամանակ պրոլետարիատի դաշնակիցներ թվից դեն չեր գցում նրա հիմնական դաշնակիցն՝ գյուղացիութեան:

Լենինը կողմնակից էր մարքսյան և վոչ տրոցկիստական անընդհատ հեղափոխութեան:

«Դեմոկրատական հեղափոխութունից մենք իսկույն և յեթ, — գրում էր Լենինը — կսկսենք անցնել և իսկապես մեր

ուժի, գիտակից կադմակերպված պրոլետարիատի ուժի համապատասխան, կանցնենք սոցիալիստական հեղափոխութեան: Մենք կանգ չենք առնի կես ճամբին»...  
Այդ նույն միտքը կրկնում է Լենինը մի այլ տեղ:

«Ներկա հեղափոխութեան լիակատար հաղթանակը կհանդիսանա դեմոկրատական հեղաշրջման վերջը և սոցիալիստական հեղաշրջման վճռական պայքարի սկիզբը: Ժամանակակից գյուղացիութեան պահանջների իրագործումը, ռեակցիայի լիակատար ջախջախումը, դեմոկրատական հանրապետութեան նվաճումները — կհանդիսանա բուրժուազիայի, անգամ մանր բուրժուազիայի հեղափոխականութեան լրելվ վախճանը, — կլինի հանուն սոցիալիզմի տարվող իսկական պայքարի սկիզբը: Վորքան լիակատար լինի դեմոկրատական հեղաշրջումը, այնքան շուտ, լայն, հստակ, վճռական կծավարվի այդ նոր պայքարը»:

Լենինը սպանիչ հեզմանքով էր վերաբերվում Տրոցկու «որիզինել» թեորիային, կու մասին ասելով, վոր այդ թեորիան «բոյլը կհեղձնի» վերցնում է պրոլետարիատի վճռական հեղափոխական պայքարի և քաղաքական իշխանութեան նվաճման կոչը, իսկ մենշևիկներին՝ գյուղացիութեան դերի «բացասումը»:<sup>\*</sup>

\* Տրոցկին այժմ էլ չի հրաժարվում իր քաղաքականպես սխալ և ֆեասակար «պերմանենտ հեղափոխութեան» թեորիայից: Այդ մասին նա գրում է իր «1905 թ.» (հրատ. 1922 թ.) գրքի առաջարանում: Մի այլ գրքում, «НОВЫЙ КУРС», Տրոցկին էլ ավելի վճռականորեն նկատում է. «...ինչ վերաբերում է պերմանենտ հեղափոխութեան թեորիային, յես վճռականպես պես հիմք չեմ գտնում բացասել այն, ինչ գրել եմ այդ առթիվ 1904—5 թ. և ավելի ուշ: Յես հիմա էլ գտնում եմ, վոր այն ժամանակ իմ գարգալեցրած մտքերի հիմնական ընթացքն անհամեմատ ավելի մոտ է լենինիզմի իսկական ելույթին, քան այն ժամանակվա մի շարք բուլշևիկները գրածներին շատ ու շատ բան»:

Ումիսակում գրած նամակում Տրոցկին պարզապես հայտնում է. «Յես բնավ չեմ գտնում, վեր բոյլը կհեղձնի» հետ ունեցած տարածայնույթյունները մեջյա ամեն ինչում անիրավացի յեմ յիղել... Գտնում եմ, վոր հեղափոխութեան շարժիչ ուժերը վերաբերյալ իմ գնահատութեանը անպայման ճիշտ է յեղել...»

# XI, 1905 ԹՎԻ ԴԱՍԵՐԸ

Հեղափոխութիւնն իր զարգացման գագաթնակետին հասնելուց հետո՝ 1905 թվի դեկտեմբերին՝ արագորեն ցած է իջնում: Բուրժուազիան վերջնականապես անցնում է հակահեղափոխականների բանակը: Վիտտեյին հաջողվում է ճարպիկ ֆինանսական մանյովրով բուրժուական «վերին խավին» կաշառել, բարձրացնելով մասնավոր բանկերի զեղչը ու վարկավորումը՝ 1905 թվի նոյեմբերին ու դեկտեմբերին զեղչը հասավ 138,5 միլ. ռուբլու՝ 83,1 միլ. ռուբլու փոխարեն 1904 թ., մասնավոր բանկերի վարկավորումը 1905 թ. առ 1 դեկտեմբերի հասավ 148,2 միլ. ռուբլու՝ 39 միլ. ռուբլ. դիմաց 1904 թ. նույն ամսին:

Պետական դումայում բուրժուազիայի ներկայացուցիչները շքեղ ճառեր արտասանեցին, իսկ յերբ կառավարութիւնն եյակն ոգնութիւնն եր հարկավոր, ինչպես որինակ արտասահմանյան փոխառութիւններ կնքելու ժամանակ, կառավարութիւնն այդ ոգնութիւնը ստացավ նույն «հեղափոխական» բուրժուազիայից: Կառավարութիւնը 1905 թվին հենվում էր միմիայն կալվածատերերի վրա, 1906 թվին նա ավելի լայն սոցիալական բազա ուներ՝ կալվածատերեր, կապիտալիստներ, արդյունաբերողներ, վաճառականներ և կուլակներ, վորոնք հնարավորութիւնն էին ստանում շահագործել չքավորներին ու միջակներին: Այդ պատճառով կառավարութիւնը լիբերալ բուրժուազիայի կողմից ցուցա-

Տրոցկին, եյազես, մեղանչում եր վոչ միայն գյուղացիութեան թեբազնահատութեան, այլ և բանվոր դասակարգի կարողութեան չհավատալու մեջ, քանի վոր չեր հավատում (և չի հավատում) մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորութեան, չեր հավատում (և չի հավատում) պրոլետարիատի գյուղացիութեանը ղեկավարելու ընդունակութեան: Այսպիսով տրոցկիզմի եյութիւնը կայանում է վոչ միայն պրոլետարիատի դաշնակիցների գերի սխալ գնահատութեան, վոչ միայն գյուղացիութեան թեբազնահատութեան, այլ և, գլխավորապես, հենց պրոլետարիատի և նրա գեկտատուրայի գերի սխալ լուսաբանութեան մեջ: Այդ հարկադրում է տրոցկիզմը համարել մենշեիզմի յուրատեսակ այլաձևութիւն:

հանած անհնազանդութեան պահանջ ներկայացնելու հենց առաջին փորձի իսկ դեպքում, համեմատաբար հեշտութեամբ է ցրում Առաջին Պետական Դուման, իսկ հետո և Յերկրորդ Դուման: Յերկրորդ Դումայի ցրումը 1907 թ. հունիսի 3-ին, ուղեկցվեց պետական հեղաշրջումով «վերևից»։ ընտրական որենքը վճռականորեն փոփոխվեց: Այնուհետև հունիսի 3-ի դումայում տեղերի կեսը ապահովված եր կալվածատերերի համար, իսկ քաղաքում կազմակերպվեցին յերկու ընտրական ատյաններ, մեկն առանձին՝ տնտեսների համար, մյուսը՝ մնացած ընտրողների համար: Սկսվեց քաղաքական ռեակցիայի դարեշրջանը, «ստալիպինյան փողկապներ» (կախաղաններ) եպոխան: Կառավարութիւնը հենվում է «գորեղ» ունևոր գյուղացու վրա, վորի առջև համայնքի լիկվիդացիայի և հողամասերի ու ագարակների ազատ կազմակերպման հիման վրա բացվում էին կապիտալիստական զարգացման հեռանկարներ:

Վոչ թե «վերևից», այլ «սերքերից» հեղաշրջում անելու փորձը՝ 1905 թ. հեղափոխութիւնը մոռացվել էր:

Հեղափոխութիւնը խեղդված էր: Ինչո՞վ բացատրել նրա պարտութիւնը: Մենք արդեն մատնանշել ենք հիմնական պատճառը — հեղափոխական շարժման յերկու հոսանքների՝ բանվորական և գյուղացիականի՝ ըստ ժամանակի և տեմպի չգուզաղիպելը: Այդ նույն կապակցութեամբ պետք է գնահատել ցարական բանակի վարքագիծը, վորը ընդհանուր առմամբ ինքնակալութեան ձեռքին մնում եր իբրև հլու գործիք: Սակայն այդ իհարկե, չի նշանակում, վոր ձիշտ չեր բոյլնելիզմի տակտիկան, վոր ճիշտ չեր բանվորների և գյուղացիների միութեան գաղափարը: Միանգամայն ընդհակառակը:

«Ռուսաստանի բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան խնդիրները նկատմամբ պրոլետարիատի հիմնական դիրքը մնում է անփոփոխ, գրում էր Լենինը — ղեկավարել դեմոկրատական գյուղացիութիւնը, դուրս կորզել նրան լիբերալ բուրժուա՝ կազեմների կառավարութեան ազդեցութեան տակից»:

Հեղափոխութեան պարտութեան յերկրող պատճառը՝ այն շրջանի բոլշևիկյան կուսակցութեան և նրա ղեկավարութեան թուլութիւնն էր:

„Уроки Московского восстания“ հոդվածում Լենինը գրում էր՝ «Մոսկվայի բոլոր հեղափոխական կուսակցութիւնները, բոլոր միութիւնները գործադուլ հայտարարելով գիտակցում էին, անգամ զգուցում էին, վոր գործադուլը անխուսափելիորեն պետք է փոխվի ապստամբութեան: Դեկտեմբերի 6-ին բանվորական պատգամավորների խորհուրդը վորոշեց «աշխատել գործադուլը փոխել զինված ապստամբութեան»: Սակայն, խակապիս, բոլոր կազմակերպութիւններն էլ պատրաստ չէին դրա համար, անգամ մարտական դրուժինաների կոալիցիոն խորհուրդը ապստամբութեան մասին խոսում էր (դեկտեմբերի 9-ին) ինչպես մի ինչ վոր հեռավոր բանի մասին և փողոցի կոփվել առաջ էր դնում առանց նրա գիտութեան ու մասնակցութեան: Կազմակերպութիւնները շարժման աճուճից ու թափից յետ մնացին»:

Հունվարի 9, հոկտեմբերյան գործադուլ, դեկտեմբերյան ապստամբութիւն՝ այդ բոլոր խոշորագույն ետապներում մեր կուսակցութիւնը չկարողացավ ամբողջովին զլխավորել շարժումը և իր ղեկավարութեամբ ընդգրկել բանվորական մասսան. կուսակցութիւնն այն ժամանակ զեռ բավականին փորձված չէր և հեղափոխութեան պրոցեսը նոր էր միայն կոփում իր ստրատեգիայի ու տակտիկայի հիմունքները: Շնորհիվ դրան, հեղափոխութիւնը զգալի չափով գլխատված էր: Պիտերի և այլ Խորհուրդներում մենշևիկների ղեկավարութեան սխալներն էլ ավելի բարդացրին գրութիւնը:

Հեղափոխութիւնը ցույց տվեց, վոր բոլշևիկները պրոգնոզը (նախատեսութիւն) արդարանում է: Զինված ապստամբութեան նախապատրաստութեան կուրսը ճիշտ հանդիսացավ: Սրդարացան հեղափոխութեան շարժիչ ուժերի բնորոշումը և գնահատութիւնը: «Բուրժուական (ըստ իր հասարակական—տնտեսական բովանդակութեան) ազատագրական շարժման (1905—6 թ.թ. հեղափոխութիւնը) շարժիչ

ուժեր կարող են լինել վոչ թե բուրժուական, այլ պրոլետարիատն ու գյուղացիութիւնը»—ընդգծում էր Լենինը: Ամբողջ հեղափոխութեան փորձը հաստատեց հեղափոխութեան հենց սկզբին՝ կուսակցութեան յերրորդ համագումարում բոլշևիկների ընդունած վորոշումների ճիշտ լինելը: Պրոլետարիատը հանդիսացավ մինչև վերջ միակ հեղափոխական դասակարգը: Լիբերալ—բուրժուական խավերը վախկոտութիւն և սարսափ յերևան բերին հեղափոխութեան հանդեպ:

Բոլշևիկները համար այստեղ անսպասելի վոչինչ չկար: Հեղափոխութիւնը չհաղթահարեց ինքնակալութեան, սակայն զոհերը չանցան: Խորհուրդները ստեղծող բանվոր դասակարգը քաղաքական պայքարի հսկայական դաստացավ և նախապատրաստվեց ցարիզմի ամբուլութիւնների հետագա գրոհի համար:

«Գյուղացիները ստացան ծանր, բայց ոգտակար դաս» (Լենին):

Հեղափոխութեան պարտութիւնը չսարսափեցրեց տոկուն մարտիկներին:

«Բանվորական մասսաները՝ քաղաքային ապստամբութեանը մասնակցութեան դեպքում, ընդգծում է Լենինը, թշնամու վրա մասսայականորեն հարձակվելու, զորքը գրավելու համար վճռական և հմուտ պայքար մղելու, ընդհանուր պայքարի մեջ գյուղի մասնակցութիւնն ապահովելու դեպքում հաղթութիւնը մերը կլինի հետագա համառուական զինված ապստամբութեան ժամանակ»:

Տասներկու տարուց հետո այդ մոմենտը, վորի համար գործուն կերպով պատրաստվում էր բոլշևիկների կուսակցութիւնը, վրա հասավ: Յեւ 1905 թվի դասերը, ինչպես պարզվեց, ապարդյուն չանցան, թեև հարկավոր էր ելի կացնել մենշևիկների և եսերների դավաճանական դերը:

«Առանց 1095 թվի զլխավոր փորձի—գրում էր Լենինը— 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխութեան հաղթանակն անհնարին կլիներ»...

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՅԱՆՋԵՑՔԷ

Դ. Ե Ր Դ Ե  
1905 ԹԻՎԸ.

50 Կ.

Ի. ՅԼԵՐՈՎՍԿԻՑ

ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱ-  
ԿԱՆ ՇԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ 1905 Թ.

70 Կ.

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ 1905 Թ.

70 Կ.

1905 Թ. ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ  
(ԺՈՂՈՎԱԾՈՒ)

- Բաժիններ՝
- I. Հունվարի 9-ը—Արյունոտ Կլբակին
  - II. Բանվորական շարժումը—գործադուլ-  
ներ
  - III. Գյուղացիական շարժումներ
  - IV. Բանակում և նավատորմում
  - V. Խորհուրդները 1905 թ.
  - VI. Պագրոմներ, շարժեր
  - VII. Դեկտեմբերյան ազատամտությունը
  - VIII. 1905 թ. հեղափոխության դասերը
  - IX. 1905 թիվը Արևելքում
  - X. 1905 թիվը Անդրկովկասում
- (հոդվածներ, ճառեր, կոչեր).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
I. Հեղափոխությունը յեվ դասակարգերը . . . . .	3
II. Խուս-յապոնական պատերազմը, վարպես «հեղափոխու- թյունն արագացնող» . . . . .	16
III. Հեղափոխության սկիզբը՝ հունվարի 9-ը . . . . .	23
IV. Հեղափոխությունը ֆայլում է . . . . .	36
V. Հոկտեմբերյան ալիքը . . . . .	41
VI. Ինֆանտարիները հարձակման է անցնում . . . . .	53
VII. Դեկտեմբերյան զինված ապստամբությունը . . . . .	62
VIII. Բանվորական հեղափոխություն յեվ «գյուղացիական պատերազմ», նրա կապակցումն ու տեսլքը . . . . .	68
IX. Կենտրոնը յեվ ծայրագավառները . . . . .	83
X. Հեղափոխությունը յեվ կուսակցություններ՝ բոլշևիկ- ներ, մենշևիկներ-սոցիալիստներ . . . . .	90
XI. 1905 թվի դասերը . . . . .	104



Ա. ՍՏՈԼԹԱՐՈՎ ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ ՄԵԽԱՆԻՍՏՆԵՐԸ
Ֆ. ԵՆԳԵԼՍ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՊՐԻՆՑԻՊՆԵՐԸ
ՊԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՆ
Ի. ՍՏԱԼԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ
Ի. ՍՏԱԼԻՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ
Ի. ՍՏԱԼԻՆ ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՏԱՐԻՆ
Ի. ՍՏԱԼԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ
Ի. ՍՏԱԼԻՆ (ՀԻՍՆԱՄԹԱԿԻ ԱՌԹԻՎ) ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 5 ՏԱՐՈՒՑ ՀԵՏՈ

ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ (Մեքոգալան բրոշուր լիվ պլակատ) 50 Կ.
ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (Մեքոգալան բրոշուր լիվ պլակատ) 50 Կ.
ՄՈԼՈՏՈՎ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ 10 Կ.
Կ. ԿԻՆԴԵՑԵՎ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐԸ 15 Կ.
Զ. ԶԻՆՈՂԵՑԵՎ ԻՆՁ ՊԵՏՔԵ ԻՄԱՆԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ 10 Կ.
ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ 10 Կ.
Ա. ԲԻՑԵՆԿՈ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԿՆՈՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ 10 Կ.
ԶԱՐՈՎ ԶՈԴՄԱՆ ՆՈՐ ԶԵՎԵՐ 10 Կ.
ԲՈՒԼԻԺՆԻԿ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ 10 Կ.

ԼԵՆԻՆ—

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

160 էջ, 40 կ.

ԼԵՆԻՆ—

ՊԱՏԵՐՄՋՄԻ ՄԱՍԻՆ

376 էջ, 95 կ.

ԼԵՆԻՆ—

ԻՆՉ ԱՆԵԼ

224 էջ, 65 կ.

ԼԵՆԻՆ—

ՄԻ ՔԱՅԼ ԱՌԱՋ, ՅԵՐԿՈՒ ՔԱՅԼ ՅԵՏ

272 էջ, 70 կ.

ԼԵՆԻՆԻ

ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

15 կ.

ԼԵՆԻՆԻ

ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԺՈՂ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹ. ՄԱՍԻՆ

20 կ.

Պահանջեցե՛ք մեր գրացուցակը, վարք ուղարկվում է ձրի:

« Ազգային գրադարան



NL0403821

50 400.

11385

266

из 1

971

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



---

Д. Эрде  
**1905 год**

---

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С С  
Москва, центр, Никольская, 10